ԳԻՐՔ LII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ 7

1909

Ղօշավանքի գմբէթի առաստաղ. Պատկեր։
Միաղնութեան խոհեր. բանաստ. Յարութիւն Պետրոսեան 3
Տ. Գրիգոր Դ. Տղայ. Մ. Ա. Օ. . . . 4
Աստուած. բանաստեղծ. Խենթ. . . . 23
Քօսա-դաղ լերան վկան Խանգաղէ . . . 26
Տէր-Գաբրիէլ Պատկանեանցը Երուանդ Շահազիզ. 38
Ժողովրդի մէջ. Ռոզեգէրի. թարգմ. Օր. Ն. Աղանեանց. 51
Մուրացանի յիշատակին. Մ. Ենգիբարեան . 67
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ
1. Մանկական գրականութիւն։—2. Մատենախօսութիւն. Գ. Ենգիբարեանի։—3. Կրօնների պատմութիւն. Եր. վարդ.։ Պարոյր . . 68
ԱՄՍՕՒԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Վեհ. Տ. Տ. Մատթէոս II կաթողիկոսի հաստատութիւնը։—Եւրոպան Թիւրքիայում։ Նուշիրվան։— Դարձեալ ճեմարան։—Լուրեր։—Հաշիւ հանգ. Սարգիս աե. Ջալալեանի կտակաւանդեալ գումարի։ . . . 74
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

Գ. Գալստեանի Հրատ.

Հ. ԲՕՆԼ

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԻՐՔ LII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ 7

1909



ԵԼԵՔՏՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ

ԼՈՒՍ. Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ

ՂՕՇԱՎԱՆՔԻ ԳՄԲԷԹԻ ԱՌԱՍՏԱՂ

ՄԻԱՅՆՈՒԹԵԱՆ ԽՈՀԵՐ

Երկինք, գետինք մթնով բռնած,
Քամին շաչում, շառաչում.
Ու ես մենակ, հոգիս յուզուած,
Սիրտս անյոյս հառաչում...

Ա՜խ, երկնքի բարդ-բարդ ամպեր,
Երնէկ լինիմ ես կայծակ,
Ուժգին թռիչքով չափեմ եթեր,
Դաշտ ու հովիտ ընդարձակ.

Երնէկ պայթեմ ինչպէս ամպրոպ,
Շանթեր տեղամ դէպի ցած.
Մարդիկ սարսած, ուրտատրոփ
Նայեն երկինք զայրացած։

Ու ես վերից տամ ամբոխին
Պատգամն անեղ եւ ըմբոստ.
«Զարիքն է ձեր բռնած ուղին.
«Ապաշաւա՛նք, կամ կորուստ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐ Դ. ՏՂԱՅ

55. Պահլաւունեաց տան մեծագոյն փառքն եկեղեցականութիւնն էր եղած, և զարմանք չէ, որ ազգատոհմին ընտրելագոյն անհատներն կրօնաւորական կամ եկեղեցական կենաց չը նուիրուէին։ Վկայասէրէն յետոյ տեսանք նորա երկու քեռորդիները, Բարսեղ կաթողիկոս և Գրիգոր եպիսկոպոս, ասոնց ալ յաջորդեցին երկու քեռթոռներ Պահլաւունի և Շնորհալի կաթողիկոսներ։ Վերջինները չէին դադրեցուցած եկեղեցական ժառանգութիւնը իրենց ազգատոհմին մէջ. և յառաջ քաշած էին իրենց եղբօր՝ Վասիլ զօրավարի որդին։ Դժուարին է ճշտել թէ ուստի է սորա Գրիգոր անունը, յաւազանէ թէ ի ձեռնադրութենէ. նոյնպէս դժուարին է որոշել Տղայ մականունին ծագումը, զի տղայ չէր երբ կաթողիկոսական աթոռը բարձրացաւ։ Յարմարագոյն էր Տղայ մականուանել Պահլաւունին կամ Քարավէժը, որոնք տղայական հասակի մէջ կաթողիկոսացան։ Սոյն Գրիգորին տղայ չլինելը այնչափ յայտնի է, որ ոմանք կարծեցին թէ ամուսնացեալ ևս էր, և թէ Ռուբինեան Մլեհի կինը՝ իւր դուստրն էր։ Բայց հաւանագոյն է որ Գրիգոր վանական եղած է, իսկ Մլեհի կինը կը լինի Գրիգորի քոյրը և Վասիլ զօրավարին աղջիկը։ Գրիգորի անունը եպիսկոպոսութեան ատեն կը յիշուի Թէորիանոսի վիճաբանութեան մէջ (Կալանոս. Պատմ. 261) իբրև Հոռոմոց հաւանողներուն ամէնէն եռանդունը։ Իսկ Շնորհալիի մահուան ատեն աթոռէն բացակայ կը գտնուի Կիլիկիոյ մէջ, անշուշտ խաղաղարարութեան և այցելութեան պաշտօնով ղրկուած, ինչպէս զացած էր Շնորհալին ալ Պահլաւունիին հրամանով։ Ըստ կերպարանին վեհ և փառաւոր կը նկարագրուի, նման հօրեղբօրն Պահլաւունի Գրիգորի,

Իսկ հոգևոր ուսմանց մէջ յառաջադէմ լինելը կը տեսնուի իւր թղթակցութիւններէն և գործերէն, ինչպէս պիտի պատմենք։ Իսկ վարչական հանճարով և գործունեայ եռանդով բնաւ իւր հօրեղբայրներէն ստորին չէր մնար. միայն միութեան գործին մէջ՝ առաջին զգուշաւորութիւնը վերջէն բուռն փափագի փոխարկելով, առիթ տուաւ Արևելեայց հետ վէճի բռնուելու։ Այդ մասին իրմէ բուռն գործիչ մը ունէր իւր մօտ, այն է Ներսէս Լամբրոնացին, և դուցէ շատ բանի մէջ այս վերջինին խորհուրդներն էին որ Գրիգոր Տղայն կը բորբոքէին։

56. Միութեան խնդիրը՝ թէ նիւթովը կարևոր, և թէ Տղային ընդարձակ մասնակցութեամբ նշանաւոր լինելուն, անտի կը սկսեմք մեր պատմութիւնը։ Գրիգորի ընտրութիւնը դժուարութեան չէր հանդիպած, թէ ազգատոհմովը և թէ ձիրքերովը արժանաւոր էր, և թէ Շնորհալիէն յատկապէս յանձնարարուած էր իբր իւր յաջորդը (Սմբատ 102)։ Ժողովուրդք և եկեղեցականք համահաճութեամբ խնդրեցին և եպիսկոպոսունք յօժարութեամբ օծեցին և նստուցին իւր հօրեղբայրներուն ե իւր նախնիքներուն աթոռը։ Որչափ ալ չուզենք Թէորիանոսի հաւատալ և Գրիգորը ջերմ հոռոմացեալ մը կարծել, բայց պէտք է միշտ ընդունել թէ միութենական ձգտումը, որ սկսած էր իւր հօրեղբայրներէն մէկին ժամանակ, և հօրեղբայրներէն միւսին ժամանակ աճած էր, ևս քանդևս զօրացաւ Գրիգորի ժամանակը։ Այսու հանդերձ նորընտիր կաթողիկոսը իւրովի քայլ մը չբրաւ։ Շնորհալին ետ դարձուցեր էր Թէորիանոսը, և խոստացեալ ժողովը չէր հրաւիրած, այլ միայն միտքերը իմանալու համար պատուիրակ մը ղրկած էր Արևելեայց, և մանաւանդ գայթակղած էր ինն գլխոց համար, զորս երբէք չէր կրնար ճանաչել իբր միութեան ծրագիր մը։ Գրիգոր Տղայն ալ հաւատարիմ այդ սկզբունքներուն, կը սպասէր մինչև որ նոր ձայն մը ելլէր Յունաց կողմանէ։ Մանուէլ կայսր, որ Շնորհալիին մահուանէ ետքը բոլոր յոյսը Տղային վրայ դրած էր, նորա ընտրութենէն զոհ մնաց, և աւելի քաջալերելու համար շնորհաւորական գիր մը գրեց, և դարձեալ նոյն Թէորիանոսը պատգամաւոր նշանակեց, որուն կրնամք ընկեր ենթադրել Ութմանն ալ, թէպէտ անունը յիշուած չէ։ Նամակին իմաստն էր, որ սկսեալն ի նախնոյն եւ յերանելի հօրէն, այսինքն է ի Շնորհալւոյն, կատարուի եղբօրորդւոյն ձեռքով։ Այդ գիրը մարթ է դնել Շնորհալւոյն մահուան յաջորդ տարին (1174)։

57. Թէորիանոս ճանպայ ելաւ, այլ Հռոմկլայ չկրցաւ հասնել. Յունաց և Սելճուկեանց պատերազմները խափանեցին Փոքր Ասիոյ ուղևորութիւնը. վախցաւ յառաջել, նամակը պարզ սուր-

հանդակով Հռոմկլայ զրկեց, և ինքն Կոստանդնուպոլիս դարձաւ։ Գրիգոր խորախորհուրդ մտածեց կացութեան վրայ։ Միութեան գործը փափագելի էր, սակայն դժուարութիւնները միևնոյն էին։ ինն գլուխներու ծրագիրը փոխուած չէր, իսկ Ստեփանոս վարդապետ, որ Շնորհալիէն պատգամաւոր զրկուած էր Արևելեայց, դարձած էր և ծանուցած, թէ Արևելեայք սկզբամբ միութենէ չեն խորշեր, այլ ինն գլուխները չեն ընդուներ։ Միևնոյն հիման վրայ պատասխանեց Գրիգոր Մանուէլ կայսեր, սորա նամակէն իրը տարի մը ետքը (1175)։ Միութիւնը, ըսաւ, մեք ալ կուզենք. սակայն ինն գլուխներու հիման վրայ միութիւն գործադրել հնար չէ. թեթեւացուցանել խնդրեմք ի նախակարգեալ գլխոց։ Միանգամայն գիտնալով որ Մանուէլ պատերազմի պատճառով Կոստանդնուպոլսէ ելած է, հրաւիրեց որ անձամբ գայ և ժողովին առընթեր լինի։ Պահանջեց որ մենակ հաւատոյ դաւանութեան կէտը լինի միութեան հիմը, և այն ալ յարևնման այն հաւատոյ սահմանին, զոր երանելի հայրապետն մեր սուրբն Ներսէս Շնորհալին, իւր միշտ կենդանի խօսքերով անգամ մը գծած էր։ Նամակը տանելու համար ալ, փոխանակ իրենցմէ պատգամաւոր մը ընտրելու, նախադասեց յոյն քահանայ մը Կոստանդին անուն, որ նոյն իսկ կաթողիկոսին ուսուցիչն էր եղած, և Հայոց եկեղեցւոյն վարդապետութեանց ծանօթ էր և նպաստաւոր։ Այդպիսի անձի մը խօսքը հարկաւ աւելի զօրաւոր պիտի լինէր Մանուէլի առջև, քան թէ որև է հայ վարդապետի մը խօսքը։ Այդ առթիւ կուզէ որ նոյն Կոստանդինը Հերուպոլսոյ Եփրատացւոց (Մէնպիճ) արքեպիսկոպոս ձեռնադրուի Անտիոքայ յոյն պատրիարքին ձեռամբ, որ իւր աթոռին Լատիններէն գրաւուելուն համար Կոստանդնուպոլիս կը մնայր։ Կոստանդինի ձեռնադրութեամբ, Գրիգոր թէ իւր ուսուցիչը պատուած պիտի ըլլար, և թէ նպաստաւոր յոյն արքեպիսկոպոս մը դրացի պիտի ունենար։

58. Կոստանդին քահանայ պատահեցաւ Մանուէլի պատերազմի դաշտին վրայ (1175)։ Մանուէլ ուրախացաւ Հայոց պատրաստականութեան վրայ, թէպէտ անոնց տրամադրութիւնը բոլորովին իւր ուզածին պէս չէր։ Այլ որովհետև ինքն պատերազմի մէջ էր, Կոստանդինը Կոստանդնուպոլիս զրկեց, սպասել մինչև ինքն դառնայ։ Միւս տարւոյն նոր կիրակէին (1176 ապրիլ 11) արևի ամբողջական խաւարում եղաւ, որ չարագուշակ նկատուեցաւ, և հինգ ամիս ետքը (1176 սեպտեմբեր) Մանուէլ չարաչար յաղթուեցաւ Իկոնիոյ Քըլըճ Ասլան սուլտանէն Մելիտինէի պատերազմին մէջ. և պարտաւորուեցաւ հաշտութիւն կնքել ծանր պայմաններով, և միայն Խաչափայտը և Աստուածածնայ պատկերը

կտ առնելով Կոստանդնուպոլիս դարձաւ, ուր կը սպասէր տակաւին Կոստանդին պատգամաւորը։ Այս միջոցին, որ տարիէ մը աւելի տևեց, Գրիգոր կաթողիկոս նոր գործ մը չկատարեց միութեան նկատմամբ, որ ըսել է թէ յուսադիր ակնկալութեամբ կը սպասէր կայսեր պատասխանին։ Ճիշտ այս ատենին նոր անձ մը կ'երևի գործին վրայ, հասակաւ տակաւին երիտասարդ, այլ կարողութեամբ կատարելոց հաւասար։ Սա ինքն է երիտասարդ եպիսկոպոսն Ներսէս, իւր աւագանի անունով Սմբատ, կաթողիկոսին Շահան հօրեղբօր թոռը, Լամբրոնի Օշին իշխանին և Շահանի Շահանդուխտ դստեր որդին։ Մօր կողմանէ միայն Պահլաւունեաց սերունդ էր, այլ եկեղեցական կոչմամբ բուն Պահլաւունեաց նշանաւորներուն հետևող։ Սմբատ, 1153-ին ծնած, տասնուվեց տարեկան եղած ատեն (1169), իւր հաւեղբօր Շնորհալիին ձեռքով կուսակրօն քահանայ էր ձեռնադրուած, և նորա Ներսէս անունը առած, Պահլաւունեաց քահանայապետական տան սովորութեան համեմատ, որ տղայութենէ եկեղեցական աստիճաններու կը բարձրանային, ինչպէս թագաւորմեր պատանեկութենէ զինուորական աստիճաններ կը ստանան։ Այդ սովորութեան միակ արդարացումը՝ ձեռնադրեալներուն իրենց սուրբ կոչումը անպատիւ չբրած ըլլալն է։ Քահանայութեան օրէն Ներսէս աբեղայ սկսաւ իւր գործունէութիւնը Շնորհալւոյն ձեռքին ներքև, և երբ Գրիգոր Տղայ կաթողիկոս եղաւ (1173), աւելի ևս ընդարձակուեցաւ իւր գործը, և քիչ ետքը հաղիւ 23 տարեկան(1175) Տարսոնի և Լամբրոնի արքեպիսկոպոս օծուեցաւ, ի միասին ունենալով Սկիւռայ վանքին առաջնորդութիւնը, զոր իւր հայրն էր շինած։ Գրիգոր Տղայի առաջին քայլին, այսինքն է Մանուէլի նամակին պատասխանին ատեն, արդէն Լամբրոնացին եպիսկոպոս էր, և կաթողիկոսին խորհրդակիցն ու գործակիցը լինել սկսած էր։

59. Մանուէլ կայսեր Պոլիս դառնալուն պէս սկսաւ միութեան խնդիրով զբաղիլ, իրեն խորհրդակից ունենալով Կոստանդնուպոլսոյ Միքայէլ պատրիարքը, և լսելով Կոստանդին յոյն քահանային վստահեցուցիչ տեղեկութիւնները։ Մանուէլի տրամադրութիւնք հակեցան փոքրիշատէ Հայոց կաթողիկոսին ուղղութեան, և թելադրութեամբ Կոստանդին պատգամաւորին ինն գլուխներէն հօթը, որք բոլորովին ծիսական կամ վարչական էին, լռութեան մէջ թողուեցան, և մնացին միայն երկուք, որք կը պարունակէին քաղկեդոնական խնդիրը և բնութեանց դաւանութիւնը։ Մանուէլ պատասխանեց կաթողիկոսին իբր տարիուկէս յետոյ (1177 յունուար)։ Նամակը կը խօսէր միայն բնութեանց խնդրոյն վրայ, կընդունէր որ Հայոց միտքը ուղղափառ է (Ընդհ. 174).

այլ կը խնդրէր որ ոչ միայն մտօք, այլ և բանիւք համաձայն լինին երկու եկեղեցիք. հետևաբար կառաջարկէր որ կաթողիկոսն և ամենայն եպիսկոպոսունք Հայոց, ժողովով հաւատոյ դաւանութիւնը ստորագրեն, և կաթողիկոսն հանդերձ մեծապատիւ քահանայապետօք Կոստանդնուպոլիս երթայ փութապէս եւ կանխաւ, մի գուցէ ինքն մեռնի և միութիւնը չկատարուի (Ընդհ. 175)։ Միքայէլ պատրիարք Կոստանդնուպոլսոյ և Կիւրեղ պատրիարք Անտիոքայ և տասնևութը մետրոպոլիտք իրենց ստորագրութեամբ երկրորդ թուղթ մըն ալ ուղղեցին կաթողիկոսին, յորում կըսեն թէ ծանեաք զձեր ուղղափառութիւնդ (Ընդհ. 176), այլ միանգամայն կը պնդեն թէ երկու բնութիւն բացատրութիւնը պէտք է ընդունուի Հայոց կողմանէ։ Սոքա ևս կը լռեն ինն գլուխներէն ծիսական և վարչական նկատուածներուն վրայ։ Այդ գիրերը յանձնուեցան Կոստանդին յոյն արքեպիսկոպոսին Հերապոլսոյ, որ էր նոյն ինքն պատգամաւոր Կոստանդին քահանայն, և Յունաց կողմանէ նոր պատգամաւոր մը չնշանակուեցաւ, և չենք գիտեր թէ ինչ եղած էին Թէորիանոս և Ութման սովորական պատգամաւորները։ Նամակները հասան Հայոց ձեռք նոյն տարւոյն մէջ (1177), և շատ յաջող տպաւորութիւն գործեցին։

60. Յունաց զիջողութիւնը և ծիսական կէտերը մէկդի թողուլը Գրիգոր կաթողիկոսին և Լամբրոնացւոյն կողմանէ այնչափ գնահատուեցան, որ իրենք ալ կարծես պարտաւորութիւն զգացին, մնացեալ առաջարկներուն մէջ Յոյները գոհացնել և ցանկացեալ միութիւնը գլուխ հանել։ Առ այս պէտք էր ժողով գումարել. և իրօք ալ նոյն տարին (1177) կաթողիկոսին կողմանէ հրաւիրագիր ուղղուեցաւ ընդհանուր աղդին, որպէս զի ամեն եպիսկոպոսներ և վարդապետներ հաւաքուին ի Հռոմկլայ, և երկու եկեղեցիներու միութիւնը կնքեն։ Ձեռուընիս չկայ կաթողիկոսին հրաւիրագիրը որ կարող լինինք զայն ուսումնասիրել. բայց կարևոր թղթակցութիւն մը տեղի ունեցած է այդ միջոցին Արևելեայց և Կիլիկեցւոց միջև, որուն հաւաքածոյն շատ լոյս պիտի սփռէր դարուս պատմութեան վրայ, եթէ պահուած և հրատարակուած լինէր։ Անցողաբար յիշեմ, թէ Էջմիածնի մատենադարանին մէջ այսպիսի հաւաքածոյի մը հանդիպած եմ, այլ դժբաղդաբար զննելու և ուսումնասիրելու պատեհը ունեցած չեմ։ Ընդհանուր կերպով գիտեմք, թէ սոյն միջոցին ընտանի վէճ մը սկըսած է յուղուիլ Արևելեայց և Կիլիկեցւոց մէջ, և վէճին նիւթը եղած է միաբանութեան խնդիրը, որուն ինքզինքին յոյժ պատրաստական կը ցուցնէին Կիլիկեցիք, իրենց պարագլուխ ունենալով Ներսէս Լամբրոնացի Տարսոնի արքեպիսկոպոսը, մինչ խստիւ

կը հակառակէին Արևելեայք, որոց գլուխն էր Գրիգոր Տուտէորդի Սանահնի առաջնորդը։

61. Վէճին դուռ բացաւ Գրիգոր Տղայի հրաւիրագիրը։ Կերևի թէ կարի որոշիչ ձևով գրուած էր այն, որ եթէ եպիսկոպոսաց և վարդապետաց մի մասին վրայ կրնար լաւ տպաւորութիւն թողուլ, միւս մասին կարծել տուաւ թէ կաթողիկոսը պատրաստուած է Յոյներուն յարիլ և Յունաց պայմաններուն համաձայնիլ։ Հակառակող եղան գլխաւորապէս Սանահնի և Հաղբատի վանքերուն վարդապետները։ Այս երկու վանքերը իրարու հանդէպ շինուած էին Ուտէացւոց աշխարհին մէջ Սաւորդաց կամ Սեաւորդեաց Զորոյգետին վրայ. և այդ պատճառով հակառակորդներ երբեմն Սանահնեցիք և Հաղբատացիք, և երբեմն ալ պարզապէս Զորոյգետացիք կը կոչուին։ Զորոյգետացւոց խումբին հետ էին նաև Գուգարաց և Սիւնեաց և Այրարատայ գլխաւոր վանքերուն վարդապետները, որք միահամուռ Հիւսիսային կողմանց վարդապետք (Տղայ 53), կամ Արևելեայ վարդապետք ալ կոչուած են։ Այդ խումբին գլխաւոր գրողն էր Գրիգոր Տուտէորդի, այլ իբր պետ կը նկատուէր Բարսեղ Անեցի, եպիսկոպոս Անւոյ, իւր բարձրագոյն աստիճանին համար։ Ասոնցմէ ետքը կուգային Դաւիթ Քոբարեցի, Իգնատիոս Հաղբատացի, Վարդան Հաղբատացի, Մխիթար Խոռակերտցի և ուրիշ վարդապետներ։ Այդ խումբին կողմէն զգուշութեան նամակ մը ուղղուեցաւ կաթողիկոսին հեռացնելով զայն Յունաց յարաբերութիւններէն և կասկածաւոր ցուցնելով Յունաց ընթացքը, և յանդիմանելով քաղկեդոնական ուղղութեան սխալները, յորոց արդէն պաշտօնապէս հեռացած էր Հայոց եկեղեցին, և բաւական դարերէ ի վեր զատուած լինելով յունականէն, հարկ չէր այլ ևս անոնց ժողովներն և Քաղկեդոնը և Լևոնի տոմարը և Յունաց պայմանները յանձն առնուլ։ Կրկին էին այդ նամակները, մին ընդհանրութեան կողմանէ գրուած և աւելի մեղմ ոճով. իսկ երկրորդը յատկապէս գրուած Տուտէորդւոյ կողմանէ՝ սաստիկ ու երգիծական ոճով (Տղայ. 52)։ Այդ երկու նամակներուն ալ պատճէնները չունինք, և Տղային պատասխաններէն քաղելով կիմանանք, թէ Յունաց դաւանութիւնը իբր նեստորականութիւն կը դատապարտուէր, Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տոմարը իբր սխալ կը ցուցուէին. ներկայ ժամանակը իբր միութեան անյարմար, և միութեան յոյսն իսկ իբր կեղակարծ կը յայտնուէր։ Նոյն ինքն Հայոց կաթողիկոսական աթոռին կործանումը կը գուշակուէր այդ գործով, և Գրիգոր կաթողիկոս իբրև անուղիղ սկզբունքներէ յորդորեալ կամբասանուէր իւր միութենական ձգտումներուն մէջ։ Կերևի թէ այդ նամակներուն

մէջ տակաւին Լամբրոնացիին դէմ յատուկ զայրոյթ մը չկայ, ինչ որ յետոյ ճշմարտուեցաւ, զի 25 տարեկան եպիսկոպոսը տակաւին կարևորութիւն չէր ստացած Արևելեայց առջև։

62. Տղայն կարի յուզուեցաւ այդ նամակներէն, ինչպէս կը տեսնուի իւր պատասխաններէն, զորս ունինք. և որք կծու և երգիծական և նախատական ձևերով լեցուն են։ Եթէ եպերելի են Տուտէորդին և իւրքն, որք խիստ կերպով կը գրեն կաթողիկոսին, ոչ նուազ մեղադրելի է և կաթողիկոսն, որ իւր վեհափառ բարձրութեան մէջ վրիժառու կերպով և ծաղրածու ոճով գրելու կը զիջանի։ Այլ ըստ մեզ, այս գրութեանց մէջ պէտք է տեսնել աւելի՝ հրաբորբոք ժանուկ եպիսկոպոսին՝ Լամբրոնացւոյն ոգին ու գրիչը, որ կաթողիկոսին ազգականն ու խորհրդականն էր, գուցէ և գրութեանց քարտուղարը։ Գրիգորի նամակներն ալ կրկին են, մինն ընդհանուր առ Հիւսիսային վարդապետս, և միւսն մասնաւոր առ Տուտէորդի վարդապետն։ Երկուքին պարունակութիւնն ալ իրարմէ քիչ կը տարբերի. ընդհանուր նամակին սկզբնաւորութիւնը քիչ մը աւելի հանդարտ է, բայց յետոյ այն ալ կը բորբոքի և միւս նամակին կը հաւասարի։

63. Ի բաց թողլով այն կշտամբողական և երգիծական մասերը, որք փաստաբանութեան ոյժ չեն աւելցներ, քաղեմք միայն գլխաւոր իմաստները։ Նախ կը տեսնեմք որ Տղայն՝ Արևելեայց նամակները հաղորդած է իւր մօտ եկող եպիսկոպոսներուն, և անոնց խորհրդով կը պատասխանէ (Տղայ 53), թէ միութեան գործը ինքն սկսած չէ, այլ իւր հօրեղբայրներէն պատրաստ գտած է, և առ այս վկայ կը կոչէ Վարդան Հաղբատացին (Տղայ 57)։ Կը յիշէ թէ միութեան սկզբունքը Արևելեայք ալ ընդունած էին, և Ստեփանոս Նուիրակին ձեռօք ծանուցած (Տղայ 77)։ Ասոր վրայ Յոյներ իրենց ինն գլուխները առաջարկեցին, յորոց ութը հատը կը յիշէ հետևեալ կերպով և կարգով. 1. Երկու բնութեան և կամաց և ներգործութեան բացատրութիւն. 2. Քաղկեդոնի ժողովի խնդիր. 3. Խմորուն հաց և ջրախառն բաժակ. 4. Միւռոնի նիւթ. 5. Սուրբ Աստուածի խաչեցարը. 6. Առաջաւորաց պահքը, 7. Կաթողիկոսի հաստատութիւնը կայսրէն առնուլ. 8. Ծնունդը ի միասին տօնել (Տղայ 59)։ Առաջաւորաց պահքին խնդիրը նոր է այստեղ, իսկ ընդհանրապէս չեն յիշուած, Դիոսկորոսի և այլոց նզովքը, և քահանայից և ժողովրդեան եկեղեցւոյ մէջ մնալը պաշտամանց ժամանակ։ Թերևս ցուցակը յետոյ փոխուած է, կամ թէ թերևս շտապով այլընդայլոյ յիշուեցան։ Տղայն կըսէ, թէ ինքն այդ ամէն պայմանները մերժեց, և վերջապէս յաջողեցաւ խոստովանել տալ Յունաց, թէ Հայոց հաւատքն ու դաւանութիւնը ուղ-

զափառ է, և բոլոր ծիսական պաշտամունքը ուղիղ են, և այս կերպով Յոյները բոլոր իրենց առաջարկութիւնները եւ առին։ «Զամենայն խնդիրս լուծին և զհայցուածս իւրեանց» (Տղայ 58)։ Կը մնայ միայն երկու բնութիւն ըսելու խնդիրը, զոր Արևելեայք բացարձակապէս իբրև նեստորական կը հռչակեն (Տղայ 58), Այստեղ կաթողիկոսը կը սկսի պաշտպանել թէ այս բացատրութիւնը կըրնայ գործածուիլ ուղիղ միտքով, կը ծաղրէ «երկաբնակ» անունը, իբր «բնակիլ» արմատէն ծագած ենթադրելով (Տղայ 22), և կը յանդիմանէ որ իզուր Դիոսկորոսի Աղեքսանդրացւոյն և Տիմոթէոսի և Պետրոսի Անտիոքացւոց պաշտպանութիւն կ'ընեն. և Եւտիքէսի և Նեստորի վարդապետութեանց վրայ կը վիճեն։ Ասոնք Հայաստանցի չէին, կ'ըսէ, որ ձեզմէ վկայութիւն ուզենք, յոյն էին և Յունաց ըսածին պէտք է հաւատանք։ Հին վարդապետաց, Աթանասի և Կիւրղի, Բարսղի և Աստուածաբանի և Ոսկեբերանի և այլոց վկայութիւնները կը յարգէ, զորս Արևելեայք ալ կը յարգեն։ Այսու հանդերձ կուզէ որ Լուսաւորչայ, Ներսէսի և Սահակի հաւատքն ու քարոզութիւնն ընդունուին (Տղայ 59), և օտարաց վրայ վէճ չլինի մեր մէջ. «Զ-Քաղկեդոն ոչ գիտեմ, և ոչ զ-Լևոն ծանուցեմ, զօրէն նոցա ոչ գիտեմ, և դատող մեղաց նոցա ոչ լինիմ» (Տղայ 50)։ Եկեղեցեաց միութեան գաղափարը կը բարձրացնէ, և զանազան ազգաց զատզատ եկեղեցի կարծուիլը կը մերժէ, զի Քրիստոս մի է, իւր հաւատքն ալ մի, իւր եկեղեցին ալ մի, Հայն ու Յոյնը, Ֆրանկն ու Ասորին՝ զատզատ եկեղեցիներ չեն կըսէ։ Այլ միանգամայն Յունաց եկեղեցւոյն վիճակը իբր բարեկարգ կը նկարագրէ, իսկ Հայոց եկեղեցին անպտղութեան դատապարտուած կը կարծէ (Տղայ 87)։

64. Արևելեայց հակառակութիւնը ուշացուց ժողովին հաւաքումը. նամակներն ու պատասխանները միևնոյն տարւոյ մէջ պէտք է դնել, որ է Մանուէլի նամակին և ժողովի հրաւիրագիրին միւս տարին (1178)։ Այդ միջոցին եղած դէպքերը բոլորովին կը լուծէ միաբանական թղթակցութեանց հաւաքածոյին հեղինակը (ընդհ. 180), զոր Լամբրոնացին կը կարծեմք մեք ալ շատերուն հետ։ Այդ լուութեան ալ պատճառ կը կարծեմք միշտ, դժուարութեանց բարձուելով ժողովին գումարման յաջողելը, և միաբանութեան գործին որոշուելը նոյն ժողովին մէջ, որով վիրաւորիչ և աւելորդ կը լինէր այլևս նախընթաց վէճերը յիշել, և Արևելեայց վրայ մեղադրանքներ բարդել։ Կաթողիկոսական նամակները յաւ ազդեցութիւն գործեցին, թէպէտ Արևելեայց նախանձայոյզ մասը շուտով չզիջաւ, և Զորոյգետացի վարդապետներ Տուտէորդիի գլխաւորութեամբ շարունակեցին վտանգ և ջնաս տեսնել Յոյնե-

ղուն մօտենալուն մէջ, այլ թեմական եպիսկոպոսներէն ոմանք խաղաղութեան գաղափարը ընդգրկեցին, և խնդացին մանաւանդ լսելով որ Յոյները յետս կեցած են իրենց պահանջումներէն և խնդիրը մնացած է դաւանական բացատրութեան մը վրայ։ Այդ պատճառով յօժարեցան Ժողովի գալ Ստեփանոս կաթողիկոս Աղուանից, Բարսեղ արքեպիսկոպոս Անւոյ, Սահակ արքեպիսկոպոս Երուսաղէմի, Բարսեղ արքեպիսկոպոս Տփղիսու, Ստեփանոս արքեպիսկոպոս Սիւնեաց, և այլ ևս տասն եպիսկոպոսներ Արևելեան նահանգներէն։

65. Ժողովը գումարուեցաւ միւս տարին ի Հռոմկլայ, և բացուեցաւ նոյն իսկ Զատկին օրը (1179 ապրիլ 1)։ Ներկայ էին Գրիգոր կաթողիկոս, Գրիգոր արքեպիսկոպոս Անտիոքայ, Ներսէս արքեպիսկոպոս Տարսոնի, Ստեփանոս արքեպիսկոպոս Եդեսիոյ, Յովհաննէս արքեպիսկոպոս Կեսարիոյ, և այլևս 13 եպիսկոպոսներ Կիլիկիայէ, իսկ Արևելեայց կողմանէ վերոյիշեալ 15 եպիսկոպոսներ, ընդամէնն 33 ժողովականք։ Սովորաբար կ'ենթադրուի թէ այդ ժողովին մէջն է, որ Լամբրոնացին, տակաւին 26 տարեկան, այլ իբր Տարսոնի արքեպիսկոպոս ժողովոյ Վ.եցերորդ աթոռը գրաւած, արտասանած լինի այն ճարտարարուեստ ատենաբանութիւնը, որ ծանօթ է ազգին մէջ։ Սակայն ատենաբանութեան մակագիրը յայտնապէս Տարսոնի ժողովը կը յիշէ, և ոչ թէ Հռոմկլայի ժողովը, և Տարսոն ալ այն ատեն դեռ Յունաց ձեռքն էր տակաւին։ Դարձեալ նոյն մակագիրին մէջ կը յիշուի Քրիստոսապսակ արքայն Հայոց Լևոն (Տղայ 93), որ այս թուականին (1179) իշխան իսկ չէր, այլ միայն օգնական իւր եղբօր Ռուբէնի. և 20 տարի ետքը ստացաւ արքայական անունն ու պսակը։ Ճառին պարունակութեան մէջ ալ ծիսական խնդրոց նկատմամբ յայտնի խօսքեր կան, և Հայոց ծէսերուն պաշտպանութենէն ետքը՝ վասն սիրոյ զիջանելու և Յունաց յարմարելու առաջարկութիւն կը լինի բացորոշակի։ Արդ այս պարագայն չյարմարիր ոչ Յունաց առաջարկներուն, ոչ Արևելեայց թղթակցութեան, և ոչ ժողովական թղթոյն որ յետոյ գրուեցաւ։ Տեսութիւնքս բաւական են ցուցնել թէ այն ատենաբանութիւնը Հռոմկլայու ժողովին համար պատրաստուած չէ. այլ թէ ուր և երբ զրուցուած է պատմութեան կարգին կը թողունք։

66. Ժողովական գործողութեանց ոչ տևողութիւնը գիտենք, և ոչ մանրամասնութիւնները։ Զատկական տօնախմբութեանց աւարտելէն յետոյ սկսան զննութիւնք և վիճաբանութիւնք, որոնց կը մասնակցէին նաև ասորի եպիսկոպոսներ (Ընդհ. 180), և ի հարկէ գործակից էր նաև Կոստանդին յոյն եպիսկոպոսն Հերա-

պոլսոյ, նախ Հայոց և այժմ Յունաց պատգամաւորը։ Արևելեայց ներկայութիւնը, որոց գլուխը կը դտնուէր Բարսեղ Անեցին, պէտք էր աշխատալի ընէր բանակցութիւնները, և եթէ վերջի վերջոյ համաձայնեցան, և միևնոյն ժողովական թղթոյն վրայ ձեռնադրեցին 18 արևմտեայ և 15 արևելեայ նշանաւոր եպիսկոպոսներ, իհարկէ չկրցան նոյն ժամայն այդ համաձայնութիւնը կազմել, և ամիսներ անցան մինչև որ գործը այդ կէտին կրցաւ հասնել։ Ըստ այսմ կը կարծեմք թէ մինչև նոյն տարւոյ աշունը (1179) երկարաձգուած է Հռոմկլայի ժողովը, որոյ արդիւնքն եղան երկու ժողովական թուղթեր, մին առ Մանուէլ կայսր, և միւսն առ Թէոդորոս պատրիարք Կոստանդնուպոլսոյ, որովհետև Միքայէլ վախճանած էր նոյն իսկ իւր նամակին տարին (1177), և միւս տարին (1178) վախճանած էր նորա անմիջական յաջորդն Բարիտոն, և վերջնոյս յաջորդած էր յիշեալ Թէոդորոս, կամ ըստ այլոց Թէոդոս պատրիարք։ Երկու նամակներն ալ թուական չեն կրեր, որ կարող լինինք ժողովին տեղութիւնը ճշտել։ Ցանկալի էր միանգամայն գիտնալ թէ ինչպէս կրցան վերջապէս արևմտեայ և արևելեայ Հայեր իրարու համաձայնիլ. և թէ որ գերագոյն պատճառ կրցաւ ազդել երկու կողմերուն վրայ, որ գոնէ Յունաց մօտենալու և եկեղեցեաց միութիւնը կազմելու դաղափարը յաղթանակէ։ Նամակները միջասահման են երկու ծայրայեղ կարծիքներու մէջ. Արևելեայք կը զիջանին և Յունաց կը մօտենան, Արևմտեայք կը զիջանին և Յունաց պահանջած բացատրութենէն կը հրաժարին։

67. Հաւատոյ թուղթն առ Մանուէլ կայսր գրուած է Գրիգոր կաթողիկոսի և իրեն հետ եղող ժողովին կողմանէ (Ընդհ. 181)։ Սկիզբը հաստատուած են Շնորհալիի կանխաւ գրած հաւատոյ գիրերը, և միայն իբր երկրորդական յայտարարութիւն կը գրուի ներկայ թուղթը (Ընդհ. 182)։ Ետևէն կը յիշուին յունական ժողովներ՝ զորս Հայք կ'ընդունին, և են. 1. Նիկիոյ, 2. Կոստանդնուպոլսոյ, 3. Եփեսոսի, 4. Անկիւրիոյ, 5. Կեսարիոյ, 6. Նէոկեսարիոյ, 7. Գանգրայ, 8. Լաւոդիկեայ, և 9. Սարդիկեայ. և անուղղակի կերպով մէկդի կը թողուի Քաղկեդոնի ժողովը։ Յետոյ կը նշանակուին հերիսիովտապետները. 1. Արիոս, 2. Մակեդոն, 3. Պօղոս Սամոստացի, 4. Նեստոր, 5. Եւտիքէս, որ զմիութիւն աստուածութեանն և մարմնոյն շփոթմամբ դաւանէր, և ոչ յստակութեամբ ի հայեցողութիւն ընութեանցն (Ընդհ. 184)։ Այս կտորներուն ետևէն կուգայ հաւատոյ դաւանութիւն մը Ս. Գրոց և Ս. Հարց վկայութիւններով, որ կը ցուցնեն ի Քրիստոս զմիութիւն աստուածութեան և մարդկութեան, անշփոթ և կատարեալ, և ըմբերանեն զշփոթողս

ըստ միաորութեան և զբաժանողս ըստ յատկութեանն (Ընդհ. 189)։ Այդ բացատրութիւններէն կ'եզրակացուի թէ ոչ ի վերայ միոյ ընութեան ասացան բանքս սրբոց հարցն, այլ ի վերայ երկուց միացելոց (Ընդհ. 189), այլ, անմիջապէս կ'աւելցուի. Ոչ թէ այլ ներգործութիւն էր աստուածութեանն որիշ ի մարմնոյն, և այլ մարմնոյն ուրիշ յաստուածութենէն։ Այդ է հաւատոյ թղթոյն յստակագոյն բացատրութիւնը, զոր կը դաւանին պարզապէս ձայնակցելով Ներոց Հարց, որք աւանդեցին սրբոյ եկեղեցւոյ զուղղափառ հաւատոյ դաւանութիւնն (Ընդհ. 190), և կը կնքեն այս խօսքերով. «Ի վերայ այսր վերապատուեմք զձեր աստուածիմաստ ուղղափառ խոստովանութիւնն, զոր ընկալաք ի համաղումար մեր ժողովս ընթերցեալ՝ սրբոց հարցն ձայնակից զտաք» (Ընդհ. 191)։ Կայսեր գրուած թղթոյն համեմատ է պատրիարքաց և եպիսկոպոսաց ուղղուած թուղթն ալ. յորում ամէնէն զիջողական բացատրութիւնն է. Արդ խոստովանիմք համաձայն ձեզ ի Քրիստոսի անձառ միութեան երկու բնութեան տեսութիւն (Ընդհ. 196)։ Մնացեալք սիրոյ և միութեան զովեստներ են, և ի Քրիստոս միութեան բարձրացումն։ Այս է Հռոմկլայի ժողովական գրոյն իմաստը։

68. Պատմական գործողութեանց շարունակութիւնը տալէ առաջ, պէտք է նկատի առնուլ այն ժողովական թղթոյն արժէքը։ Հռովմէականք կարի վստահութեամբ կը հիմնուին սոյն թղթոյն վրայ, և անով կ'ուզեն հաստատել թէ հայ եկեղեցին հռովմէադաւան կամ կաթոլիկ եղած է, և թէ ինչ որ այդ ժողովէն յառաջ կամ յետոյ ընդունուած է, սխալ է, և այդ ժողովն է միայն ճշմարիտ և օրինաւոր և ուղղափառ և սուրբ։ Սակայն նոքա՝ որ այսպէս թեթև կերպով բազմաթիւ ժողովներու ոյժը կը կարծեն ոչնչացնել. պիտի չկարենան ի հարկէ այդ մի ժողովը պաշտպանել, որոյ ժողովականաց թիւը 33 է աւելի չէ, մինչ հարիւրով և հազարով կը համարուին ուրիշ ժողովներու անդամները։ Երկրորդ պէտք է նկատի առնուլ, թէ Հռոմկլայու ժողովը ոչ թէ Հռոմայ, այլ Հռոմոց աթոռին հետ միութեան կապը հաստատել փորձեց, այն միջոցին՝ յորում Լատիններ և Յոյներ միութիւն չունէին. և զիրար իբրև հերձուածող և հերետիկոս կը մերժէին, և Յունաց եկեղեցին չէր ընդունէր պապութեան, եւ յորդւոյ բղխման, առանձնական դատաստանին, քաւարանին և այլ դաւանութիւնները, զորս Հռոմայ եկեղեցին անհրաժեշտաբար կը պահանջէր։ Ճիշտ այդ միջոցին (1168) Մանուէլի ժամանակ, անդամ մըն ալ Յունաց և Լատինաց միութեան նոր փորձ մը եղած էր, և Յոյներ բացէբաց մերժած էին Լատիններուն դաւանութիւնը, և Հռոմ դարձեալ նորոգած էր Յունաց դէմ նզովքները։ Ի՞նչ օգուտ ուրեմն Լատինաց, եթէ Յոյնք և Հայք միութիւն հաստատէին։ Եւ ոչ իսկ հնար է

կարծել թէ Հայք Յունաց միջնորդութեամբ Լատինաց կը դիմէին զի ժողովական թուղթը՝ Կոնստանդնուպոլսոյ աթոռը կ'ընդունէ յունական կերպով և կը յայտարարէ, թէ նա զնախաթոռութիւն տիեզերաց յաջորդեաց ատուածային ընտրութեամբ (Ընդհ. 194)։ Հռովմէական պապութիւնը իւր կարծեցեալ իշխանութիւնը աւելի բացայայտ կերպով չբացատրեր։ Իսկ մերայնոց բացատրութիւնը լոկ քաղաքավարական է այստեղ, ինչպէս ուրիշ նմանօրինակ պարագայից մէջ ալ։

69. Վերջապէս ժողովական գիրերը նկատի առնելով կը դիտենք, թէ անոնց մէջ կը պակսին այն ամէն պայմաններ, որք Յունաց հետ կատարեալ միութիւն և դաւանական նոյնութիւն ցուցնելու համար հարկաւոր էին։ Կը պակսի Քաղկեդոնի ժողովին ընդունելութիւնը, կը պակսի Լեոնի տոմարին ուղղադաւանութեան յայտարարութիւնը, կը պակսի Դէսոկորոսի նզովքը, կը պակսի մի բնութիւն բացատրութեան մերժումը, կը պակսի երկու բնութիւն ընդունելու յստակ և անպատրուակ բացատրութիւնը։ Ասոնց հետ կը պակսին այն ամէն ծիսական և կանոնական կէտերը, զորս Յոյնք կանուխ պահանջած էին, և զորս յետոյ ալ կրկին և կրկին պահանջեցին։ Եթէ Յունաց դաւանութիւնը իբր ուղղափառ կ'ընդունուի, այդ կը նշանակէ միայն թէ հնար է առանց նեստորականութիւն ընդունելու երկու բնութիւն բառը գործածել, ինչպէս իրենց համար ալ կը պնդէին թէ առանց եւտիքականն լինելու մի բնութիւն բացատրութիւնը կը գործածեն, և զայս կանխաւ խորհեր և յայտներ էր Շնորհալին ալ։ Եթէ Եւտիքէսը կը նզովեն, այդ նոր չէ, զի Հայք շատ կանուխէն Եւտիքէսը նզոված են, վասն շփոթեալ խառնման բնութեանց, որուն դէմ իրենք անշփոթ միութիւն մը ընդունած են, և Դէսոկորոս Աղեքսանդրացին այդ դրութեան պաշտպան ճանչցած են, իբր յաջորդ Աթանասի և Կիւրղի Աղեքսանդրացւոց։ Երկու թուղթերուն մէջ ալ բոլոր յառաջ բերուած փաստեր և վկայութիւններ կը դիտեն միայն ի Քրիստոս միութիւնը հաստատելու, որ իրենց ըսածն է, և ոչ թէ ի Քրիստոս երկուքութիւն մը ցուցնել, որ Յունաց ըսածն է։ Եւ ուր երկուքութեան ակնարկ կայ, կը դիտուի միայն ներքին երևութականաց կարծիքը, որ մարմինն առերևոյթ ըսելով, միայն աստուածային բնութիւն կ'ընդունէին ի Քրիստոս։ Վերջապէս ի Քրիստոսի անձառ միութեան երկու բնութեանց տեսութիւն բացատրութիւնը, որ երկու նամակներուն մէջ ամէնէն դիջողական խօսքն է, պարզապէս երկու բնութիւն ըսել չէ, ըստ յունական բանաձևին. այլ մի յերկուց կամ միաւորեալ մի ըստ բանաձևին Հայոց։

70. Եւ իրօք ալ ուրիշ կերպով հնար չէր որ վերջնար Հռոմ-

կլայու ժողովը, որ կարծես թէ երկուց կողմանց պայմանաւորեալ բանակցութիւնն էր, քան թէ բուն եկեղեցական ժողով։ Արևելեայք 5 մեծ և 10 ուրիշ եպիսկոպոսներ եկած էին, և Կիլիկեցիներէն ալ գրեթէ համաչափ թուով ընդ ամէնն 18 անձինք կը գտնուէին ժողովին մասնակցող, մինչ դժուար չէր Կիլիկեցւոց 40 կամ 50 եպիսկոպոսներով ներկայանալ, եթէ ուզէին բազմութեամբ ձայն ունենալ։ Դարձեալ, Արևելեայք հակառակած էին սկիզբէն, և կաթողիկոսն ալ հակառակած էր անոնց, և երկուստեք ծանր թուղթեր գրած էին։ Եթէ նոյն ոճով յառաջէին, ծանր էր կացութիւնը, և հարկաւ գտնուեցան երկու կողմէն խոհեմ միջնորդներ, որք կրցան սիրտերը հանդարտել, և փոխանակ թուղթերով մաքառելու, բերանացի տեսութեամբ զիրար հասկնալ։ Բարսեղ Անեցիին ներկայութիւնը շատ նշանաւոր է, ինչպէս նաև նշանակութիւն ունի որ Զորոյգետացի վարդապետներէն ոչ ոք ժողովին եկած է, ոչ Տուտէորդին, ոչ Քոբարեցին, և ոչ իսկ Վարդան Հաղբատեցին։ Հռոմկլայու ժողովն ուրեմն, բնաւ նոր կացութիւն մը չստեղծեց, ծիսական և կանոնական առաջարկները բացէբաց մերժեց, Հայոց եկեղեցւոյ դիրքը չայլայլեց, հաւատոյ դաւանութեան մէջ նոր բացատրութիւն չմուծեց, այլ միայն հաճեցաւ ընդունել թէ Յոյնք կրնան նեստորական չնկատուիլ, ինչպէս և պահանջեց որ Հայք ետիքական չնկատուին։ Այդ պայմաններու վրայ կազմուեցան ժողովական թուղթերը, որոց ներքև ի միասին ձեռնագրեցին, նախ երկու կողմերուն մեծ աթոռակալները, աթոռներու աւագութեան կարգով։ 1. Կաթողիկոսն, 2. Աղուանից կաթողիկոսը, 3. Անի, 4. Անտիոք, 5. Երուսաղէմ, 6. Տարսոն, 7. Եդեսիա, 8. Տփղիս, 9. Սիւնիք, 10. Կեսարիա, և անոնցմէ ետքը՝ առաջ 10 Արևելեայ եպիսկոպոսներ, և յետոյ 12 Կիլիկեցի եպիսկոպոսներ։

71. Հռոմկլայի ժողովական թղթոյն մի նոր և ընդարձակագոյն օրինակը տեսնուեցաւ վերջերս հրատարակուած (Արարատ. 1893 յունուար), որ թէպէտ հրատարակողէն Գրիգոր Պահլաւունւոյ կը վերագրուի, սակայն Գրիգոր Տղայի լինելը յայտնի է ամէն պարագաներէ, և մանաւանդ ժողովական թուղթին հետ բաղդատութենէ։ Այս օրինակն ալ միևնոյն կարգով կը յառաջէ. նախ Մանուէլի գովեստներ, յետոյ Քրիստոսի մարդեղութեան վրայ դաւանական բացատրութիւն, յետոյ ընկալեալ ժողովներու յիշատակութիւն, որք են 1. Նիկիոյ, 2. Անկիւրիոյ, 3. Կեսարիոյ, 4. Նէոկեսարիոյ, 5. Գանգրայ, 6. Անտիոքայ, 7. Լաւոդիկեայ, 8. Սարդիկեայ, 9. Կոստանդնուպոլսոյ և 10. Եփեսոսի։ Յետոյ նզովեալ հերիսիովտապետներ, որք են, 1. Ընդհանուր կերպով ամէնքը, 2. Արիոս, 3. Մակեդոն, 4. Պօղոս Սամոստացի, 5. Փլաբիա-

նոս, 6. Ապողինար, 7. Նեստոր, 8. Թէոդորոս, Դիոդորոս, Իբաս, Ակակիոս և Բարծումա, 9. Վաղենտինանոս, 10. Եւտիքէս Կիլիկեցի։ Ասոնցմէ եաքը կայ ընդարձակ քաղուած վկայութեանց Ս. Հարց, որք կը դիտեն անշփոթ միութիւնը հաստատել։ Ի վերջոյ կուգայ Բաղկեդոնի ժողովոյն վիայ նայուածքը, որուն համար կըսեն, թէ մերոց ոմանց չունիմք ասելիք ինչ դնել բանս, ոչ քաջի և ոչ չար, այլ ի լրոյ և ի գրոցն Ցունաց՝ Բաղկեդոնի դէմ զրուցուածները քաղելով կը յաւելուն, որ թէ այպէս իցէ, ասեմք թէ ոչ երբեմն զմեծատունս խորհեցան։ Այդ խօսքը, և վերև Փլաբիանոսը ընդ հերետիկոսս նզովելը, բաւական են ցուցնել այդ գրութեան ալ հակաքաղկեդոնական ուղղութիւնը։ Մարթ է կարծել, թէ ժողովական թղթոյն այդ ընդարձակագոյն ձևը պատրաստուած էր Աղուանից կողմանէ, և թէ յետոյ տակաւիկ ևս մեղմուելով վերջնական և պաշտօնական ձևը առաւ, ինչպէս որ տեսանք։ Այդ խորհրդածութիւնն ու բաղդատութիւնն ալ կը հաւաստեն թէ Հռոմկլայու ժողովը ոչ իւրք այլայլեց Հայոց եկեղեցւոյն իսկական և ծանօթ դիրքը, այլ առանց քաղկեդոնիկ լինելու հաճեցաւ քաղկեդոնիկները արդարացնել։ Այդ ալ համաձայն է այն ներողամիտ սկզբանց, որք մեր եկեղեցւոյն նկարագիրը կը կազմեն։

72. Սակայն այդչափն ալ գործադրութիւն չունեցաւ, և ապարդիւն մի գործ մնաց։ Հռոմկլայի ժողովը իւր եկեղեցւոյն համար հաւատոյ վճիռ արձակել չէր դիտեր, այլ լոկ երկու ազգերու և երկու եկեղեցիներու միութեան և հաշտութեան համար ծրագիր մը պատրաստել, որ այն ատեն միայն ոյժ պիտի ունենայր, երբ Ցոյներ ալ նոյն ծրագիրը ընդունէին, և յետոյ երկու կողմեր մէկտեղ հաւաքուելով կամ համաձայնելով նոյն գիրը ստորագրէին։ Անհերկբայ էր, որ Ցոյնք լոկ սիրտերը շահելու և ժամանակ վաստկելու համար զիջողութեան ձևեր յայտնած էին լռութեամբ միայն, և ի դէպ պահու նորէն իրենց նախկին պահանջները պիտի նորոգէին, կամ թէ լաւ ևս, փոխանակ համագումար զիջողութիւններ պահանջելու, զայնս միառմի կորզել պիտի ջանային։ Սակայն գործը այնտեղ ալ չհասաւ։ Գրիգոր կաթողիկոս մեծայոյս էր, թէ իւր ժողովական գիրը ընդունելութիւն պիտի գտնէր Մանուէլէ և Ցոյներէն, ուստի ժողովական թուղթը ստիպմամբ փութաց յղել Կոստանդնուպոլիս յաւուրկ սուրհանդակով, որ չեմք գիտեր թէ եպիսկոպոս մըն էր կամ թէ լոկ պալատական իշխանաւոր մը։ Սուրհանդակին մեկնելը մարթ է դնել ժողովոյն յաջորդող ձմեռուան։ Սուրհանդակը մինչև Կեսարիա հասաւ, այլ անկէ անդին չկրցաւ երթալ վասն խռովութեան ճանապարհի (Ընդհ. 200), և բաւական սպասելէ յետոյ պարտաւո-

բուեցաւ Հռոմկլայ դառնալ, և մինչ կաթողիկոսը կը ջանար ուրիշ կերպով և ուրիշ ճանպով և ապահով եղանակաւ ժողովական թուղթը Կոստանդնուպոլիս հասցնել, և ահա լուր եկաւ թէ Մանուէլ կայսր վախճանած է (1180 սեպտեմբեր 27), և թէ անոր յաջորդած է Ալեքսիս որդին. տակաւին 12 տարեկան մանուկ մը։ Մանուէլի վրայ մեծ գովեստներ կը գրէ միութեան նամականիին ծանօթութեանց հեղինակը, և այդ գովեստներուն ամէնուն կողմանէ ընդունուած լինելուն նշանն է Մանուէլի անունին յայսմաւուրքի մէջ ալ անցնելը (յունիս 22)։

73. Միութեան գործին շարունակութիւնը ընդհատուեցաւ Մանուէլի մահովը, որ Յունաց կողմէն ամենայն ուժգնութեամբ այդ փափագը կը մղէր։ Ծանօթութեանց հեղինակը երեք տարի ետքը (1183) գրելով կըսէ. թէ Մանուէլի որդւոյն մանկութեան պատճառով խռովութիւնք սկսան և օրըստօրէ կաճեն, և թէ վերջանալուն իսկ յոյս չկայ։ Իրօք ալ նոյն տարին Ալեքսիս տակաւին 15 տարեկան սպանուեցաւ, և սպանողն Անդրոնիկոս կայսր հռչակուեցաւ, սակայն ինքն ալ երկու տարի ետքը (1185) Իսահակ Անգեղոսէ գահընկէց եղաւ և ժողովրդական վրէժխնդրութեամբ սպանուեցաւ։ Այդ միջոցին անհնար էր որևէ միութեան խնդիր յուզել Կոստանդնուպոլսոյ արքունեաց հետ. այսու հանդերձ Գրիգոր կաթողիկոս և Լամբրոնացին չէին դադրեր նոյն խորհուրդը մշակել, և միութիւնը յաջողեցնելու համար նոր միջոցներ որոնել։ Միութեան խնդրոյն մէջ երկուքին ալ նպատակն էր Հայերը հանել իրենց կղզիացեալ դիրքէն, և քրիստոնէութեան մեծ ճիւղերուն հետ կապակցութեան մէջ դնել։ Մէկ կողմէն յունական կայսրութիւնը և միւս կողմէն Խաչակրաց զօրութիւնը իրենց աչքին մեծ կերևային, և ընդհակառակն Հայերը իրենց սակաւութեան մէջ՝ անզօր և տկար, այլև իրանց խրթնացեալ կացութեան մէջ՝ անկարգ և անբարեկարգ, մինչ միւս քրիստոնէից վիճակը նախանձելի և կանոնաւոր կը տեսնէին։ Այդ բուռն փափագը, զոր ունէին Գրիգոր և Ներսէս, զիրենք կը բորբոքէր և երբ գործը Յունաց կողմէն անյոյս դիրք մը առաւ, իրենց եռանդը, փոխանակ մարելու և ջնջուելու, ուղղութիւն փոխեց և նոյնչափ և աւելի ուժգնութեամբ սկսաւ միութեան նոր տեղ մը որոնել, և հետամուտ եղաւ Լատինաց հետ համաձայնելու, որ գործոյն երկրորդ և աւելի վտանգաւոր կերպարանն եղաւ, և որ ստուգիւ յապագային հաքանգես աճեցաւ և զօրացաւ։

74. Այդ փոփոխութեան պատճառներէն մին ալ քաղաքական պայմանն էր։ Տարսոն Յունաց ձեռքն էր երբ Տարսոնի հրաբորբոք արքեպիսկոպոսը Յունաց հետ միութեան հետամուտ էր, և

Հռոմկլայի ժողովը կը գումարուէր։ Անկէ երկու տարի ետքը (1182), Ռուբէն իշխան Տարսոնը Յոյներէն առաւ, և կարծես թէ այդ ծանր եկաւ Լամբրոնացիներուն, և այդ պատճառով Հեթում իշխան, Ներսէս եպիսկոպոսին եղբայրը, գժտեցաւ Ռուբէնի հետ։ Ռուբէն պատերազմի ելաւ, Լամբրոնը պաշարեց, և Լամբրոնացիք Անտիոքի լատին իշխանին օգնութեան դիմեցին, որ նենգութեամբ Ռուբէնը ձերբակալեց (1183)։ Լևոն, Ռուբէնի եղբայրը, զօրքերուն գլուխն անցաւ, Լամբրոնի իշխանը հաշտութիւն խնդրելու ստիպեց, եղբայրը գերութենէ ազատեց և իւր իշխանութեան մէջ վերահաստատեց։ Հռոմկլայի կաթողիկոսը և Սսոյ և Լամբրոնի և Անտիոքի իշխանները այդ առթիւ խաղաղութիւն ըրին իրարու մէջ, և յարաբերութիւնք սկսան մտերմանալ և բարեկամութեան հաստատութիւնը՝ իւր ընդարձակութիւնը գտաւ միութեան գաղափարին մէջ։ Այդ նպատակով վերոյիշեալ դիպուածոց յաջորդ տարին (1184), Գրիգոր կաթողիկոսի և Լուկիոս Գ. պապին մէջ թղթակցութիւնք սկսան։ Տարի մը ևս յետոյ (1185) Ռուբէն Ռուբինեան բոլորովին տկարանալով իշխանութենէ հրաժարեցաւ. և թողուց զայն իւր Լևոն եղբօր, որ արտաքին յարաբերութեանց գաղափարին ջերմ կուսակից էր, և որ այդ ճամպով թագաւորական անուն և պսակ ալ ստանալու հասաւ։ Գրիգորի առ Լուկիոս գրած նամակին պատճէնը չունիմք, և եթէ միտ դնենք Վարդան պատմիչին, Գրիգոր կը խնդրէր պապէն, որ Յունաց կողմանէ յարուցուած հալածանաց դադարման համար միջնորդէ, զի Իսահակ Անգեղոս ոչ թէ Մանուէլի նման բանակցութեամբ միութիւն կուզէր հաստատել, այլ իւր իշխանութեան մէջ եղող Հայերը բռնի յունականութեան կը ստիպէր, և 3 եպիսկոպոս և 1600 քահանայ ի մի հաւաքելով նեղութեամբ կը բռնադատէր (Վարդ. 134)։ Նամակին տանողն էր Գրիգոր հայ եպիսկոպոս Փիլիպպուպոլսոյ (Փիլիպէ), թերևս յաջորդն Յովհաննէս Ութմանի, զի նա ալ Փիլիպպուպոլսոյ առաջնորդ էր (Ընդհ. 144), իսկ նամակի ներկայացումը տեղի ունեցաւ ի Վերոնա։

75. Լուկիոսի առ Գրիգոր պատասխանին նկատմամբ Լամբրոնացին և Վարդան տարբեր ծանօթութիւններ կուտան։ Լամբրոնացին է՝ որ նամակը (1184 դեկտեմբեր 3) լատիներէնէ թարգմանեց, և այդ թարգմանութենէն կը տեսնեմք, թէ Լուկիոս նախ կը բարձրացնէ Հռոմայ աթոռոյն իշխանութիւնը, յետոյ կը սկսի ծիսական փոփոխութիւններ պահանջել Հայերէն, որք են 1. Բաժակին ջուր խառնել. 2. Ծնունդը զատաբար տօնել ի 25 դեկտեմբերի, 3. Միւռոնը իւրաքանչիւր տարի աւագ հինգշաբթի օրը օրհնել. 4. Եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը կիրակի, իսկ քա-

հանայից և սարկաւագաց և դպրաց ձեռնադրութիւնները տարին չորս անգամ չորս եղանակներու պահքերուն շաբաթ օրերը կատարել։ Այդ նամակին հետ ընծաներ ալ կային. եպիսկոպոսական մը լատինական որ է պալլիում, և խաչ մը եպիսկոպոսական արածայրս. և գիրք կարգաց եկեղեցւոյ որ է ծիսարան, զոր թարգմանեց ինքն Լամբրոնացին հրամանաւ կաթողիկոսին (Զամչ. Գ. 144)։ Իսկ Վարդան կըսէ թէ պապը նախ Գրիգոր եպիսկոպոսը պատուեց և զգեցոյց նմա զիւր քահանայապետական զգեստն, որ է եպիսկոպոսական զգեստ, ապա ժողովի գումարեց «զկայսրն Ալամանաց, և զթագաւորն Անկլիզաց և զթագաւորն Փրանցիսայ, և զպատրիարքն Ալամանաց, և զարհիեպիսկոպոս Սպանիոյ, և զարքեպիսկոպոսն Ս. Յակոբայ, և զմեծ արքեպիսկոպոսն Միլանայ, և զպատրիարքն Երուսաղէմի... և ի խորհուրդ մտեալ նոքօք գրեաց գիր հրամանաւ սուրբ առաքելոյ ի նոցա երեսաց, եթէ Հայոց պատրիարքն յանկոյս ծովու իշխանութիւն կալցի ի վերայ Հայոց և Յունաց և ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօք»։ Իսկ զրկուած ընծաներն ըստ Վարդանայ են, վակաս, պսակ, կօշիկ և մատանի, որ պիտի լինէին ի նշան իշխանութեան յաւիտեանս յաւիտենից (Վարդ. 134)։ Վարդանայ այդ տողերը կը յիշեցնեն Դաշանց թղթոյն ոճը. և անկէ աւելի հաւատալի չեն. իսկ մեզ մտածել կուտան, թէ ինչ տեսակ ակնկալութիւններ սկսեր էին տածել մերայինք Լատինաց վրայ, և ինչչափ մեծ էր խաչակրաց ըրած ազդեցութիւնը արևելքին վրայ։

76. Այսու հանդերձ Լատինք ալ Հայերը կը շողոքորթէին անոնց նիզակակցութիւնը ապահովելու համար։ Սալահեդտին սկսեր էր զօրանալ այն միջոցին. քիչ ետքը Երուսաղէմը գրաւեց (1187), և Կղեմէս Գ. պապ նոր խաչակրութիւն մը հրատարակեց և միանգամայն գրեց առ Գրիգոր կաթողիկոս (1189 մայիս 29), որպէս զի Հայեր Խաչակրաց օգնեն և իրենք ալ զինուին սուրբ տեղեաց ազատութեան համար։ Նոյն ոճով գրեց Կղեմէս նաև Լևոն իշխանի, որ անմիջապէս սկսաւ պատրաստութիւններ կատարել։ Երբ Փրեդերիկոս կայսր մօտեցաւ, Լևոն իրեն մօտ հաւաքեց կաթողիկոսը, Լամբրոնացին, և գլխաւոր վարդապետները և իշխանները, և մինչ տակաւին կայսրը Կեսարիա էր, պաշարներ ղրկեց անոր, և Փրեդերիկոս շատ ուրախացաւ, վասն զի շատ նեղուած էր սովէն և Յունաց և Այլազգեաց տուած ձանձրութիւններէն։ Խոստացաւ որ փոխարէն՝ Լևոնի թագաւորութիւն շնորհէ. և այդ ուրախութեամբ կրկնապատկեցին Հայերն իրենց անձնուէր ծառայութիւնները։ Լևոն իշխան, Գրիգոր կաթողիկոս, Ներսէս Լամբրոնացին, Յովհաննէս եպիսկոպոս Սսոյ, Գէորգ Սկևռ-

տացի և այլք Տարսոնէ ելան, որ երթան և կայսրը դիմաւորեն, այլ նա դժբաղդաբար Կիւղնոսի մէջ խեղդուեցաւ, և դիմաւորողներ տխրութեամբ Տարսոն վերադարձան։ Սակայն չդադրեցան օգնել Լատինաց որչափ կրնային, և միանգամայն մտերմութիւնը շատցնել։ Յուսացին որ Կոնրատոս, կայսեր որդին, հօրը խոստումը կատարէ և Լևոնի արքունական թագ շնորհէ, մինչև իսկ Լամբրոնացին թագադրութեան կարգը լատիներէնէ հայերէնի թարգմանեց, սակայն կայսրորդին ալ մեռաւ, Գերմանացիք ցըրուեցան, և Հայոց սրտին մէջ ծագած փափաքը անկատար մնաց։ Այլ Լևոն չյուսահատեցաւ, և շարունակեց Լատինաց հետ լաւ յարաբերութիւն պահել ապագայ շնորհաց ակնկալութեամբ։

77. Այդ ամէն յարաբերութիւնք Հայոց ընդ Լատինաց, շատ վատ տպաւորութիւններ ազդած էին Արևելեայց վրայ։ Ասոնք, Հռոմկլայի ժողովին առաջուց հակառակելէն ետքը, հազիւ ուրեմն հաւանած էին կէսառկէս ձևով գործին մէջէն ելնել. իսկ երբ Հռոմկլայի որոշումը ապարդիւն մնաց, Արևելեայք ուրախութեամբ իբր յաջողութիւն մը նկատած էին զայն, և ահա, հազիւ մէկ հարուածէն ազատած, չէին կրնար լաւ աչքով նկատել երկրորդը։ Լատինաց հետ մերձաւորութիւնը, աւելի մեծ տխրութեամբ կը դիտէին, զի գիտէին թէ աւելի ևս հեռու են անոնք Հայոց ուղղութենէն, և աւելի յառաջացած են իրենց բռնադատիչ պահանջմանց մէջ։ Գրիգոր Տուտէորդին և Դաւիթ Քոբարեցին, Ջորոյգետացի վանականներուն առաջնորդները, և իրենց հետ նաև Բարսեղ Անեցի, որ լաւ տպաւորութիւններով դարձած չէր Հռոմկլայէ, սկսան ձայն բարձրացնել եղելութեանց դէմ, և իրենց հակառակութեանց մեծ առարկաներէն մին ալ եղած էր Լամբրոնացին Ներսէս, զի գիտէին թէ գլխաւորապէս նորա թելադրութեամբ կը գործէր կաթողիկոսը։ Ոմանք այդ միջոցին կը դնեն Տուտէորդւոյն և Արևելեայց նամակներուն գրութիւնը և կաթողիկոսին պատասխանները, զորս վերև քաղեցինք։ Որչափ ալ ինչ ինչ պարագաներ, զորօրինակ Լատինաց խօսքը, հռովմէական խնդիրները, և այլն, հաւանական ցուցնեն այն նամակներուն այս միջոցին գրուած լինելը, սակայն ըստ մեզ աւելի որոշիչ է նկատել, թէ կաթողիկոսն այս նամակներուն մէջ չյիշեր Հռոմկլայի ժողովը և այնտեղ կազմուած համաձայնութիւնը, զոր չէր լռէր, եթէ ժողովէն յետոյ գրած լինէր այն նամակները։ Մանաւանդ թէ նոյն նամակին մէջ ժողովը իբր գումարուելիք կենթադրէ, և միայն Արևելեայները ժողովի հրաւիրած լինելը կը յիշէ. և ոչ աւելի (Տղայ 76)։ Այս պարագայն ըստ մեզ որոշիչ պէտք է նկատուի

նոյն նամակներուն թուականը ճշտելու այն կերպով, որ մեք ալ նշանակեցինք։

78. Գրիգոր Տղայ կաթողիկոսի վերջին տարիները ուրիշ նկատողութեան արժանի դիպուած չեն ներկայեր։ Իւր մահը տեղի ունեցաւ խաղաղութեամբ 20 տարի կաթողիկոսութենէ ետքը, Հռոմկլայի կաթողիկոսարանին մէջ (1193 Մայիս 18), ուր ինքն նոր և փառաւոր կաթողիկէ եկեղեցի մըն ալ շինած էր, կամ ըստ այլոց Դրազարկի վանքին մէջ։ Իւր կեանքին բոլոր գործունէութիւնը սպառեցաւ միութեան խնդրով, զոր պատրաստ գտաւ աթոռ ելած միջոցին, և շփոթ վիճակի մէջ թողուց գերեզման իջած ժամանակ։ Նախ եօթը տարի (1173—1180) ամենայն եռանդեամբ շարունակեց Յունաց հետ բանակցութիւնները, մինչև որ Մանուէլ մեռաւ, Յոյնք շփոթութեան մատնուեցան. և Հայերը բռնութեամբ իրենց կողմը ձգելու աշխատել սկսան։ Անկէ ետքը սկսան փոփոխուիլ Գրիգորի միութենական ձգտումները, մինչև որ վերջապէս Լատինաց հետ բանակցութեան մտաւ, և ինը տարի ալ (1184—1193) այդ բանակցութիւնները շարունակուեցան առանց վերջնական ձև մը առնելու։ Գրիգոր Տղայէ ժառանգութիւն մնաց Լատինաց հետ միութեան գաղափարը, թէպէտ հնարաւոր բան մը չէր, մանաւանդ թէ անհնար էր որ Լատինաց կողմէն միութիւն կատարուէր, առանց Հայերը բոլորովին իրենց նմանցնելու, պայման մը՝ որ Հայոց եկեղեցւոյ կործանում ըսել էր։ Գրիգոր Տղայի անձնաւորութեան վրայ արդէն գաղափարնիս յայտնած ենք. չենք կրնար համակերպիլ նորա բուռն միութենական ձգտմանց, և ոչ ալ կրնանք իւր նամակներուն ոճին գովաբանն ըլլալ. այսու հանդերձ չեմք կարող ուրանալ իւր անձնական արժանիքը, զոր աւելի փայլեցուցած պիտի լինէր, եթէ իւր հօրեղբայրներուն, Պահլաւունւոյն և Շնորհալւոյն, խոհական չափաւորութենէն երբէք չհեռանար, թէպէտ և, ինչպէս բացատրեցինք, Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութիւնն խախտած կամ յունական կամ հռոմէական եկեղեցիներու դաւանութեանց ընդունող եղած չէ։

Մ. Ա. Օ.

ԱՍՏՈՒԱԾ

Ես ապրում էի... կեանքի երազը
Այրող իմ սրտում սլանում էի
Հեռու և հեռու... Ես դիտում էի...
Եւ զրկում էի ողջ տիեզերքը
Անեզր, անծայր... և ժպտում էի.
Մարդկային մտքի տենչերը բոլոր
—Դարերով ապրած, դարեր ամբարուած
Եռում էր իմ մէջ... իսկ ես մի հզօր,
Անսահման հզօր և կարող Աստուած
Շօշափում էի այրող կարիքի
—Անսկիզբ կեանքի յոյզերը բոլոր.
Եւ ողջը, ողջը ինձ ստիպում էր
Միայն ստեղծել... և ստեղծեցի։

Բայց անցան դարեր... Օ՜ ես սարսեցի
Արարածների, արնոտ սրտերի,
Այլանդակ կրքի, նենգ ոգիների,
Եւ անէծքների դաժան պատկերից...
Ուզեցի նորից
Մի չնչին խօսքով ողջը խորտակել,
Եւ նորից... նորից, մի նոր սկզբից
Մի հիանալի սուրբ կեանք ստեղծել,
Ուր և չլինէր—ոչ անէծք, ոչ փառք,
Ոչ ծառայ, ոչ տէր, ոչ վիշտ, ոչ զրկանք,
Ոչ երանութիւն, ոչ բաղդ, ոչ դժբաղդ,
Մի խօսքով անրիծ, անարատ մի կեանք,
Ողջը միմիայն—յոյս, հաւատ և սէր...

Բայց յանկարծ սարսեց դժոխքը ահեղ,
Խաւարը եռաց, փրփրաց ուժգին,
Եւ չարն ու բարին, ողջը միատեղ
Կանգնեցին իսկոյն աչքիս առաջին։

—Ասա Արարիչ—որ կաս յաւիտեան,
Որ յաւիտենից ազատ, անսահման
Իշխում ես միայն... ինչու ես ուզում
Կեանքը անիծել, ինչու խորտակել,
Ինչու ստեղծել...
Զէ՞ որ աշխարհը, ողջ արարածներ,
Որ անիծում են դեռ պատճառ ունին...
Բայց դու... Օ՜ Նայիր... տես որքան սրտեր,
Խաւար ստրուկներ դեռ պաշտում են քեզ.
Տես որքան խոնարհ, և ապուշ և հեզ
Թոյլ արարածներ
Դեռ փառք են տալիս... և այն ցուրտ կեանքի,
Ցաւ ու զրկանքի, այն այրող մտքի
Հէգ թշուառները, որոնք օրն իբուն
Անյոգ, անդադրում քրտինք են թափում
Եւ աղօթք կարդում...
Իսկ դու ինչու ես այդպէս վշտանում,
Անէծքն ատելով, ինքդ անիծում։
Այդպէս, անկասկած ով բարի Աստուած
Անէծք... ու անէծք. բայց զուր է հնչում
Այդ բառը թունոտ-ողջ տիեզերքում։
Ինչ կայ, թող մնայ... յաւիտեան մնայ...
Սուրբ է բոլորը...
Անվերջ բոլորը։
—Սուրբ է, երբ ոսկի արև է ծագում
Աշխարհի վրայ ամեն առաւօտ.
Սուրբ է լուսնեակը—խաւար եթերքում.
Երբ բորբոքում է այն արօտ կարօտ
Մատաղ յոյսերով, սիրող սրտերի
Եւ խանդ ու երազ... սուրբ է կապուտակ
Աստղոտ երկինքը, երբ հազար հազար
Փայլուն աչերով նայում է յստակ,
Լուռ ծաւալուելով—անհուն ջրերի
Ովկիանոսների վճիտ հայելում
—Անվերջ, անդադրում։
Սուրբ է անդրանիկ շողը վարդագոյն,
Մշուշ դագաթին ծերուկ լեռների.
Սուրբ է ստուերը—այն ախորժ դժգոյն
Այնքան զովաբեր-սահող ամպերի։
Սուրբ է անտառի օրօրը մեղմիկ,

Եւ ստուերախիտ դարաւոր կաղնին,
Որ հով է սփռում անհուն երջանիկ
Բնութեան գրկում լուռ երազողին։
Սուրբ է և կանաչ և արօտ և դաշտ։
Ուր հազարերանգ ծաղիկներ կան շատ.
Ուր թռչունների անհոգ ծլլոց,
Արարածների բառաչ ու մայուն,
Մեղմիկ զեփիւռի անուշ սլսլոց
Ուր կեանքն է եռում յոյսերով անհուն։

Սուրբ է և մարդը յոյզերով արբած.
Երբ ոյժ է մղում խաւարի ընդդէմ,
Երբ յոյսը իրեն վրայ անկասկած
Դժոխքի գրկում—տենչում է Եդեմ.
Երբ լոկ իր սրտում, իր հոգու խորքում
Պտրում է և կեանք և սէր և աշխարհ,
Եւ բիւր տենչերին մի դրախտ անծայր։

Մինչ սուրբ է մրրիկ, և կայծ և որոտ,
Որ խափանում է երկիւղը կարօտ.
Սուրբ է և կռուի այն ոյժը հզօր,
Որ խորտակում է—դաժան և անզօր
Արարածներին,—որոնք անիմաստ
Զուր տեղ են բռնում—ընտրած շարքերում,
Որոնք դարերով—ազատ ու պատրաստ
Կեանք են վայելում, կեանքն ապականում։

Օ՜ վերջապէս, սուրբ է բոլորը,
Ինչ որ շնչում է, ապրում է մի օր,
Ախ այն բոլորը, անվերջ բոլորը,
Որոնք ապրելու տենչ ունին հզօր...
Թող նորից եռայ տարերքն աշխարհի,
Եւ նորից ապրի։ Ինչ կայ—թող մնայ...
Եւ թող բոլորը—քնքոյշ ու վայրի
Երազեն անվերջ—յոյս ու ապագայ։

—Եւ ես ասացի. այո, թող մնայ,
Եւ ողջը աճի, ազատ բազմանայ։

ԽԵՆԹ

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ

(Թրքահայ գաղթականների կեանքից)

I

Արշալոյսը բացւում էր։ Վաղորդեան աղջամուղջը անշարժելի կերպով ասես հալւում, անհետանում էր, իր թևերի տակից մէկ-մէկ երևցնելով Տրբի գիւղի սար ու ձորը, դաշտ ու արտորայքը, քար ու թուփը, որոնք հետզհետէ երևան էին գալիս և իրանց քնաթաթախ դէմքով ցցւում առաջիդ ու, կարծես, մինչև գետին խոնարհելով՝ բարի առաւօտ մաղթում. ապա, ուղղուելով, երկարացնում իրանց հասակը ու քո հրամանիդ սպասում։

Կեանքը արագ-արագ սփռւում էր ամեն տեղ. գիշերային խաւարի չար ոգին հալածւում, փախչում, անհետանում էր և ամեն ինչ արթնանում, ոտքի էր կանգնում և իր սովորական դերի մէջ մտնում. այլ ևս չը կային խաւարային շրջիկ, նենգամիտ ոգիներ. ամեն տեղ չքանում էին նրանց նոյնքան նենգամիտ, ծուռ ու մուռ շարժումները, նրանց ահ ու սարսափ տարածող ուրուականը։ Դեռ մի երկու ժամ առաջ քեզանից ոչ հեռու կանգնած ուռենին, որը քեզ վրայ ահ ու դող էր սփռում, հանդարտ շւալով, շարժում էր իր տերևները և քթի տակին ծիծաղում քո երկչոտութեան, թուլասրտութեան վրայ։ Եւ այսպէս, սատանայ, դև, գայլ ու արջ թուացող իրերը մէկ-մէկ դուրս էին պրծնում խաւարի գրկից և մանր ու բարակ շարժումներով իրանց աչքերը տրորում։ Դեռ արևը չէր դուրս եկել տօնելու իր յաղթանակը. դեռ գիշերային աղջամուղջը տենդային կռիւ էր մղում նրա հետ և ջանքեր գործ դնում՝ նրա ճանապարհը կտրելու. սակայն միայն խիտ մացառներում և ձորերի խուլ խոռոչներումն էր փոքր ինչ աչքի ընկնում նրա սրտամաշ գոյութիւնը։

Հաղարաւոր կենդանիներ՝ ասես բնազդմամբ զգալով երկրի թագուհու այդ յաղթութիւնը, սկսեցին իրանց ձայներով ողջունել նրան իր տարած յաղթանակը և պատրաստուեցին գործի կպչելու։ Միայն Տըրխցի գեղջուկն էր, որ դեռ չէր համարձակուում իր դռան ճռռոցով մասնակցել բնութեան այդ համերգին. առօրեայ ահաբեկող երկիւղը վաղուց մեռցրել, գերեզման էր տարել նրա մէջ վստահութեան, համարձակութեան զգացմունքը։ Բայց և այնպէս նա էլ էր զարթնել և դեռ իր ազքատիկ անկողնում պարկած՝ զրոյց անում իր թշուառ ամուսնու հետ և այդ օրուայ անելիքի մասին խորհրդածում։ Վերջապէս, նա էլ սկսեց հագնուել և, կժից մի ման ջուր վերցնելով, դուրս եկաւ դուռը, երեսը լուաց, իր հնամաշ չուխի փէշով սրբեց ու, դէպի աղօթարան դառնալով, խաչակնքեց երեսը և իր ամենօրեայ աղօթքը մրմնջաց։ Նա էլ կամաց-կամաց դաշտը դուրս եկաւ իր հեզ ու դոմշուկով դաշտը հերկելու։

Արևը դուրս եկաւ։ Ամեն ինչ գործի կպաւ։ Տըրխ գիւղը ամբողջապէս ծածկուեց ծուխերի քուլաներով. հայ գեղջկուհին թոնրի կողքին նստած՝ գոգնոցի շարժումներով սկսեց աւելի ևս բորբոքել աթարի կրակը։ Կեանքը ոտքի էր կանգնել ամեն տեղ. միայն մի տան երդիկից ոչ ծուխ էր բարձրանում և ոչ դուռը բացուում։ Դռան փարթամ կերտուածքից և բաղի մեծութիւնից երևում էր, որ այդ տունը ունեցել է իր փառաւոր անցեալը և գիւղի աչքի ընկնող տներից մէկն է եղել երբեմն։ Սակայն ինչ-ինչ փոթորիկների և անողոք ճակատագրի հարուածից, ըստ երևոյթին, այդ շէնքը զրկուել է իր մի ժամանակ պանծալի դրութիւնից։ Նրա տէրը այժմ մի պառաւ էր մնացել իր մատաղահաս աղջիկ թոռան հետ, որոնք օրուայ այդ պահուն դեռ նոր էին ոտքի կանգնում. նրանց հանգիստը խանգարել էին այդ գիշերը նրանց բարեկամ այցելուները։ Խրճթի վերի մասում երկու հնամաշ անկողնի մէջ իրարից ոչ հեռու դեռ պարկած էին երկու հոգի և, ինչպէս երևում էր, կենդանութեան ոչ մի նշոյլ ցոյց չէին տալիս. երկուսն էլ դեռ նոր էին մտել կեանքի դևռափթիթ այն շրջանը, որը խոստանում էր ամեն բան։

Ուշ գիշերին նրանց բերին այդտեղ իրանց խորհրդաւոր ընկերները և անյայտացան իսկոյն։ Պառկածներից մէկը յանկարծ սկսեց ծանր տնքալ և խըռխըռացնել. տան մատաղահաս աղջիկն իսկոյն մօտ վազեց, քնքշութեամբ ուղղեց նրա գլխատակի բարձը և մնաց նստած գլխավերևը։

Պառկածը ծանր վիրաւորուած էր. նա զառանցանքների աշխարհումն էր գտնուում. այդ թշուառ... զոհը... իմս էէ... բոնու-

թիւն էք... գործ դնում... տեսնենք, ով... ով կը խլի նրան... կրկնում էր նա։ Ապա յանկարծ աչքերը լայն բաց անելով, սկսեց նայել իր գլխավերև նստած աղջկան և կարծես ճանաչեց։

—Սօնա, այդ ո՞ւր ես, ո՜հ, իմ կեանք, այդ դո՞ւ ես... ինչո՞ւ ենք մենք այստեղ, ո՞ւր է դրօգչի Տրաթլամէն, այն հրէշը,—ծանր կերպով հարցրեց վիրաւորը։

—Սօնան հրէս կողքիդ պառկած, քնած է. Տրաթլամէն այլ ևս չը կայ, մի՛ մտածիր. ամեն բան լաւ է. իսկ ես Սալվին եմ. ճիշտ է, ես շատ նման եմ քո Սօնային, դու սխալուած չես։ Ձեզ Ցարուբեն է բերել, որին դուք Արթօ էք ասում և որը ինձ ազատեց Ուսօ-բէկից։

—Սա՞լվին... հա՛, հա՛ Արթօն... ա՜խ...։ Հիւանդը լռեց և դարձեալ զառանցանքների մէջ ընկաւ։ Երկու օր էր, ինչ նրանց մի կերպ այդտեղ էին հասցրել։ Դրանք իրանց սիրահարութեամբ գրգռել էին չար մարդկանցը, որոնք և վիրաւորել էին այդ անմեղ սիրահարներին, որոնց Արթօն իր ընկերների հետ Տըրխ էր փախցրել, յոյս ունենալով դեռ կեանք պարգևել նրանց։ Այն եղերական օրից երեք-չորս օր էր անցել, և այդ մի քանի օրուայ մէջ նրանք համարեա ոչինչ չէին կերել։ Խնամողները միայն ստէպ-ստէպ մի քանի կաթիլ կաթ կամ ջուր էին կաթեցնում նրանց պապանձուած շրթունքներին թէ քաղցը, թէ ծարաւը յագեցնելու։ Վիրաւորներից մէկը՝ Վահէն, դարձեալ աչքերը բաց արեց. այս անգամ տան պառաւն էլ մօտ եկաւ ուրախացած և, ձեռքը սիրալիր մօր պէս նրա ճակատին դնելով, հանգիստ կերպով հարցրեց.

—Ի՞նչպէս ես քեզ զգում, Վահէ ջան։

—Ի՞նչպէս... կրկնեց նրա հարցը կցկտուր կերպով Վահէն, —ինչպէս... ինչո՞ւ Սօնան չի զարթնում... ես... ես... օ՜... լաւ եմ... ինձ ոչինչ չի եղել... այժմ ես, ես, օ՜... կը լսեմ Արթօյին. օ՜, ինչ օրի ենք հասել... Ապա գլուխը շուռ տուեց դէպի Սօնան և երկար, շատ երկար նրա դալկացած դէմքին նայեց, յետոյ, կարծես անցեալի դառն պատկերները իրանց եղերական իրողութեան հետ մտաբերեց և, ժողովելով բոլոր ոյժերը, վեր ցատկեց դէպի Սօնայի կողմը, բարձր ճչալով,—Սօնա՛, այ Սօնա՛, վե՛ր, վե՛ր, մեզ այլ ևս ոչ կը բաժանի—մենք միասին ենք։ Սակայն իսկոյն թուլացած վայր ընկաւ. դեռ երեկ գիշեր նրանից ճանապարհին այնքան արիւն էր զնացել, որ համարեա ուժասպառ էր եղել. այժմ էլ ցատկելու ժամանակ վիրակապն արձակուեց և արիւնը դարձեալ հոսել սկսեց վէրքից։

Սալվին և իր տատը զգուշութեամբ կապեցին նրա վէրքը։

Նրանք անհամբեր Արթօին էին սպասում, որը, այդ դժբաղդ սիրահարներին նրանց յանձնել, շտապել էր հէքիմի ետևից իր ընկերների հետ միասին։ Արթօն մի քանի շաբաթ առաջ ազատել էր Սալվիին քուրդ բէկերի ճանկերից։ Վէրքերը ճանապարհին մի կերպ կապել էր նա, ուստի անհրաժեշտ էր հէքիմի օգնութիւն։

Վերջապէս, Արթօն հէքիմի հետ վերադարձաւ։ Տեսնելով պարկածներին, հէքիմը ցնցուեց. մի քանի ամիս էր, ինչ նա բաժանուել էր Վահէից, իր սիրելի ընկերից, և, առանձնանալով այդ կողմերը, պարապում էր իր արհեստով։ Սա, նկատելով Վահէի այդ ողբերգական դրութիւնը, արտասուել սկսեց, ապա մօտ գալով, բռնեց նրա զարկերարկը ու գլուխը թափ տուեց։ Արթօյի օգնութեամբ նա վէրքը բաց արեց, ուշի ուշով զննեց և դառն հոգոց քաշելով, քթի տակին կրկնեց մի քանի անգամ.—«արիւն շատ է գնացել. բացի այդ վէրքը ինքնըստինքեան շատ վտանգաւոր է».—և սկսեց վէրքը լուանալ, մաքրել զանազան կեղտոտութիւններից ու կապել։ Միևնոյնը արեց Սօնայի հետ. սակայն սրա մասին բացասական կարծիք յայտնեց—«ես յոյս չունեմ, որ այս թշուառ զոհը նորից կեանք ստանայ. ոտքի կանգնի. ինչ էլ որ լինի, ես պիտի մնամ այստեղ և ամեն կարելին անեմ, գուցէ մի անյայտ ձեռք օգնութեան դայ այս անբաղդ զոհերին»։

Հէքիմը օրական մի քանի անգամ այցելում էր իր բարեկամ հիւանդներին և հարազատ մօր պէս ոչինչ չէր խնայում այդ թշուառներին։ Շնորհիւ նրա տոկուն և խելացի հոգացողութեան, Վահէն օրէցօր սկսեց դէպի լաւը գնալ այնպէս, որ նրան շրջապատողները յաճախ ուրախութեամբ կրկնում էին՝ «յոյս ունինք Վահէին դարձեալ առողջացած տեսնել և նա զոհ չի գնայ տիրող տգէտ պայմաններին»։ Եւ իրօք, երբքան թշուառ զոհեր են գերեզման իջնում տիրող պայմանների շնորհիւ այն մթնոլորտներում, ուր ամեն բան դեռ բարձրիցն է կախուած համարւում, ուր դեռ թագաւորում է «առանց Տիրոջ կամքի ծառի տերևն էլ չի պոկ գալիս»-ի դառն հասկացողութիւնը։ Եւ դեռ, գուցէ, շատ և շատ տարիներ սահեն երկրիս վրայով, չկարողանալով վախճան պատրաստել այդպիսի կսկծեցուցիչ հետևանքներ ունեցող հասկացողութիւնների համար։

Սակայն մխիթարական էր Վահէի ներկան, նրա վէրքը այժմ վտանգ չէր սպառնում կեանքին. ամենքը համոզուած էին, որ նա շնորհիւ իր հէքիմ ընկերին էր կեանք ստացել։

Այդպէս չեղաւ Սօնայի ճակատագիրը. նա սևացաւ այդ անբաղդ աղջկայ համար և իր սև գոյներով գերեզման պատ-

գրաստեց նրան։ Հէքիմի ճիգ ու ջանքերը ապարդիւն անցան։ Անհուն կսկծի հարուածի տակ այդ տաքարիւն աղջիկը անխնայ էր գործ դրել դաշոյնի մեխումն, որից ոչ մի միջոց փրկել չը կարողացաւ նրան։ Այո, անխնայ էր դործ դրած դաշոյնի հարուածը, և այդպէս սնխնայ միայն անկեղծ սիրահարներ վարուել գիտեն. նրանց երևակայութեան մէջ միայն երկու ծայրեր գոյութիւն ունեն, երկու ծայրեր միայն տեղ բռնած ունին՝ սիրել անսահման սիրով, ատել նողկանքի անհուն դառնութեամբ. ապրել միայն սիրելիի համար, մեռնել դարձեալ միայն նրա համար։ Այդպիսիներից էր և Սօնան։ Արդէն ութերորդ օրն էր, ինչ հէքիմը Տըրխ գիւղումն էր. այդ օր նա վաղ առաւօտեանից ոտքը չէր հեռացրել Սօնայի մօտից, այլ ամեն կերպ աշխատում էր մեղմել նրա տանջանքները, որոնք հետզհետէ թուլանում էին։ Սօնան մեռնում էր. նա վերջին անգամ բաց արեց իր չքնաղ աչքերը, այս ու այն կողմը նայեց, կցկտուր կերպով արտասանեց մի քանի անուններ և գլուխը դնելով Սալվիի ծնկների վրայ, որ նրանից նոյնպէս չէր հեռանում այդ օր, և ցոյց տալով իր գրպանը, խնդրեց միջի թղթի ծրարը Վահէին յանձնել, երբ նա կը վերադառնայ։ Հէքիմը նրան համոզել էր, որ Վահէն առողջացել և գնացել է նոր բժիշկ հրաւիրելու. այն ինչ նա նրանց առաջին օրուանից առանձին-առանձին սենեակներումն էր պահում։

II

Կէս գիշեր էր։ Լուսինը վաղուց անհետացել էր երկնակամարի վրայից։ Գիշերային անթափանցելի աղջամուղջը լռելեայն իր թևերի տակն էր առել Մասիսի շրջակայքը։ Ամեն ինչ սև ու խաւար էր. ամեն ինչ ծածկուած գիշերային մութ սաւանով։ Ոչ մի բան ազատ չէր խաւարի ընդհանուր տիրապետութիւնից։ Ամեն արարած, կարծես, աղջամղջի ընդհանուր թագաւորութիւնը աւելի զօրեղացնելու, հզօր դարձնելու համար՝ փակել էր վաղուց իր աչքերը և անտարբեր կերպով մշշում, խոմփացնում էր։

Դուրսը կեանք ասած բան, կարծես, վաղուց անհետացել էր երկրի երեսից. ոչ մի շարժում, ոչ մի ձայն-ծպտուն չը կար, միայն ստէպ-ստէպ լսւում էին ծառերի սօսափիւնը, խշշոցը, որոնք իրանց տերևների այդ միակերպ ողբերգութեամբ ասես բողոքում էին աղջամղջի անողոք և սրտամաշ տիրապետութեան դէմ։

Հեռու արևելքում մի ինչ որ բան մարուող, հանգչող աստղերի պէս փայլում, կարմիր բոցեր էր արձակում, ապա կորչում, անհետանում էր տիրող խաւարի մէջ։ Դա հանգչող աստղ չէր.

երկինքը մթին էր տալիս. սև-սև բարակ թուխպերը վաղուց ծածկել էին նրա երեսը, աստղեր չը կային։

Գ. գիւղի բանտի լապտերն էր, որ դրան ցցուած սեան վրայ ամրացրած, այս կողմ այն կողմ արձակելով իր աղօտ լոյսը, ասես կուում էր գիշերային չար ոգիների հետ և աշխատում պատռել խաւարի դաժան երեսը։

Լռութիւնը թագաւորում էր և բանտի շրջակայքում, որը մերթ ընդհատւում էր գիշերապահի ոտքերի թրմփոցներով, որը բանտի պատի տակ հրացանն ուսին դրած՝ հանդարտ և համաչափ քայլերով երթևեկում էր, աչքերը շուտ շուտ այս ու այն կէտին ուղղելով, երբեմն էլ փոքր ինչ կանգ առնում, ականջ դնում այս ու այն շշուկին և, բերանը լայն բաց անելով, օրօշտում ու նորից շարժում իր քայլերը։

Նրանից ոչ հեռու երևում էր մի սև ահագին զանգուած, որի երկարութեամբ միշտ երթևեկում էր գիշերապահը. դա բանտն էր։ Այստեղ վաղուց արդէն տիրում էր գերեզմանային լռութիւն. կալանաւորներն այս ու այն անկիւնում կուչ եկած, դառը հոգսերի տակ ճնշուած՝ նիրհում էին։ Որը վաղը պիտի կախաղան բարձրանար, որը դատի պիտի կանչուէր, որի դատավճիռը արդէն կարդացուած էր աքսորի տաժանակիր աշխատանքների ենթարկութեամբ։ Բայց որքա՜ն արդարացի էր այդ. շատերը կրում էին այդ սոսկալի տանջանքները, պատիժները լոկ պատրաստուած վկաների սուտ ցուցումներով. շատերը չէին կարողացել ժամանակին տեսնուել սրա-նրա հետ և բերանները իւղել, որ մեղադրական արձանագրութիւնները խիստ և չարագուշակ չը կազմուին։ Ինչևիցէ, նրանք անողոք բաղդի հարուածներին թողած իրանց տուն-տեղը, սիրելիները՝ այսօր հեծում էին բանտի մութ խորշերում։ Այդպէս է մարդկանց ճակատագիրը, որը գիտէ իր անհուն քաղցրութեամբ շոյել մարդկանց և բաղդի գագաթնակէտին հասցնելով ովսաննաներ կարդալ տալ. գիտէ և այդ վիթխարի բարձրութիւնից ցած գլորել իր զոհերին այն անյատակ վիհը, խորխորատը, ուր թագաւորում է արցունքների, տանջանքների, լաց ու հեծեծանքի քարասիրտ իշխանութիւնը։ Իսկ եթէ դրանց վրայ աւելանում են բանտ ու կապանքներ, ուր ազատութիւնը իւրաքանչիւր քայլափոխում սրբապղծւում է, ուր անհատը զրկւում է ամեն մի բարոյական սկզբունք կրող իրաւունքից, այն ժամանակ սև ճակատագրի դաւաճանութեան պատկերը կատարեալ կարելի է համարել...

Բանտե՜ր... որքան սրտամաշ է այդ անունը. որքան քարասիրտ է ձեր միջավայր կազմող մթնոլորտը, և որքան խուլ հա-

ռաչանքներ են լսուել ձեր անողոք յարկի տակ։ Բանտե՞ր... որքան անմեղ զոհեր էք դուք յաւիտենականութեան գիրկը գլորել և որքան արցունքների, վիշտ ու տառապանքի սկզբնապատճառ դարձել։ Դուք ձեր թունալից մթնոլորտում սնուցել էք սկսած սար ու ձոր դողացող աշխարհակալներից մինչև վերջին փշրանքի կարօտ մուրացկանին։ Դուք ձեր զազրելի տանջանքներին ենթարկել էք արդարութեան աւետարան քարոզող պետերին։ Քանի-քանի դարեր են սահել յաւիտենականութեան գիրկը, բայց դուք դարձեալ նոյնն էք։ Խաղացե՞լ էք արդեօք դուք ոևէ ուղղիչ դեր մարդկայնութեան ընդհանուր զարգացման և քաղաքակրթութեան պատմութեան էջերում։ Եղե՞լ են արդեօք որևէ բարւոքման և կուլտուրական սկզբունք տարածող ձեզ թողած հետքերը ազգերի և մարդկութեան պատմութեան մէջ.—Ո՛չ, ո՛չ, չեն եղել։ Խաբուսիկ է ձեր գոյութիւնը. ծով ու ովկիանոսներ կը կազմէին ձեր քամած արցունքները. սուգ ու շիւան են ձեր թողած հետքերը։ Եւ գուցէ նոյն՞ը մնաք դուք, քանի որ ձեզ չեն փոխարինել որոշ սկզբունք կրող տներ...

Գիշերապահը ինչ որ փսփսոց լսեց բանտի լուսամտից ու այն կողմը առաջ գնաց։ Լուսամտից ոչ հեռու նստել էր մի տարիքաւոր կալանաւոր և սաղմոսն առաջը դրած՝ կամացուկ կարդում-աղօթում էր։ Նա աչքերը երկինք բարձրացնելով, մրմնջաց.—Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ... Գիշերապահը նայեց նրան ու վերադարձաւ. առաջին անգամ չէր նա նրան տեսնում այդ դրութեան մէջ։ Ապա կալանաւորը, վերջացնելով իր առօրեայ աղօթքը, յենուեց ձեռքի վրայ և սկսեց դուրս նայել լուսամտից։ Այնտեղ ամեն ինչ մութ ու խաւար էր, ինչպէս իր վիրաւոր սիրտը. ոչինչ չէր երևում, և նա շարունակում էր նայել։ Նա ընկղմուել էր մտատանջութեան մէջ և իր փառաւոր անցեալն էր մտաբերում ու դառն վշտի տակ արցունքներ թափում։ Նա յիշեց իր հոյակապ պալատները, որոնք մի ժամանակ մայրաքաղաքի զարդն ու պճրանքն էին կազմում. յիշեց, թէ որտեղից այժմ ո՞ւր է հասել. յիշեց, թէ որքան անգութ է վարուել իր հետ անողոք ճակատագիրը։ Նա աւելի ևս հեռու անցաւ, երբ ինքն այդ մայրաքաղաքի աչքի ընկնող և առաջնակարգ վաճառականների շարքում պատկառելի տեղ ունէր բռնած և միլիոնների հետ էր խաղում։ Յիշեց և դառն ա՜խ քաշեց, որ այդ բոլորը կորել են անդառնալի։ Ո՞րպիսի փոփոխութիւն, որպիսի անողոք հարուած... Իսկ այդքան անփոխարինելի կորուստից յետոյ վիճակուած են իրան բանտ ու կապանք... Նիւթականի կորուստը նրան այնքան վիշտ չէր պատճառում։ Մի քանի ամ-

սուայ մէջ ինչ-ինչ անյաջող հանգամանքներ միմեանց ետևից զրկեցին նրան իր նիւթական բարձրութիւնից, և նա վերադարձաւ իր հայրենի Բ. քաղաքը, ուր աշխատում էր փոքր ինչ ապահովել իր և ընտանիքի նիւթական դիւրութիւնը։ Նա շուտով հիմնեց ներկարարի գործարան քաղաքի ծայրում և իրան երջանիկ էր համարում, որ մի կերպ կարողացաւ ապահովել իր դրութիւնը։ Սակայն այստեղ էլ նրան բաղդը հալածեց։ Զուր չէ ասում քրդական առածը թէ՝ «խէր դա բրռէզ, շառ դա բը ռէպ... (խէրն էլ իրար ետևից կը գայ, շառն էլ)։ Միևնոյնը կատարուեց և նրա հետ։ Շուտով մայրաքաղաքից վերադարձաւ այդտեղ Տրաբլամէի որդի Վռամը և հօր թողած կտակի համաձայն՝ սկսեց բողոք-բողոքի ետևից պալ պատշաճաւոր իշխանութեան, թէ իր տները շատ հեռու չեն այդ գործարանից, ուստի ներկերի վատ ազդեցութիւնը զանազան հիւանդութիւններ է պատճառում թէ իրան և թէ իր ընտանիքին և օրէնքի համաձայն պահանջում էր քանդել գործարանը։ Իսկ գործարանի տիրոջ բարեկամներն սկսեցին օրինաւոր փաստեր բերել, որ գործարանը գտնուում է որոշ հեռաւորութեան վրայ, այդ պատճառով չի կարող ոչ մի վնաս տալ բողոքատուին։ Թէև այս վերջինները տարան յաղթանակը, սակայն ամեն տեղ հալածուած այդ հարուստը անչափ վիրաւորուած համարեց իրան, որ զրկուելով ամեն ինչից, այժմ իր հայրենի քաղաքումն էլ մի անկիւն չեն ուզում տալ իրան, այն էլ ոմ չէ ուզում,—նա, որը իր շնորհիւն է մտել բարձրագոյն դպրոց, աւարտել և այժմ տղայական կապրիզներով բռնկուած, հալածում է իր մի ժամանակ բարերարին։ Ուստի և լցուած վշտի անհուն դառնութեամբ դէպի մարդկանց այդչափ լպիրշ ապերախտութիւնը, որ պարզ տեսաւ Վռամի մէջ և որ այնքան զզուելի ձևով արտայայտուեց իր դէմ, վճռեց իր հայրենի նուիրական վայրիցն էլ հեռանալ։ Այդքան ծանր էր ազդել նրա վրայ ապերախտութեան զգացմունքը, և այդ միայն եղաւ պատճառ, որ նա գլուխն առաւ ու հեռացաւ այդտեղից, աւերելով գործարանը, որը ճիշտ որ ոչ մի վնաս չէր տալիս Վռամին։ Թափառելով երկրէ-երկիր, այդ հալածական անբաղդը վերջապէս բնակութիւն հաստատեց մի պղնձհանքի շրջակայքում, Գ... գիւղի մէջ, ձեռք բերելով այդ պղնձհանքի կառավարչի պաշտօնը, ուր և մնաց մինչև եկաւ մի այլ ձախորդութիւն լցնելու նրա անբաղդութեան բաժակը, և նա կալանաւորուեց ու նետուեց Գ... գիւղի բանտը, ուր և ամեն գիշեր արտասուքի հետ լսուում էր նրա աղօթքը.—Տէր, հանի բանտէ... Իբրև պղնձհանքի կառավարիչ, նա պատասխանատու էր այնտեղ պատահելիք ամեն ինչի։ Մի օր պղնձհանքի գործա-

բանից գողացել էին մի պատկառելի գումար։ Կասկածը ծանրացաւ մի տաճկահայ բանուորի վրայ, և նա առանց քննութեան պղնձհանքի բանտը նետուեց, ուր և յուսահատութեան միջոցին, թէ ինչից դրդուած՝ խեղդամահ եղաւ, թէ խեղդամահ արին նրան։ Այդ բանը մութը մնաց. ուստի կառավարութիւնը, տեսնելով այդտեղ օրէնքի խախտում և ինքնահաճ վարմունք այլոց կեանքի դէմ, յանցաւոր ճանաչեց կառավարչին և բանտարկեց նրան։

—Ո՛հ, իմ այս անբաղդութեան պատճառը Վոամը եղաւ,—կրկնում էր յաճախ դժբաղդ կալանաւորը,—եթէ նա չը յուսահատեցնէր ինձ, ես ընդ միշտ հաստատուած կը լինէի իմ հայրենի քաղաքում, ուր և գնացի մինչև կեանքիս վերջին օրերը ապրելու. բայց նա, այն իժի ծնունդը, մոռացաւ ամեն բան, մոռացաւ այն ամեն բարիքը, որոնց ես չը խնայեցի նրան և իր հօրը, և իր ապերախտ վարուեցողութեամբ հեռացրեց ինձ իմ սիրած վայրերից և այստեղ հասցրեց։ Նա իր անզգամ հօր կտակն է կատարում. իժից իժ է ծնուելու։ Անողորմ Բրուտոս, դու յանդգնեցիր ձեռք բարձրացնել քո բարերարի վրայ։ Մթթէ մոռացար, երբ տրեխները հագիդ, խաչագող հօրդ փէշերից բռնած՝ մի առաւօտ հօրդ խաչագողութեան սայլակով իմ դռանը կանգնեցիր։ Ես պատսպարեցի ձեզ, ձեզ հետ եղած յանձնարարական նամակին ոյժ տուեցի իմ անթիւ. բարեկամների միջոցով, առանց որոց այդ նամակն ով գիտէ ինչի հարկաւոր լինէր։ Այո, ես այստեղ ընկայ, այնտեղ զարնուեցի և յանուն վեհ զգացմունքի, վեհ գաղափարի քեզ բարձրագոյն դպրոցի հիմնարկութեան մէջ սան դարձրի, հովանաւորեցի, որ ապագայում քո լրբութեան անարգ գաւազանը իմ վրայ փորձե՞ս. քեզ նետ դարձրեցի, որ քո սլաքները դէպի սիրտս ուղղէիր, հա։ Անաստուած. արդեօք ի՞նչ է լինելու քո վերջը...

Մինչ սա այսպէս մտածում էր, յանկարծ գիւղից ոչ հեռու ճանապարհի վրայ երևացին մի խումբ ձիաւորներ։ Խմբի առաջից հանդարտ գնում էր նրա հրամանատարը։ Ահա, նրանք հասան գիւղի այգիներին և խմբապետի հրամանի համաձայն վայր իջան ձիերից և անյայտացան այգիներում տիրող խաւարի մէջ։ Քիչ յետոյ այնտեղից դուրս եկաւ մի կարճահասակ մարդ երեք ընկերների հետ և բոլորը միասին ուղևորուեցին դէպի Գ... գիւղի բանտը։

—Տղերքը չեն քնել, մի՛ վախէք, ես նրանց խստիւ պատուիրեցի զգոյշ լինել և մեզ սպասել ու ձիերին լաւ կշտացնել, որ կարողանանք մինչ առաւօտ բաւականին ճանապարհ կտրել. իմ թառլանս չի խրխնջալ. ես նրան լաւ եմ պատուիրել։ Եթէ նա

զուռ մնայ, բոլոր միւս ձիերը կը հետևեն նրա օրինակին, առաջին անգամ չէ այս,—փսփսում էր իր ընկերներին կարճահասակը։

Վերջապէս, նրանք մօտեցան բանտին և կանգ առան։ Կարճահասակը մօտեցաւ գիշերապահին և ինչոր հասկացրեց նրան։ Գիշերապահը սկզբում գլուխը բացասական շարժեց, բայց երբ նրա կարճահասակ խօսակիցը բաց արեց իր համոզեցուցիչ լեզուն և ցոյց տուեց նրան իր ձեռքում եղած թղթադրամները, նա մեղմացաւ և համաձայնուեց նրա հետ։ Շուտով գիշերապահի թոյլտուութեամբ կարճահասակը մօտեցաւ բանտի լուսամուտին և թրըխկացրեց, իսկ նրա ընկերները բարձրացան բանտի տանիքը։

Կալանաւորը գլուխը բարձրացրեց և մնաց տեղն ու տեղը սառած՝ իրանից փոքր ինչ հեռու կանգնած էր Արթօն, որը հազիւ լսելի ձայնով փսփսալ սկսեց նրա հետ։

—Թորոս-բիձա, մի մտածիր, ես եմ. այսօր դու ազատուած կը լինես. քո լուսամուտի վերև այժմ մի ծակ կը բացուի. բարձրացիր լուսամուտդ և ձեռդ մեկնիր դէպի ծակը. այնտեղից քեզ դուրս կը հանեն և դու բարեկամներիդ շրջանում կը լինես. զգոյշ։

Կալանաւորը Գ... գիւղում ապրող Թորոս-բիձան էր, որի տանը իւրաքանչիւր տարի սահմանից անցնելիս, կամ այնտեղից գալիս ապաստան էին գտնում զանազան անցորդներ։ Ինչպէս տեսանք, նա ընկնելով նիւթական բարձրութիւնից, մայրաքաղաքից վերադարձաւ Բ... քաղաքը, իր հայրենիքը, սակայն Վռամի կապրիզներին չը կարողանալով դիմանալ, հեռացաւ այնտեղից և ապրում էր այդ գիւղում, կատարելով պղնձհանքի կառավարչի պաշտօնը, որի պաշտօնակատարութեան ընթացքում և բանտարկուեց։

Շուտով Թորոս-բիձայի գլխավերև ճիշտ որ առաստաղը ծակուեց, և սա ուրախացած իր ձեռքը մեկնեց դէպի այդ ծակը։ Մի երկու բոպէ ևս, նա արդէն տանիքումն էր։ Անծանօթները առաջնորդեցին նրան և Արթոյի հետ կորան խաւարի մէջ։

Մի ժամից յետոյ լսուեց գիշերապահի հրացանի պայթիւնը և հարայ տալը թէ՝ կալանաւորներից մարդ փախաւ։ Սկսուեց չտեսնուած իրարանցում բանտի մէջ, բայց ինչ. գիշերապահը Արթոյի ցոյց տուած ժամանակին էր հարայ տուել. ուստի վերջինս արդէն բաւականին ճանապարհ էր կտրել, այնպէս որ այլ ևս երկիւղ չէր սպառնում նրանց։ Անընդհատ արշաւելով, Արթօն երկու օրից յետոյ Թորոս-բիձայի հետ արդէն Տըրխ գիւղումն էր, ուր էին Սօնան և Վահէն անյուսալի վիրաւոր դրութեան մէջ։

—Ո՛հ, ինչ լաւ բան կը լինէր, եթէ սրան էլ փրկել կարո-

զանայի,—կրկնում էր հէքիմը, նայելով Սօնայի թուլացած դէմքին։

—Գուցէ բարին այս է, հէքիմ, չիք չարիք առանց բարեաց, —նկատեց նրան Թորոս-բիձան,—գուցէ դրա մահն է բարի. էհ, ինչ կարող ենք անել։

—Ո՛չ, ես ցաւում եմ հոգու բոլոր էութեամբ, որ այսպիսի անկեղծ սրտի տէր անհատներ շատ սակաւ են մեր դժբաղդ միջավայրում։

—Ճիշտ է։

—Խեղդել զաւակների, մարդկանց զգացմունքները, դա ծնողների գործ չէ, այլ հրէշների. սակայն, տարաբաղդաբար, այնպիսի հրէշներով տակաւին վխտում են մեր խաղաղ խրճիթները։

—Աւօյին, այ, հիմի պիտի էստեղ քաշ տալ, որ տեսնի իր աղջկան և հասկանայ թէ՝ ինչ է եղել իր արածը։

—Մթթէ կարծում էք, որ նա կը խղճահարուի։ Քանի-քանի այսպիսի օրինակներ են տեղի ունեցել. բայց մեր ծնող-գազանները գրեթէ սթափուելու նշաններ անգամ չեն արել։ Դեռ մի տարի չի անցել, ինչ մեր գիւղի Տանձոտենց Կարօյի աղջիկ Սանդուխտը ձգուեց իրանց ջրհորը և այնտեղ էլ իր մահը գտաւ, որովհետև հայրը նշանեց նրան առանց հարցնելու աղջկայ կամքը։ Երկու տարի չի անցել, ինչ Զ... գիւղացի Բոստանչոց Մակին պարանով խեղդամահ եղաւ, որովհետև հայրը պսակում էր նրան հասակն առած մի այրի վաշխառուի հետ։ Դեռ չեմ ասում Թոփանչոց Ծովելի, Կրճիենց Զարդարի, Զիթանցոց Անուշի, Գիւլօենց Փիւլի, Մուղսոնց Համասի մահը, որոնք միայն մեր գիւղումն են տեղի ունեցել այս քանի տարուայ մէջ և որոնց դիակները հազիւ-հազ են գտել մեր լճի միջից։ Բայց քանի-քանի այսպիսի գիւղեր կան, որոնց մասին մենք տեղեկութիւն անգամ չունենք։

—Էդ թուածդ զոհերի մասին ոչինչ չը գիտեմ. բայց այս թշուառ աղջկայ կորստեան պատճառը, գրեթէ, ամբողջովին Տրաթալամէն է եղել. եթէ նա խելքահան չանէր Աւօյին, դժուար թէ էդքան անսիրտ գտնուէր դէպի իր աղջիկը։ Դեռ սա մեռնում է, ազատւում է էս վէրան աշխարհի դարդերից. իսկ ինչ անեն նրա այն անթիւ զոհերը, որոնք մինչև իրանց կեանքի վերջը պիտի հեծեն խեղճութեան տանջանքների բովում։ Դրանցից, այդ անմեղ զոհերից, մէկն էլ ես եմ. ինչ անեմ ես. ինչ անէ իմ անբաղդ ընտանիքը. ինչ անէ վիրաւոր Վահէն, որը սրա մահից յետոյ, չը գիտեմ, ինչպէս պիտի կենդանի մնայ և եթէ կենդանի էլ մնայ, մթթէ կենդանութիւն կարելի կը լինի անուանել այն՝ այս անգնահատելի կորուստից յետոյ...

Սոնան մի քանի ջղաձգական շարժումներ գործեց. ապա ծանր-ծանր խռխռալ սկսեց. նա իր այդ ցնցումներով վերջին հրաժեշտն էր տալիս կեանքին։

—Ո՛վ, Վահէ, բուռն զգացմունքով ցանկանում էի քեզ խաչաղբէր լինել. սակայն ճակատագիրը այլ կերպ տնօրինեց քո ապագան։ Վաղը թերևս Սոնայիդ հետ գերեզման ուղարկեմ քո կեանքը, քո սիրտն ու հոգին։ Ինչու այդ դերը ինձ վիճակուեց, —կրկնում էր հէքիմը։

ԼԵՒՈՆ ԽԱՆՋԱՂԷ

(Կը շարունակուի)

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ [1]

Գլուխ ԺԱ.

Ծերակուտից գործն անցնում է Կայսերական խորհրդարանը, որ ի նկատի առնելով, նախ, որ Տէր-Գաբրիէլ քահանայի խոստովանութիւնը եղել է արտաքոյ դատարանի, երկրորդ, որ արծանագրութեան կազմելուն մասնակցել են ուրիշ անձերի թուում և Հայկական Մագիստրատի ստրեապչի Սիմեոնովը, առաջին դատաւոր Զէյթունեանը, որոնց գործողութիւնների վերայ, ներքին գործոց նախարարի ասելով, Խալիբն ազդեցութիւն է ունեցել, և, երրորդ, որ այն արծանագրութիւնը կազմած է առանց այդպիսի ակտերը կազմելու համար սահմանուած ձևերի—պակասում է մեղադրեալի ստորագրութիւնը—միւս կողմից էլ Պատկանեանցի գերեզմանոց գնալը՝ Իսմայիլցեանի հետ Կորչևսկու ուղարկած մարդուն տեսնելու համար, վերջնականապէս հերքուած չէ, քանի որ քննութիւն կատարելու ժամանակ ի նկատի առնուած չէ մի ամենակարևոր հանգամանք՝ Իսմայիլցեանին խուզարկելը, որին, մեղադրեալի ասելով, Կորչևսկին գրել է տոմսակներ փող ստանալու մասին, որովհետև եթէ գտնուէր, գոնէ, մի տոմսակ, արդէն իսկ գործը բոլորովին կփոխուէր, 1859 թուի դեկտեմբերի 7-ին իշխան Օրլովի նախագահութեամբ կայացած նիստում վճռուում է՝ փոխել ծերակոյտի դատավճիռը և քահանային թողնել խիստ կասկածանքի տակ, ենթարկելով նորան իւր հոգևոր իշխանութեան հսկողութեան։ Եւ այս գլխաւորապէս այն հիման վերայ, որ մէջ բերուած փաստերը մեղադրեալի դէմ բաւարար չէին, նամանաւանդ որ օրէնքը պահանջում է, որ «Որքան ծանր լի-

---

[1]) Լուսաւ. 1908 № 3—4.

նի մեղադրանքը, նոյնքան և զօրաւոր պէտք է լինին մեղադրեալի յանցաւորութեան ապացոյցները»։

Սորա հետ միասին արդարադատութեան նախարար կոմս Պանինը ի նկատի առնելով, որ հէնց սկզբից այդ գործի մասին տեղեկացրել էին Թագաւորին և Նորին Մեծութիւնը հրամայել էր Տագանրոգի քաղաքապետ Բրոնևսկու միջոցով Ռոստովի գաւառական դատարանին, որ խիստ հետևողութիւն անեն այդ գործին և հետևանքի մասին իսկոյն զեկուցանեն իրան, անհրաժեշտ է համարում խորհրդարանի վճիռը ներկայացնել բարեհաճ տնօրինութեան կայսեր, որ այդ վճռի դէմ ինքն իւր ձեռքով գրում է. «Եթէ նա այդքան ծանր յանցանքի համար մնում է խիստ կասկածանքի տակ, պէտք է, ուրեմն, զրկուի քահանայութիւնից» (12)։

1853 թիւը լինում է Խալիբի քաղաքագլխութեան վերջին տարին. նորանից յետոյ հետևեալ 1854, 5, 6 եռամեակի համար ընտրուում է քաղաքագլուխ Մանուկ Ալաջալեանը Ալաջալը տոհմից։ Դոցա նախահայրն համարուում է Ալաջալը Գրիգոր անունով մէկը, որ Դաւիթ-բէկին օգնութեան գնացած օնբաշիներից մէկն է եղել, որի թոռն Ալաջոյլու Խաչերեսը իւր ազգական Գէորգի ու Թովմասի հետ գաղթել է Ղրիմից Նախիջևան։ Ալաջալեանց տոհմը յայտնի է եղել դեռ Ղրիմում, իսկ գաղթականութեան ժամանակ նա հռչակուել է իբրև թշուառներին կարեկից և օգնող։ Երբ գաղթականները հասել են Սամար գետի ափը և այդտեղ վերահասել է նոցա Ռուսաստանի սաստկասառոյց ձմեռը և ցուրտը և վառելիքի ու կերակրի պաշարի պակասութիւնը և գետնափոր տնակների խոնաւութիւնը յառաջացրել են գաղթողների կարաւանի մէջ պէսպէս վարակիչ հիւանդութիւններ, որոնք սաստիկ կոտորած են սկրսել անել նոցա մէջ, այդ Խաչերեսն էլ միւսների հետ շատ օգնութիւն է ցոյց տուել թշուառներին, նամանաւանդ կարեկից է եղել խեղճերին նորա կինը Խատրնը, որ իւր հօր Հէքիմ Գրիգորի և Զէրբէդահայ բժիշկ Հէքիմ Կարապետի և նորա որդի Խաչատրի հետ միասին չի խնայել ոչ մի ջանք և աշխատանք բժշկական օգնութիւն հասցնելու հիւանդներին։ Ալաջա-

լեանները Նախիջևանում յաջող առևտրական գործառնութեամբ շուտով ճոխացել են և կազմել են մի բազմանդամ գերդաստան, մի անուանի նահապետական լաւ հայ օջախ։ Նոքա պատկանել են Խալիբեան կուսակցութեան և նոցա միջից յաճախ ընտրուել են հոգաբարձուներ, դատաւորներ, իրար յետևից երկու քաղաքագլուխ՝ վերոյիշեալ Մանուկ աղան և դորանից յետոյ նորա եղբայր Սիմէոն Խաչերեսեան Ալաչալեանը։ Այդ վերջինի քաղաքագլխութեան առաջին տարին, որ Պատկանեանցի բանտարկութեան չորրորդ տարին էր, 1857 թուի փետրուարի 13-ին, վախճանում է Ներսէսը անակնկալ մահով։

Կաթուղիկոսի մահով խորտակուում է Խալիբի յոյսը՝ տապալելու և իւր միւս հակառակորդ Միքայէլ Նալբանդեանցին, որ ոչ թէ միայն իւր վարժապետի ընթացքով էր գնում, այլև պատրաստուում էր շատ աւելի առաջ անցնել նորանից և շատ աւելի յետ թողնել նորան. նա էր եղել գլխաւոր պատճառը, որ Մատթէոս առաջնորդը յարուցել էր եկեղեցական գումարների հաշուետուութեան Խալիբի համար շատ անախորժ խնդիրը. նա էր, որ անդադար փորփրում էր հին, մոռացուած անցեալը և միջից ընտրում, հրապարակ նետում այնպիսի խնդիրներ, որոնք բոլորն էլ ցոյց էին տալիս հզօր աղայի գործած բազմադիմի ապօրինութիւնները, կամայականութիւնները և ճնշումները, ինչպէս «խօնախի» հոգևոր իշխանութեան դարձնելու խնդիրը. նա էր, վերջապէս, որ կամաց-կամաց մօտենալով Հայրապետեան հարուստ վաճառականին և շրջապատելով նորան իւր ընկերներով և համախոհներով, ձգտում էր նորան դիմադիր բանակի գլուխ կանգնեցնել։ Սակայն Խալիբն էլ այն մարդկանցից չէր, որ շուտով վհատէր և յետ կենար ասպարիզից։ Ճիշտ է, կաթուղիկոսի մահով նորա աչ թևը կտրուել էր, բայց նա ունէր հարստութիւն, որով կարող էր իւր կողմը քաշել թէ քաղաքացիներին և թէ իշխանաւորներին, չենք խօսում արդէն քաղաքի իշխանութեան մասին, որ գտնուելով իւր կուսակից Ալաչալեանի ձեռքին, ամեն բանում կարող էր նպաստաւոր լինել նորան։ Հէնց այդպէս էլ լինում է. նա մի առ ժամանակ հեռանալով ակներև գործելու ասպարիզից և թաղ-

նուելով Ալաչալեանի յետևը, ամբողջ երեք տարի—1857, 8, 9 —ղատարաստուում է և սպասում է յաջող բոպէի, մինչև որ գտնում է իրան օժանդակ Այվազեան Գաբրիէլ վարդապետին, որ հանդուցեալ հայրապետի ժամանակ մտել էր Հայաստանեայց եկեղեցու գիրկը, իսկ Մատթէոսի ընտրութեան տարին կարգուել էր Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմի առաջնորդութեան տեղակալ Մատթէոս Վեհապետեանի տեղը, որ կայսերական հրամանով տեղափոխուել էր Հաշտարխան: Այս անգամ ամեն բան խոստանում էր յաջողութիւն. Մատթէոս սրբազանը, Պատկանեանցի և Նալբանդեանցի դխաւոր կուսակիցը, չկար, նորընտիր հայրապետ Մատթէոսը, որ բռնել էր Ներսէսին հակառակ դիրք, չունէր իւր նախորդի ոյժը, այն ինչ Այվազեանը վայելում էր կայսերական շնորհքը և մեծ զօրավիգն էր Խալիբին:

Ճիշդ է, Սիմէօն Ալաչանեանից յետոյ, հակախալիբեան կուսակցութիւնը այնքան զօրանում է, որ 1860,61 և 62 թուականների համար ընտրւում է քաղաքաղլուխ վերոյիշեալ ջերմ Նալբանդական Կարապետ Հայրապետեանը, բայց ի՞նչ կարող էր անել նա, քանի որ գործը հասել էր ներքին գործոց նախարարութեան և տէրութիւնն անսահման հաւատ էր ընծայում Այվազեանին: Շատ շատ նա հիմնուելով օրէնքի և ճշմարտութեան վերայ, առաջ տանէր հաշուետեսութեան գործը, բայց աղատել կորստից Պատկանեանցին ու Նալբանդեանցին, որոնց դէմ լսել էին իւրեանց բոլոր որոգայթները Խալիբն ու Այվազեանը, նա չկիսի կարողանար: Երբ Այվազեանը դեռ 1858 թուին Պարիզից ժամանել էր Պետերբուրգ և Մոսկէս Բուդաղեանը մեծամեծ հացկերոյթ էր սարքել նորա պատուին և Ռափայէլ Պատկանեանցն այդ ճաշին դրուատիք էր կարդացել նոր հաստատուած առաջնորդութեան տեղակալին, հասարակութիւնը խնդրել էր նորան Պատկանեանցի համար, և նա խոստացել էր աղատել տալ նորան բանտից: Գաբրիէլ վարդապետի այդ խոստմունքի լուրը կայծակի արագութեամբ հասել էր Նախիջևան բանտարկեալի ականջը, և նա իւր մօտ էր հրաւիրել Հայրապետեանցին և աղաչել, որ հանդիսաւոր ընդունելութիւն տնեն

առաջնորդին և օգնեն նորան նորա ծեռնարկութիւնների մէջ։ Սակայն երբ Այվազեանը հասել էր Նախիջևան և ստացել եկեղեցական գումարները Խալիբից Թէոդոսիայում դպրոց բանալու համար, անակնկալ կերպով ամեն բան փոխուել էր. նա անցել էր Խալիբի կողմը և ոչ թէ միայն չէր օգնել Պատկանեանցին դուրս գալու բանտից, այլև եկեղեցում իւր քարոզի մէջ բաղմապիմի գորովանք էր թափել բանտարկեալի գլխին, ցոյց տալով նրան ըստ ամենայնի արժանի այն պատժին, որ կրում էր նա։

Կարապետ Հայրապետեանը, որ նշանաւոր դեր է կատարել Պատկանեանցի և դորա աշակերտ Նալբանդեանցի կեանքում, Ղարա-Մարդար կամ Նաւուրցի Մարդար Հայրապետեանի որդին էր։ Հայրապետեանները Ղրիմի նոր գաղթականներից էին. եկել էին նոքա թերակղզին ոչ Անիից, այլ Այրարատի Վաղարշապատից։ Ճիշդ է, Շահաբբասի արշաւանքի ժամանակ դոցա նախնիքն էլ շատ ուրիշների հետ միասին տարուել էին Պարսկաստան, բայց յետոյ նոքա վերստին վերադարձել էին Հայաստան և վերաբնակուել Վաղարշապատում։ Թէ ինչպէս է եղել դոցա նախկին ազգանունը, յայտնի չէ. Հայրապետեան կամ Հայրապետական անունը ստացել է դոցա նախնիքներից մէկը Ս. Էջմիածնի աթոռին և նորա գահակալ հայրապետին մեծ ծառայութիւն մատուցած լինելու պատճառով։ Երբ 1725 թուին լուր է տարածուում Հայաստանում Դաւիթ-Բէկի ապստամբութեան մասին, այդ Հայրապետեանի որդին Մկրտիչն էլ, որ այդ ժամանակները լինում է մի քաջ և խիզախ երիտասարդ, հաւաքելով իւր պէս մի խումբ կտրիչներ շրջակայ գիւղերից ու աւաններից, դիմում է Սիւնեաց գիւղացնի բանակը և մասնակցում նորա մղած պատերազմներին Մահմեդականների դէմ։ Սակայն Դաւթի և Մխիթարի մահից յետոյ, երբ ցրւում է բանակը և Ղրիմեցիք վերադառնալու են լինում իւրեանց երկիրը, Մկրտիչը հասկանալով, որ չպէտք է կարողանայ իւր արածներից յետոյ հանդիստ ապրել մահմեդականների իշխանութեան տակ գտնուած երկրում, միանում է իւր պատերազմակից ընկերների կարաւանին և գալիս, բնակում է Բախչիսարայում։

Այդտեղ դա մեծ չքաւորութեան մէջ է ընկնում և այնտեղն է հասնում, որ ստիպուած է լինում այգեպանութիւն անել Բարակաշեանների այգիներից մէկում, երբեմն էլ սայլապանութիւն։ Սորա որդին Արաբաջի Կարապետ Հայրապետեանը, որ գնած է լինում իւր համար մի այգի և իրան նուիրած այգեգործութեան, գաղթելու ժամանակ ստիպուած է լինում ծախել այգին և ինքն էլ գալ Ռուսաստան։ Այստեղ բաղդը ժպտում է Հայրապետեաններին և նոքա հետզհետէ առաջանում ու ճոխանում և առաջնակարգ մարդկանց շարքն են ընկնում։ Դոցա հարստութեան հիմք դնողը լինում է Կարապետի որդին Մարգարը, որ իւր երեսի թխութեան պատճառով կոչւում է եղել Ղարա Մարգար, իսկ Նաւուր աւանում երկար ժամանակ բնակուած և առևտուր արած լինելու պատճառով,—Նաւուրցի Մարգար։

Այդ Խարա Մարգարի որդի Կարապետ Հայրապետեանի քաղաքագլխութիւնը Նախիջևանի համար շատ արդիւնաւոր պիտի լինէր, եթէ չլինէին այն ինտրիգները, կագն ու կռիւը, որոնք բոլոր էին դրել հասարակութեան մէջ և չլատում էին ամեն մի եռանդ, ամեն լաւ գործի սկզբնաւորութիւն։ Եւ դորա, Հայրապետեանի, քաղաքագլխութեան արդիւնաւոր լինելու պատճառն այն չէր, որ ինքը Հայրապետեանը մի երևելի, հասկացող և բանիմաց մարդ էր, ոչ. նա էլ Նախիջևանի աղաներից մէկն էր իւր աղաներին յատուկ պակասութիւններով ու առաւելութիւններով, այլ որովհետև նա ունէր այնպիսի խորհրդատուներ, ինչպիսին էին Պատկանեանցը և մանաւանդ խելօք Նալբանդեանցը, որ լաւ էր հասկացել, թէ Նախիջևանի դժբաղդութեան պատճառը տգիտութիւնն է և դորա դարմանը լուսաւորութիւնը, դպրոցը։ Նա յարուցել էր եկեղեցական դումարների խնդիրը Նախիջևանում այդ փողերով մի մեծ և կանոնաւոր դպրոց հիմնելու վախճանական նպատակով, որ սակայն չյաջողեց, և դումարները տպարդիւն ծախսուեցին Թէոդոսիայի դպրոցի վերայ, նա նոյն նպատակով նահատակութիւն յանձն առաւ և գնաց Հնդկաստան Բարաչանի դումարը բերելու, բայց արժանի չեղաւ նորա արդիւնքը տեսնելու, պատուղը, վայելելու։ Ո՞րքան մեծ տարբերութիւն սորա և Այվազեանի

մէջ, որ հայութիւնից զուրկ մի խեղճ ու կրակ Թէոդոսիայում դպրոց հիմնելով և Նախիջևանի եկեղեցիների մեծաքանակ գումարները անիրաւաբար նորա վերայ ծախսելով, կամենում էր միաժամանակ և Ատծուն և մամոնային ծառայել։

Հայրապետեանի քաղաքագլխութեան առաջին տարին—1860-ին—բարեկամների ջանքով, վերջապէս, «վարժապետը» արձակուում է բանտից, եօթ տարի փակուած մնալուց յետոյ, որ չարաչար կատաղեցնում է Խալիբին, թէև Պատկանեանցի այդ ազատութիւնը եղել էր կարգընկէց լինելու պայմանով։ Նա միտքը դրել էր Պատկանեանցին անպատճառ աքսորել տալ Սիբիր իբրև քրէական յանցաւորի, ուստի և չէր խնայել ոչ մի միջոց իւր նպատակին հասնելու համար։ Դեռ առաջ Սիմէօն Ալաշալեանի քաղաքագլխութեան օրով, երբ Պատկանեանցը Ռոստովի գաւառական դատարանի և Եկատերինօսլաւի վճիռներով մի առ ժամանակ արձակուել էր բանտից, Խալիբը գործ էր դրել իւր սովորական հնարիմացութիւններից մէկը և նորան նորից բանտարկել տուել։ Երբ Ղրիմի պատերազմի ժամանակ անդլիական նաւերը յայտնուել էին Տաղանրոգի առաջ, կոմս Տոլստոյ նահանգապետի ընտանիքը փախել, եկել էր Նախիջևան և ապաստան գտել Խալիբի տանը, իսկ Տաղանրոգի ռմբակոծութիւնից յետոյ, ինքը կոմսն էլ փախել, հասել էր իւր ընտանիքի մօտ։ Հէնց դոյն օրերը եկել է եղել Ռոստով Եկատերինօսլաւի փոխ-նահանգապետ Հերցոգ-Բրանշուէյգը, որին և Խալիբի հետ այցելութիւն է գնացել Տոլստոյը, և այդտեղ խօսք է բացուել Պատկանեանցի բանտից ազատուելու մասին, Պատկանեանցի, որի մասին նոր միայն մի նոր բողոք էր ներկայացրել Խալիբի այրի դուստր Հռիփսիմէն, որ իբրև թէ Պատկանեանը բանտից դուրս գալուց յետոյ, վերստին ծեռնարկել է Խալիբին սպանելու գործին։ Նա իբրև ապացոյց ներկայացրել էր և մի երկաթի գործիք, որով իբրև թէ Պատկանեանցը կամեցել էր իւր ծեռնարկութիւնը կատարել և որ գտել էին Խալիբի պատուհանի տակ։ Նոյն իսկ օրը Խալիբը մի ճոխ ընթրիք է պատրաստել Տոլստոյի և Հերցոգի համար իւր տանը։ Երբ կերել, խմել ու հարբել են, Հռիփսիմէն ներկայացրել է պատրաստի հրաման՝ նո-

րից բանտարկելու Պատկանեանցին, և ծունկ չոքելով, աղաչել ու ստորագրել է տուել այդ հրամանը, որի հիման վերայ և կէս գիշերին կալանաւորուել է Պատկանեանը և բանտարկուել: Յետոյ միայն յայտնուել է, որ Տէր-Սիմէօնի որդի Տէր-Գաբրիէլն է այն երկաթի գործիքը Խալիբի սպասաւոր «դարաուլ Ստեփանիս» գիտութեամբ դրել պատուհանի տակ և Ստեփանն էլ, իբրև թէ գտել է, առել, տարել է ներս ու ցոյց տուել ամենքին, ի միջի այլոց, և կոմս Տոլստոյի կնոջը, և ասել, թէ Տէր-Գաբրիէլն է կամեցել այդ գործիքով խորտակել պատուհանը և մտնել ներս ու սպանել Խալիբին:

Պատկանեանցին բանտից արձակելուց առաջ, արքունի խորհրդարանը, երբ դեռ յայտնի չէ եղել կայսեր նորա կարգրնկէց անելու վճիռը, հարցրել է Այվազեանին, թէ որտեղ յարմար կլինի մի չորս-հինգ տարով քահանայ կարգել Պատկանեանցին—Ղզլար, թէ Մոզդոկ: Այվազեանն այդ հարցին մենակ չի վստահացել պատասխանելու. նա հեռագրել է Խալիբին, որ նա գնայ Թէոդոսիա խորհրդակցելու, և նա, չնայելով իւր անդրանիկ դստեր մահամերձ հիւանդութեան, գնացել է, և դուստրը վախճանել է: Նոքա պատասխանել են, թէ թո՛ղ նա հեռացուի դիճակից և արդելուի մի հեռաւոր վանքի մէջ. բայց խորհրդարանը, ինչպէս մենք տեսանք, արձակում է բանտից և հրամայում է կարգրնկէց անել Նորան, որ և կատարուում է Հոգևոր կառավարութեան մէջ բոլոր հոգևորականների ներկայութեամբ, Տէր-Աստուածատուր Շապոշնիկեանի ձեռքով: Պատկանեանցը այնուհետև ապրում է իբրև աշխարհական, նա հաւաքում է երեխաներ և պարապում է ուսուցչութեամբ, միևնոյն ժամանակ կատարելով և քաղաքապլուխ Հայրապետեանցի մօտ խորհրդատուի և անձնական քարտուղարի պաշտօն: Նոյն 1860 թուի Սեպտեմբերի վերջերին և Հոկտեմբերի սկզբին գալիս է Նախիջևան Այվազեանը և նկատելով ժողովրդի յուզմունքը, իւր առաջին քարոզի մէջ բնաբան է ընտրում՝ «Զի՞ հալածէք զիս» և երկրորդի մէջ՝ «Ես լոյս աշխարհ եկի, այլ գոյ ի մէջ ձեր վիշապ, որ մթով շնչմամբ կարէ շիջուցանել զամենայն զլոյս»: Այս խօսքերի վերայ ամենքը դառնում, նայում են Պատկանեանցի

վերայ, որ աշխարհական տարազով կանգնած էր ժողովրդի մէջ, և շարժում են գլուխները ու դուրս գալիս եկեղեցուց, այնպէս որ ինքը մնում է մենակ և ստիպուած է լինում վերջացնել քարոզը։

Սակայն Այվազեանը գտնում է միջոց Պատկանեացին աքսորելու և այդպիսով կատարելու Խալիբի ջերմ ցանկութիւնը. նա Շապուհիկեան Տէր-Աստուածատուր և Տէր-Եղիա հայր և որդի քահանաների ձեռքով ու միջնորդութեամբ կարողանում է կազմել տալ մի թուղթ, որի մէջ քահանաները վկայում էին, թէ Պատկանեանցի մնալը Նախիջևանում վնաս է քահանաներին, քաղաքին և ազգին։ Այդ թուղթը, որ քահանաները կազմում են 1860 թուի Սեպտեմբերի 27-ին և մատուցանում «Նորին Աստուածարեալ սրբութեան Տեառն Տեղակալի Առաջնորդութեան վիճակիս Նախիջևանի և Բեսարաբիոյ Գաբրիել Ծայրագոյն վարդապետի», խնդրագրի ձև ունէր և խմբագրուած էր հետևեալ կերպով. «Ըստ Բարձրագոյն Կայսերական վճռահատութեան, և ըստ եզրակացութեան Սինոդի սրբոյ Էջմիածնայ՝ դատապարտեալն արդէն վասն յանցանաց մարդասպանական գործոյ՝ զրկեալն ի քահանայութենէ Գաբրիել Պատկանեանց որ դասաւորեցաւ ի կարգս աշխարհականաց, զտանի այժմ աստ ի Նախիջևան քաղաքի և պարապի մանկավարժութեամբ ըստ իւրն կամաց։ Մեք ի վաղուց հետէ գիտելով և ճանաչելով զվատ վարս և զբարս նորա դեռ յաւուրս հանգուցեալ Ներսէս կաթողիկոսի, և ի յառաջնորդութեան Մատթէոս սրբազանի, որ բաղում անգամ գտեալ էր ի զանազան յանցաւորութիւնս անվայելս իւրումն կոչման թէ ի մէջ քաղաքական և թէ քրէական գործոց, և իւրով անհանգիստ բնութեամբ և խռովարար և չարարուեստ խորամանկութեամբ միշտ ապականեալ է և ապականէ զմիտս և զլսելիս պարզամիտ քրիստոնեայ ժողովրդոց՝ և միշտ հետևի հասուցանել վնաս մեզ հոգևորականաց միանգամայն և ամենից, ուստի ճանաչելով մեր զնոյն անձն վնասաբեր վասն որոյ առ ի բառնալոյ զդայթակղութիւն ժողովրդոց՝ և ի լրզդուշութիւն մեզ յապառնի վնասուց որք կարեն լինեն նովաւ՝ մնալովն այսր ի քաղաքիս։ Սորին սակս այսու

մերով միաբանական խնդրագրաւ դիմեալ առ Ձերդ սրբութիւն խնդրեմք խոնարհաբար՝ ընկալնուլ զայս խնդիր մեր և դնել ի գործ՝ հեռացուցանելով զչիշեալ Պատկանեանցն այլուր՝ յօտար սահման, զի եթէ մնասցէ նա այդպէս ի մէջ քաղաքիս՝ խռովութիւն ի միջի ժողովրդոց և հոգևորականաց լինելոց է անպակաս»։

«Նորին Աստուածարեալ Սրբութիւնը», յայտնի բան է, շտապում է այդ յոյժ փափագելի խնդրագիրը «դնել ի գործ» և դորա հիման վերայ Հայրապետեանը հրաւիրուում է Եկատերինօսլաւ և երկու անգամ հարցնում են հասարակութեան, թէ ի՞նչ վնաս է տալիս Պատկանեանցի մնալը քաղաքում։ Թէև ոչ մի բանով չի ապացուցուում նորա վնասակարութիւնը, բայց չորս մարդ Խալիբի կուսակիցներից թուղթ են մատուցանում, թէ քաղաքի և իւր իսկ Պատկանեանցի օգուտը պահանջում է, որ նա չմնայ Նախիջևանում։ Եւ այսպէս նա 1861 թուի Յուլիսին աքսորուում է Վեատկա, այնտեղից էլ դեկտեմբերին— Կոստրոմա և այդտեղից էլ, վերջապէս, 1863 թուի Օգոստոսին—Ս. Պետերբուրգ։ Մեծ ցնծութիւն է լինում Խալիբեան կուսակցութեան շրջանում, որ, վերջապէս, յաղթանակը տանում են և ազատուում «վիշապի» ձեռքից, որ մինչև շնչմամբ շիջուցանէր զլոյս բերեալն «ի Մխիթարեան ուխտէ», իսկ բուն հեղինակը այդ գործի ինքը Այվազեան ծայրագոյն վարդապետը այնքան հրճուում է, այնքան համբ նորա բերանումն է մնում, որ մի անգամ էլ նա կամենում է նոյն հնարագիտութիւնը գործ դնել և իւր միւս հակառակորդ Հայրապետեանի վերաբերմամբ։ Բարեբաղդաբար այս անգամ վարդապետի բերանի քաղցր համը անհամանում է։ Առաջնորդութեան Տեղակալի դրդմամբ և ակնարկութեամբ հաւաքուած անմիտ քահանաների շրջանում գտնուում է մի նորընծայ բանիմաց քահանայ, որ ինքը չի ստորագրում խմբագրուած նոր խնդրագրին և արգելք է լինում ուրիշներին ես ստորագրելուն, որով և հոգևոր հայրերի չար միաբանութիւնը քակտուում է [13])։

Վեատկայում Պատկանեանցը մնում է 1861-ի Յուլիսից մինչև նոյն թուի Դեկտեմբերը և փոխադրուում է Կոստրոմա,

որտեղ մնում է մինչև 1863 թուի օգոստոսը, երբ ուղարկուում է Ս. Պետերբուրգ։ Այդ երկու տարին, որ անց է կացնում Վեստկայում և Կոստրոմայում, լինում է, դուցէ, նորա կեանքի ամենադառն ժամանակամիջոցը, մինչև իսկ բանտարկութեան օրերից էլ դառն։ Բանտարկութեան օրերում նա, ճիշտ է, զրկուած էր աղատութիւնից, բայց, գոնէ, հեռու չէր իւր ընտանիքից, իւր բարեկամներից, որոնք յաճախ այցելում էին նորան, մխիթարում և լցուցանում նորա բոլոր պակասութիւնները, կարիքները։ Իսկ այստեղ, այս հեռաւոր անկիւնում նա կատարելապէս աչքից հեռացած, մտքից մոռացուած էր. չկար հայ բնակութիւն, որոնց շրջանում բարոյական բաւականութիւն գտնէր, չկար հայ եկեղեցի, որտեղ իւր հոգևոր կարիքները կարողանար հոգալ, զրկուած էր իւր մերձաւորների տեսութիւնից, որոնց կարօտը հալումաշ էր անում նորան, չենք խօսում արդէն նիւթական միջոցների սղութեան մասին, որ շատ դժուարութեամբ հոգում էին նորա աշակերտները և ծանօթները։ Ի զուր չէր, որ երջանկայիշատակ Մատթէոս կաթուղիկոսը փոխարքային ուղարկած իւր խնդիրքում Պատկանեանցի մասին գրում էր, թէ նա ամբաստանութեան թշուառ զոհ է, թէ նա ապրում է Վեստկայում և Կոստրոմայում իւր հաղուագիւտ քանքարի գնահատողների և աշակերտների հասցրած օգնութեամբ, հեռու իւր ազգականներից, անծանօթ մարդկանց մէջ, զուրկ իւր դաւանութեամբ խոստովանուելու և հաղորդուելու հնարաւորութիւնից, իւր ցաւալի վախճանին սպասելու դրութեան և իւր դաւանութեան չպատկանող քահանայի ձեռքով թաղուելու վիճակի մէջ. ի զուր չէր նոյնպէս, որ կաթուղիկոսը կարծում էր, որ այդ վիճակի մէջ նորա քանքարը կորչում էր ապարդիւն, որ նա զրկուած էր ընդհանրութեան օգուտ բերելու կարողութիւնից, այն ինչ եթէ նա ազատ լինէր, նա կարող էր մեծ օգուտ տալ իւր ազգայիններին իբրև ճարտարախօս քահանայ, իբրև բանաստեղծ ու դրող, իբրև հայոց լեզուն լաւ իմացող և առհասարակ իբրև գիտութեան տէր մարդ (14)։

Դեռ լաւ էր, որ նորան թոյլ էին տուել առնել իւր հետ

մի քանի դրքեր ու բանտում գրած իւր գրուածները. նա ազատ ժամանակ շատ ունէր և պէտք էր մի բանով զբաղուել։ Եւ ահա նա հէնց նոյն 1861 թուին Վենատկայում ձեռնարկում է կարգի բերելու իւր բանաստեղծութիւնները, պարզագրելու իւր սեպագրութիւնները։ Այդ ձեռնարկութեան և աշխատանքի արդիւնքը լինում է վերոյիշեալ «Հայկ-երգ»-ի, «Արամ-երգ»-ի, «Շաւարշ Ա. և Վարդենի»-ի, «Առնակ»-ի, «Կար»-ի, «Սօսիք Սրապիոնեան»-ի և «Վաշտակ»-ի սրբագրութիւնը և վերջնական խմբագրութիւնը, որոնցից առաջին հինգը աշխարհաբար են և գրած են ոտանաւորով, իսկ երկու վերջինը—արձակ են և գրուած են գրաբար։ Ցաւալի է միայն, որ այդ բանաստեղծական գրուածները, որոնցից մի քանիսը շատ ընդարձակ բաներ են, ինչպէս, օրինակի համար, «Հայկ-երգ»-ը, որ բաղկացած է 1710 տողից, և «Արամ-երգ»-ը, որ բաղկացած է 2400 տողից, դեռ մինչև ցայսօր տպագրուած չեն, ուստի և մեր ընթերցող հասարակութիւնը զրկուած է հնարաւորութիւնից կարդալու, ծանօթանալու և լիակատարօրէն գաղափար կազմելու Տէր-Գարրիէլի քնարի էութեան մասին։ Մենք, որ նոյնպէս միջոց չենք ունեցել կարդալու այդ գրուածները, կարծում ենք սակայն, որ գոքա էլ նոյն տեսակ բաներ պիտի լինին, ինչպիսին են նորա տպագրուած «Վարդան Մամիկոնեանը», «Շաւարշ Բ.»-ը, «Երեք յուպք Մասիսի», «Հրաժեշտ Վարդանայ», «Զարմայր», «Վահագն», «Մրմունջք Ցիսուսի» և միւսները։ Այստեղ մենք տեղն ենք համարում մի անդամ էլ շեշտելու այն, ինչ որ մի երկու տարի առաջ ընդարձակ քննութեան առարկայ ենք շինել մեր մի գրուածքում, խօսելով Սերովբէ Պատկանեանցի, Ալամդարեանի, Տէր-Գարրիէլ Պատկանեանցի, Խորէն Նարբէյի, Խրիմեան Հայրիկի և միւս դոցա դասակից և դոցա դպրոցին պատկանած գրաբար կամ գրաբառախառն-աշխարհաբառով գրած ու գրող և մեր մէջ բանաստեղծ համարուած գրողների մասին (15)։ Նայելով դոցա բանաստեղծութիւնների վերայ այժմուայ տեսակէտից և գործ դնելով դոցա վերաբերութեամբ բանաստեղծութեան մասին մեր ունեցած գնահատութեան այժմուայ չափն ու կշիռը, կարող ենք ասել, որ դո-

քա իսկապէս բանաստեղծներ չէն, այլ ոգեւորուած ճառախօսներ, արուեստաւոր յանդգնապէր, հնչուն խօսքերի ու ոճերի հաւաքաբաններ, երկարաբան, ճոռոմաբան, միտքը բառերի յորդութեան մէջ կորցնող, ախուվախով, աւաղ-եղուկներով ընթերցողի միտքը յոգնեցնող, և այլն և այլն։ Ի հարկէ արդարութիւնը պահանջում է ասել, որ դոցա գրուածների մէջ էլ պատահում են տողեր, հատուածներ, մինչև իսկ ամբողջ գլուխներ որոնք մաքուր ոգեւորութեան, վառ երեւակայութեան արդիւնք են, անարուեստ, սրտի խորքից բղխած պատկերներ և իսկական բանաստեղծութիւններ են, բայց մեր խօսքը այստեղ հատուկոտորի մասին չէ, այլ ամբողջութեան, դոցա քնարի ընդհանուր էութեան, բնաւորութեան ու բովանդակութեան մասին։ Ռուս Տրեդեակովսկու գրուածների մէջ էլ երբեմն պատահում են յաջող տողեր և կտորներ, բայց դորանով նա բանաստեղծ չի դառնում. նա միշտ եղել է և այժմ էլ շարունակում է մնալ ռուս գրականութեան մէջ արհեստաւոր-յանդգնապ բանաստեղծների տիպար և օրինակ։

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

(Վերջը հետեւեալ համարում)

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ [1]

ՐՕԶԵԳԷՐԻ

Վեցերորդ կիրակի

Անցեալ անգամ կանդ առայ աղջկայ դալու վրայ, այնպէս չէ՞։

Նրա լուսանկարը կախուած է սեղանատանդ։ Դու նրան «Սիկստինեան մադոննա» ես ասում, և ճիշտ որ Բարբելը մադոննա է, միայն առանց մանուկի։ Քաղաքում այսպիսի անձնաւորութիւնը անհաւանելի է։ Այնտեղ մարդկանց ադահ հայեացքները կզրկէին նրան այս անրմբռնելի հրաշագեղութիւնից և վաղուց արդէն նրա անարատ և հպարտ հոգին ստորացրած կլինէին։

Ես հեռուից ակնածութեամբ նայում էի նրան, որը երեք շաբաթուայ ընթացքում երեսուն բառ անգամ չի ասել ինձ։ Կարելի է արդեօք այսպիսի ուրախագին և ցնծալի գեղեցկութեան տէր լինել և այսչափ լուրջ ու ինքն իր մէջ ամփոփուած լինել։ Միմիայն հիւանդ եղբօր հետ է հանաքներ անում, նրան փաղաքշում։ Երբ Բարբելը եղբօր մօտ է լինում, նա նոյն իսկ իր ցաւն էլ է մոռանում, ծիծաղում և այնպիսի սիրով է նայում քրոջ երեսին, որ ինձ նոյն իսկ անախորժ է լինում տեսնել այդ։ Երեկ նա չոքեց մահճակալի առաջ, շոյեց եղբօր հիւանդ ձեռքը և քաղցրութեամբ ասաց.

—Խեղճ ձեռք. առողջացիր շուտով։ Մի լաւ բան կընծայեմ քեզ դորա համար։

—Իսկ դնդակը դուրս չի գալիս—հառաչեց երիտասարդը.

—Ուրեմն այդպէս էլ պէտք է։ Մարդս այնքան ոսկորներ

[1]) Լումայ 1909 № 2.

ունի, որ կարող է մի փոքրիկ կտոր արճճի ներկայութիւնն էլ տանել—կատակում էր նա։

—Բայց չէ՞ որ գնդակը մարմնի մէջ չպէտք է մնայ. մի առանձին օգուտ էլ չի կարող լինել նրանից։

—Մի վրդովուի, Բօխերլ. ամեն մարդ մի անպէտք բան ունի իր մէջ։ Մի վրդովուիր։

Եւ հիւանդի ցաւը աւելի թեթև երևալու համար պատմում է նրան մարդկային զանազան չարչարանքների մասին։

Սակայն անցնենք ուրիշ գործերի։ Օրերս, Տեառնընդառաջի տօնի օրը, բոլորեքեան ներկայ էինք հանդիսաւոր ժամերգութեան։ Ուսուցիչը մոմը ձեռքին օգնում էր քահանային։ Այս մարդը մի բան ունի իմ դէմ։ Բայց ի՞նչ։ Երբ մեր հայեացքները հանդիպեցին իրար, ես բարևեցի, բայց նրա հայեացքը չփայլեց սիրալիրութեամբ։

Տանտէրս ասում է, որ «ջանասիրութեամբ եմ աղօթում»։ Այն էլ ես, որ սովոր եմ երեկոները անցնել ուրախ, սանձարձակ ընկերակցութեան մէջ, պանդոկում կամ սրճարանում։ Այժմ ես նոյն ժամերին պարտաւոր եմ չոքել և գիւղացիների հետ միասին աղօթքներ մրմնջալ։ Փորձիր պատկերացնել քեզ այս տեսարանը։ Բայց ոչ, դու չես կարող այդ անել, չափազանց աննախանձելի պատկեր է այդ։ Հասարակ օրերը աղօթքը մօտաւորապէս քառասուն բոպէ է տևում. տօների նախընթաց երեկոները—համարեա ամբողջ ժամ։ Եւ հաւանօրէն դորա համար կներուին ինձ իմ հին մեղքերս—իսկ նրանք քիչ չեն։ Բայց ոչ աղօթքի կամ չոքելուս, այլ այն ոյժի, որ ես գործ եմ դնում ինձ խեղդող ծիծաղը զսպելու համար։ Պատահե՞լ է քեզ լսել երբևիցէ թէ ինչպէս են աղօթում գիւղացիները։ Իսկապէս այդ քրթմնջոցի մէջ կոմիքական ոչինչ չկայ. բայց քաղաքացուն համար թեթևամիտ և անհամբեր ոչոք չկայ։—Միմիայն հեգնեակ սկսեցի հասկանալ, որ հոգսերով ծանրաբեռնուած այս մարդիկ աղօթքի ժամանակ թեթևացնում են իրանց վիրաւոր սիրտը։

Երբեմն ամենքն էլ կատարում են «աղօթիր և աշխատիր» պատուիրանը բառի բուն նշանակութեամբ, իրագործելով թէ մէկը և թէ միւսը միաժամանակ։ Սաղմոս կարդալու միջոցին

հայրը ուղղում է չամը, մայրը կերակուր է պատրաստում, Բարբելը մանում է, Ռոխերլը և Ֆրանցելը մաքրում են լոբին, որ միւս օր նաշին եփած կմատուցանեն։ Իսկ վարձուո՞ր։ Նա նոյնպէս նստած է թուրքի նման, մի որև է բան է շինում և աշխատում է ծածկել, որ լաւ չէ յիշում նոյն իսկ «հայր մեր» աղօթքի բառերը...

Բարեպաշտութեանս համար ներում է ինձ աշխատանքի անհմտութիւնը. սակայն ծերունին արդէն մի քանի անգամ բարեսրտութեամբ յանդիմանել է, որ երեսս չեմ խաչակնքում ոչ նաշից առաջ և ոչ յետոյ, որ պատառաքաղը ձախ ձեռքին եմ պահում, որ արգանակը ընդհանուր ամանից չեմ ուտում, այլ նախօրօք առանձին ափսէի մէջ եմ վերցնում, որ տօն և հասարակ օրերին միևնոյն զգեստն եմ կրում, որ ամեն օր սապնով եմ լուացւում և մինչև անգամ ատամներս խոզանակով եմ մաքրում։ Պառաւը ուելի խիստ է վերաբերւում։

—Լսիր, Հա՛նս,—ասաց ինձ այս օրերս—դու քո վատ սովորութիւններով երեխաներիս կփչացնես. չէ որ նրանց վատ օրինակ ես տալիս։ Եթէ երբեւիցէ Ֆրանցելը այդպիսի ատամի խոզանակ ձեռք բերի, կարող ես քեզ համար ուրիշ տեղ որոնել։ Ես չեմ կարող տանել այդ։

Ես չեմ ուզում անբաւականութիւնների պատճառ դառնալ և կարծում եմ որ առանց ատամի խոզանակի էլ կարող եմ ապրել։ Ծերունին առաւաւոտ ատամները մաքրում է շորով, մաղերը սանրում մատներով, խմելու համար ջուրը ջրհորից հանում է դլխարկով, կամ ուղղակի խմում բռնից։ Նրանց կոր ծիքով, ամեն ինչ. ունին և ոչնչի պակասութիւն չեն զգում։ Երբ գիւղացին կարիքի մասին խօսեց, դա նշան է որ սովից մեռնում է։ Մարդս ոչ մի պահանջ չունի, թէ բնական դրութեան և թէ քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանի վրայ։ Իսկ թէ այդ երկու աստիճանների միջև ինչ է կատարւում—Աստուած հեռու պահէ։ Բարեկիրթ մարդու ամեն մի ցանկութիւնը իրագործուելու վայրկեանին առաջ են գալիս մի դիւժին նոր ցանկութիւններ և բոլոր այդ ցանկութիւնները հնարաւորութիւն չեն տալիս նորան զուարճանալու։

Ցիշում եմ որ երբեմն գրում էի թէ ցանկութիւնների բացակայութիւնը բարբարոսութեան նշան է և թէ որքան բարձր է քաղաքակրթութիւնը, այնքան շատ են ցանկութիւնները։ Այժմ ես այլ կերպ եմ մտածում։ Նրանում չէ կայանում արդեօք բարձր քաղաքակրթութիւնը, որ մարդս գիտէ զուարճանալ և զրկանքներ չի զգում. որ նա կարողանում է այնպէս կարգաւորել իր ցանկութիւնները, որ առանց հոգու հանգստութիւնը կորցնելու և ոյժի չափազանց լարումի կարողանում է բաւարարութիւն ստանալ։ Արուեստգիտութիւնից առաջացած անբնական ցանկութիւնները անբաւարարութիւն են առաջ բերում։ Ինչու համար են մարդուս զանազան տպաւորութիւններ ընդունելու հազարաւոր զգայարաններ, զուարճութիւնների համար հազարաւոր սրտեր, երբ միշտ բաւական է երկու ձեռք աշխատելու և մէկ սիրտ զուարճանալու համար։ Կատարեալ մարդը ոչինչ չունի, սակայն ամեն ինչ նրան զուարճացնում է։ Ով կարող է հանգստանալ ամեն մի գերանի կամ դեռնի վրայ, ինչպէս գահաւորակի վրայ, նրա համար ամբողջ աշխարհը լիքն է գահաւորակներով։ Ով աղբիւրի ջուրը խմում է նոյնպիսի բերկրանքով, ինչպէս և ամենարնտիր Եօհաննեսբերգեր, այդպիսի մարդու համար ամեն սարից բէյնվէյն է բղխում։

Եւ այս ամենը քեզ ասում եմ ես—մի մարդ, որ ներկայ բոպէին եռխութեամբ չէ շրջապատուած, այլ ծանր զրկանքներ է կրում։ Երեկ, սարսափելի գիշեր անցնելով, մտադրւում էի արդէն իրերս կապել և փախուստի դիմել, բայց երբ սոյն նպատակով մօտեցայ դրան, մտածեցի որ այդ միշտ էլ կարելի է հեշտութեամբ անել։ Կարող եմ դնալ հէնց այս բոպէիս, կամ մի ժամից յետոյ, վաղը, միւս օր։ Եթէ ինձ ստիպէին մնալ, այս կեանքը ես չէի կարող տանել։ Բայց ինքնայօժար կամքով, հասկանալով իմ ազատութիւնը— այդ ուրիշ խնդիր է։ Եւ իմ կապոյը դարձեալ պահարան դնաց։ Հանաք բան չէ աշխատանքը։

ՀԱՆՍ

Եօթներորդ կիրակի

Ինչ ես անում դու գիշերուայ ժամը երեքին։ Ենթադրում

եմ որ այդ ժամին տուն ես վերադառնում պարահանդէսից, կամ հիւրանոցում բելեարդ ես խաղում. եթէ ոչ պառկած ես լինում անկողնում և որև է յայտնի հեղինակի մտքի արտադրութեան օգնութեամբ պատրաստում ես քաղցը քնելու։ Իսկ ինձ այդ ժամին տանտէրը փայտով բաղխում է պատը թէ ժամանակ է վերկենալու։ Սկզբներում շատ տրագիքական կերպով էի վերաբերում դրան և այնպէս էի վերցատկում յարդէ անկողնից, կարծես հրդեհի լինէի շտապելիս։ Այժմ թողնում եմ բարի Ադամին զարնելու երկու, երբեմն և երեք անգամ։ Երեկ նոյն իսկ ծայն տուեց նա «Հանդել, արդէն վաղուց ժամանակ է վերկենալու»։

Ժամացոյցս չորսի քառորդն էր ցոյց տալիս։

Ցրտին ամենևին ուշադրութիւն չեն դարձնում։ Տաք արգանակ (դեղչկական սուրճ) տալիս են միմիայն Ադամի, պառաւի և Բարբելի հետ ամբողջ երեք ժամ վարսակ կալսելուց յետոյ։ Այդ աշխատանքը համեմատաբար աւելի թեթև է նախկին թղթակցիդ համար։

Բարբէլը կարող էր զոռողութիւնը մի կողմը թողնել. ճշմարիտ է ես խեղճ, եկուոր վարձկան եմ, բայց չէ՞ որ եթէ ինձ անունով կանչէր, անմիջապէս սէր չէի խոստովանի նրան։ Նկատում ես, որ դրիչս անընդհատ միևնոյն հարցին է դառնում։ Մի՞թէ վէպի սկիզբ է սա։ Ի՞նչ կասես։

Դատարկ բաներ են, ժամը վեցին Ռոխերլը շուացնում է նախաճաշի հրաւիրելով մեզ։ Որովհետև նա կալսել չի կարող, մեզ համար տանը սուրճ է պատրաստում. այսինքն բոված հատիկները եփում է ջրի մէջ, աւելացնելով իւղ և չամանի։ Իսկական սուրճ երազում էլ չեն տեսել։ Գուցէ դու կարծում ես թէ թարմ կաթ եմ ստանում այստեղ։ Այդպէս չէ. էլի փառք Աստծու, եթէ մի ամբողջ շաբաթ ներքնատանը մնացած և երեսը քաշած կաթ տեսնեմ։

Նախաճաշից յետոյ ես գնում եմ եղների մօտ, Բարբելը կովերի, իսկ Ռոխերլը ոչխարների մօտ։ Տաւարը կերակրում են օրը երկու անգամ. ջրի համար տանում են ջրհորը, որի երեսի սառոյցը ծերը նախօրօք մաքրում է։ Պառաւը կրտսեր որդուն դպրոց է ուղարկում։ Այնուհետև մին-

չև ճաշ շարունակ կալսում ենք։ Ճաշը բաղկացած է լինում վերևը չիշած կաթնով պատրաստած հացի արդանակից, մանրացրած կաղամբ ճարպից, հանարի նկանակից ապխտած մսով։ Առողջարար կերակուր է. իսկ ինչ խոհարարական արհեստի է վերաբերում... բայց լաւ չէ մարդկանց ետևից բամբասել։ Բոլորեքեան դանդաղ և համեստութեամբ գդալները իջեցնում են ընդհանուր ամանի մէջ. ոչ ոք չի աշխատում ուրիշից աւելի ստանալ։ Ամեն տեղ գիւղացիների մէջ նկատել եմ այդ սովորութիւնը։ Վատ չէր լինի եթէ նրանցից օրինակ առնէինք։

Ճաշից յետոյ—դարձեալ կալսել, պէտք է մինչև պասը վերջացնել։ Վարսակով տերը կերակրում է խոզերին, կամ ծախում, կամ թէ պահում ապագայի համար։ Երեկոյեան Բարբէլը գնում է կովերի մօտ և փարախից լսում է թէ ինչպէս է կաթը թափւում կաթսայի մէջ։ Երեկոյեան բոլորեքեան հաւաքւում են օջախի շուրջը և զանազան մանր աշխատանքներով զբաղւում։ Ես պէտք է նորոգեմ յարդէ աթոռների ոտները, ուղղեմ և սրեմ դանակները, կարեմ փոկը, կարդի բերեմ դռան կաթները և այլն։ Ամաչում եմ անդործ նստել, երբ միւսները աշխատում են։ Առաջ, դինուորական ծառայութեանս ժամանակ, կամ խմբագրատանը, ես երբէք չեմ ամաչել... Այնուհետև դաւիս է ընթրիքը—գեղանախնձոր, շաղգամ, ալիւրէ սպաս. յետոյ աղօթքը, իսկ ուրբ ժամին, երբ քաղաքի բնակիչները նոր են սկսում շարժուել, մենք պարկում ենք քնելու։ Կիրակի օրերը, անասուններին կերակրելուց յետոյ ամենքը գնում են եկեղեցի, իսկ ես կամ շրջակայքումն եմ թափառում և կամ քեզ գրում։

Գեղջուկը աշխատանքի մէջ աղնիւ է, բայց առևտրի մէջ, ինչպէս օրինակ անասունների վաճառման ժամանակ, գիւղացիները (որոնց թւում և իմ Ադամը) աշխատում են ամեն կերպ իրար խաբել։ Այս չպէտք է մեզ զարմացնէ, որովհետև ամեն տեղ էլ այդպէս է լինում։ Իսկ զարմանալին ահա թէ ինչն է. սարի ծեր գիւղացիները չգիտեն թէ աշխարհիս երեսին ինչ է կատարւում։ Բայց և այնպէս Հոյդենդորֆի պանդոկում վիճաբանում են քաղաքական խնդիրների մասին։ Օրինակ, ռուսները գալիս են մեզ վրայ, նրանք մեծ քաղաքները տանել չեն

կարող և ուզում են այրել այնպէս, ինչպէս երբեմն այրել են իրանց մայրաքաղաք Մոսկուան. հրէաներին կը չարդեն, իսկ նրանց փողերը կբաժանեն աղքատ գիւղացիներին։ Չինացիներին էլ կկոտորեն. նրանց մազերից Պրուսիայի կայսրը մտրակներ շինել կտայ յեղափոխականներին ծեծելու համար։ Սակայն Հռոմի պապը արգելել է պատերազմել։ Եթէ մի տէրութիւն պատերազմ յայտարարի, միւս բոլոր տէրութիւնները կմիանան նրա դէմ։ Գիւղացիները սաստիկ ատում են «մեծ աւազակ» Նապոլէօնին։ Իրանց ամբողջ յոյսը Յովսէփ II կայսրն է, որ քնած է քարայրի մէջ և որ կարթնանայ երբ կեռասենին նոր տարուրեան ծաղկի։ Ալմգալի բնակիչները աւելի հետաքրքրուում են նոր գիւտերով և յայտնութիւններով։ Հեռագրաթելը նրանք երևակայում են հասարակ զանգակի ձևով, եթէ զանգը Զալցբուրգում քաշեն, ձայնը Վեննայում կլսուի։ Շանթարգելը մագնիս է և կայծակները դէպի իրան է քաշում։ Քաղաքներում կայծակները շանթարգելով քաշում են մի մեծ շինութեան մէջ, որից ստացւում է էլեքտրական ոյժը։ Կան և արագընթաց գնացքներ, որոնք «կայծակ» են կոչւում, նրանց կայծակները քաշում են իրանց ետևից, սրանք էլեքտրական գնացքներն են։ Ամերիկայում շատ ոսկի կայ, բայց այնտեղ կարելի է գնալ միայն շոգենաւով։ Շոգենաւերը երկաթից են, բայց չեն խորասուզւում, որովհետև գոլորշին նրանց ջրի երեսին է պահում։ Ահա թէ ինչեր են անցնում մտքով, երբ ծեռքերն աշխատում են։ Դէպի ունևորները մինչև այժմ ոչ մի թշնամութիւն չեմ նկատել, թէպէտ և նրանց մասին շատ են խօսում։

Բայց քունս տանում է և հրաժեշտի փոխարէն «բարի առաւօտ» եմ ցանկանում քեզ։

ՔՈ ՀԱՆՍ

Ութերորդ կիրակի

Ուրախ եմ, որ նամակներս բաւականութիւն են պատճառում քեզ։ Գրում ես որ բաւական նոր և խրատական բաներ եմ հաղորդում, որ անկեղծ հետաքրքրութեամբ պատրաստ ես ամբողջ տարի լսել սրտիս զեղմունքը և խոստանում ես միշտ

հաւատարիմ ընկեր լինել ինձ։ Եթէ գիտենաս, բարեկամ, թէ որքան արիութիւն է տալիս ինձ այդ ամենը։ Տարագրի զգացումը շատ սակաւ եմ զգում այժմ, թէպէտ բարկութիւնս դէպի «Կոնտինենտալ փոստի» հրատարակիչը և աշխատակիցները աւելի և աւելի մեծանում է։ Բայց չէ՞ որ ոխն էլ ոյժ է։ Երևակայեցէք ես երբևիցէ, որ ոխը, զայրոյթը և ատելութիւնը աւելի շատ բարիք են ծնում քան սէրը։

Անցեալ շաբաթ մի ծանր օր անցրի։ Պէտք էր ծառ կտրելու համար անտառ գնալ, որովհետև փայտերս քչացել էին։ Ուրբաթ օր էր. ժերը գնաց չրաղաց, իսկ ես Բարբելի հետ պէտք է անտառ գնայի։ Ոխերը չի՞ ուղեկցի մեզ, հարցրի ես եկեղոտութեամբ.

—Իսկ ինչի համար է պէտք ձեզ Ոխերը, կուղենայի իմանալ.—կտրուկ կերպով պատասխանեց մայրը—մենակ էլ լաւ կարող էք մի երկու ծառ կտրել։

Գնացինք։ Ես տանում էի կացինը, սեպը, իսկ աղջիկը—երկու կոթով լայն սղոց։ Ձիւնը խորն էր, մինչև ծնկները մտնում էինք նրա մէջ։ Ես գնում էի առաջից, Բարբելը ետևից։ Ոչ մի խօսք չէինք ասում։ Մեր շորերը կպչում էին թփերին, որոնցից ձիւնը թափւում էր երեսներիս։ Ծառի վրայ կանչում էր չարթը։

Գնում ենք տափարակ տեղ, ուր կանգնած են ծառերի մերկ ընները, որոնց գագաթները և ճիւղերը անցեալ ձմեռ կտրել են չորացնելու համար։ Այսպիսի ծառերից մէկին մօտեցնում ենք սղոցը, ես բռնել եմ մէկ կոթից, նա միւսից։ Բայց գործը առաջ չի գնում. նա բացատրում է թէ ինչպէս պէտք է բռնել սղոցը, ինչպէս սղոցել, բայց իզուր. պողպատէ ատամնաւոր ծողը տեղից չի շարժւում։ Փորձում եմ հանաքներ անել, բայց այդ էլ չի օգնում։ Նա մի անգամ էլ հանդարտութեամբ բացատրում է թէ ինչպէս պէտք է անել։

—Շատ հասարակ կերպով,—ասում է նա—փոքրիկ Ֆրանցելի հետ ամենամեծ ծառեր էլ ենք կտրել. դու մի քիչ դանդաղ ես, հանգել, բայց ոչինչ։

Ոհ, ընկեր, ինչպէս ամաչում էի։ Մասնագիտական ուսումս,

նոյն իսկ Ֆրանսիերէն լեզուն ուրախութեամբ կտայի միայն թէ սղոցել գիտենայի։

—Ամենևին հարկաւոր էլ չէ այս անպիտան սղոցը—ասում եմ ես։ Կացնով էլ լաւ կկտրեմ ծառը։

Վսեմաշուք կերպով բարձրացնում եմ կացինը, ինչպէս հին դերմանացին Տևտոբուրգեան անտառում, և այնպիսի ոյժով զարնում ծառի բնին, որ Բարբելը պէտք է յետ թռչի, այլապէս տուշեղները կդիպչեն նրա երեսին։ Թող տեսնի թէ ինչպիսի նախնական մարդ է թաղնուած իմ մէջ։

Բայց յանկարծ չարաճճին սկսում է ծիծաղել։ Նա ծիծաղում է ինչպէս արծաթէ զանգակը, եթէ միայն իսկական արծաթէ զանգակը կարող է ծիծաղել։

—Եթէ սպասելու լինենք, որ դու կացնով՝ վառարան վարելու համար փայտ կտրես, ջուրը կսառի կաթսայի մէջ, և մեր քթերի տակ պաղլուլակներ կգոյանան։

—Ինչ է որ, պատասխանեցի. ես արդէն վարժուել եմ ցրտին. կան մարդիկ, որոնք տաք վառարանի մօտ կարող են մարդիկ սառցնել։

Նա յուզուած նայում է ինձ, չդիտենալով ինչպէս բացատրել խօսքերս. իսկ ես հեգնելով համոզում եմ, որ սոճի ծառը դէպի միջուկը աւելի և աւելի է ամրապնդում։

—Մի անգամ էլ փորձենք սղոցել—առաջարկում է նա. դարձեալ երևում է որ անկարող եմ այդ գործը կատարել...

—Գիտես ինչ, Հանզել,—յանկարծ ասում է նա—կարծում եմ որ աւելի լաւ կլինի թողնենք այս և վերադառնանք տուն։

Խնդրում եմ, սիրելի ընկեր, այրիր այս նամակը։

Ցիշեալ անյաջողութիւնից յետոյ ամբողջ գիշեր և օրուայ կէսը անբաղդ էի զգում ինձ։ Սակայն բաւ է, աւելի լաւ է ուրիշ դէպքի մասին պատմեմ։

Առաւօտեան ծերունին մտաւ գոմը և բացականչեց.

—Հանզել, այս ինչ է։ Ո՞րտեղից է այս օտար անասունը փարախ մտել։

—Օտար անասո՞ւն, ի՞նչպէս։

—Ահա այնտեղ մի խայտաբղէտ ցուլ է կանգնած։ Տէր

Աստուած, ո՞ւր է մեր դեղին մոզին։ Ո՞րտեղ է եղը, Հանդէլ։

Լապտերը ծեռիս մօտեցայ և տեսայ բոլորովին օտար՝ մէջքին սև բծերով մի մոզի։

—Իսկ դեղին մոզին անյայտացել է։ Երկար ժամանակ է տնտեսութեամբ եմ պարապում, բայց երբէք այդպիսի բան ինձ չի պատահել։ Եթէ այսքան էլ չի կարելի քեզ վստահանալ, որ աչքիդ առաջից կարող են անասուններ գողանալ...

Ծերունին չվերջացրեց, չուզենալով վիրաւորել ինձ։ Ցանկարծ այդ վայրկենին հասկացայ թէ բանն ինչումն էր։

—Փարախում, դուրս ցցուած տեղը թանաք եմ պահում, որ չսառի։ Երևի գիշերը կատուն կամ մուկը շուռ են տուել դեղին ցուլի մէջքին։

—Ասում ես թանաք է այս, — ասաց Ադամը։ Ցիմար բաներ մի ասի. ո՞րտեղից կարող է թանաքը փարախն ընկնել։

Արդէն ստիպուած էի խոստովանուել, որ նամակներ եմ գրում։

—Նամակնե՞ր ես գրում։ Մի՞թէ պառաւ մայր, կամ մի որև է մէկը ունիս։

—Տանտէր, ասացի ես,—այժմ գնանք մոզին լողացնենք։

Ամբողջ առաւօտ լուանում էինք մոզին տաք ջրով և մոխրաջրով, մինչև որ բծերը մաքրուեցան։

Թանաքն արգելուած է գիւղական ընտանիքներում։ Տպարանական թանաքի դէմ էլ հալածանք կայ։ Ասում են՝ աղքատութիւն և սով է տիրում այնտեղ, ուր սկսում են քիթը գրքերի մէջ կոխել...

Ինն երորդ կիրակի

Երեկ ճաշից յետոյ տանտիկինը պարզապէս հասկացրեց, որ կարող է ինձ արձակել։

Բայց ոչ թէ դեղին մոզիները խայտաբղէտ դարձնելու համար, այլ նրա համար որ միրուքս երկարացրել եմ։ Եթէ չեմ կարող քրիստոնեայի պէս օրինաւոր պահել ինձ, աւելի լաւ է ասեմ թէ որքան է հասնում ինձ մի քանի շաբաթուայ աշխատանքիս համար։ Արդէն դարուն է սկսում և հեշտութեամբ կարելի է ուրիշ տեղ գտնել։

Ուզում էի ասել թէ վարձատրութեան մասին խօսք չի կարող լինել։ Եթէ ծրի հարկաւոր չէի, ի՞նչքան պէտք է վճարէի նրանց մօտ վարձուոր մնալու համար։ Բերանս արդէն բացել էի, երբ յանկարծ սթափուեցի.— այդ խօսքերով միայն կասկած կյարուցանէի և գործը աւելի կփչացնէի։ Պէտք էր սորուկի պէս հնազանդուել։

Եւ վարձուոր հանդելը խոնարհութեամբ ասաց, թէ ոչ մկրատ ունի և ոչ էլ ածելի և թէ՝ ոչ խուզել գիտէ և ոչ ածիլել։ Եթէ երկար մազերս դուր չեն գալիս տանտիկնոջ, թող ինքը պոկէ։

Նա ծիծաղեց. անկարելի է սրա վրայ բարկանալ. միշտ զուարճալի հանաքներ գիտէ անել։ Հայր, երեկոյեան եթէ ազատ լինես, կարիր հանդելի այդ բուրդը. ոչխարների և խոզերի մկրատով կարելի է այդ անել...

Լսում ես, փիլիսոփայ։

Երեկոյեան մարմնական պատժի ենթարկուեցայ։ Ցոյս ունէի, որ ծերի շնչարգելութիւնը կսկսուի, բայց իզուր։ Պէտք է նստէի ցածր եռոտանու վրայ։ Իմ դեղեցիկ, բարակ, շագանակագոյն մազերը, որ դու անցեալները մինչև անդամ երդեցիր բանաստեղծութեանդ մէջ, շուտով ընկան բարբարոսի ոտերի մօտ։ Պառաւը հաւաքեց և պահեց կտուրի տակ։ Ասում են որ սա նշան է և սրանով մարդ լաւ յիշողութիւն է ունենում։

Հերթը հասաւ միրուքին. ժանդոտուած մկրատը պոկում և չարչարում էր միրուքս, իսկ գլուխս ծերունին ամուր պահել էր իր ոսկրոտ ծնկների մէջ։

—Հանդել,— ասաց յանկարծ ծերը բեղերիս մի ծայրը բռնելով,— ամառը, երբ հունձի ժամանակը դայ, կմնաս մեզ մօտ։ Ասա, չե՞ս գնա։

Հանդիսաւոր կերպով խոստացայ մնալ։

—Լաւ, այդ դէպքում բեղերդ կթողնեմ։

Այսպէս ուրեմն միրուքովս երդուեցի, որ այս փորձառութիւնը մինչև վերջը կը տանեմ...

Երբ մազերիս խուզելը վերջացաւ, բաց արի դէպի խրճթի

դերսը բացուող պատուհաններից մէկը, որի ապակու եաւը սև պատ կար։ Այստեղի հայելին է սա։ Եւ ես ինքս ինծանից վախեցայ։ Չես կարող երևակայել թէ ինչի նման եմ դառել։ Երբէք չէի կարծի, որ գեղեցիկ մրրուքս, պսպիսի զարդելի դէմք է ծածկում...

«Ա՛յ քեզ բան, մտածեցի ես։ Ի՞նչպէս երևամ այժմ նրան։ Դէմքս այնպիսի յուսահատութիւն էր արտայայտում, որ հայրը վախեցաւ։ Բոխերլը գիլ ծիծաղեց.

—Մի՛ ծիծաղէք, թողէք վերջացնեմ — ասաց ծերը։ Այժմ պէտք է տեղը ողորկ դարձնել։ Այն ժամանակ Հանդելը դարձեալ կգեղեցկանայ։

Եւ նա կրկին ձեռք առաւ ինձ։ Երեսս սապնեց կոշտ սապնով և մինչև այդ շաղախը կցամաքէր՝ ածելին սրրեց կաշուէ անդրավարտիկի վրայ և առաջին անգամ իր պաշտօնը կատարող դահճի պէս, ահարկու վճռականութեամբ պատրաստուեց պատժել ինձ։ Ուզում էի գոչել ամբողջ աշխարհին, որ անմեղ եմ—բայց նա արդէն սկսել էր քերել։ Մի՛ր ուքս մաքրելով տեսաւ որ բեղերս էլ անհաւասար են, պէտք եղաւ այն էլ վերցնել։ Այժմ արդէն կատարեալ աքսորականի նմանուեցի... Նոր շղթաներ կապեցին ինձ գիւղական տարրի հետ—վասն զի այսպիսի դէմքով ի՞նչպէս վերադառնամ քաղաք...

Այսօր, կիրակուայ տօնի պատճառով, առաւօտը չէին արթնացրել ինձ թրխկոցով։ Սակայն տանտէրս ինքը եկաւ մօտս։

—Այդ լաւ է, Հանդել, որ հանգստանում ես,— ասաց նա —այսօր հանգստութեան օր է։ Բայց պարտաւոր եմ ասել, որ յետոյ եկեղեցի պիտի գնաս։ Ես պատասխանատու եմ բոլոր իմայինների համար—նրանց հաւատի համար։ Աշխարհիս վրայ մենք միասին ենք ապրում, պէտք է որ երկնքումն էլ միասին լինենք։ Այսպէս չէ՞, Հանդել։

Այդ ինձ զայրացրեց, ինչ գործ ունի նա իմ դաւանանքի հետ. բայց միևնոյն ժամանակ էլ ուրախացրեց—թէպէտ և երկինքը ես ամենևին այլ կերպ եմ երևակայում, քան Ադամի և նրա ընտանիքի մէջ լինելը.—ուրախացրեց այն պատճա-

ռով, որ հայրը յիրաւի խօսում էր ամբողջ ընտանիքի կողմից, որոնց թւում և կանանցից փոքրի կողմից։

Դորա համար էլ, այսօր ես ոչ կանգնած և ոչ պառկած էի, այլ նստած էի եկեղեցու նստարանի վրայ։

Այնուհետև Ադամը հարցրեց զարմանքով— այս ի՞նչ թղթեր են։ Նա բարձիս տակ նկատեց «Կոնտինենտալ փոստի» մի քանի համարները։ Գիտե՞ս, Հանգել, դրանց վրայ անյարմար է պառկել։ Լրագիրներ հո չեն։

—Ոչ, ճշմարիտ որ չէ, խաբեցի ես և վերմակով ծածկեցի թերթերը։

Իսկ ծերունին....

Բայց լապտերս հանգաւ։

Տասներորդ կիրակի

Սիրելի ընկեր.

Անցեալ անգամ դրեցի թէ ծերունին մօտս լրագիրներ տեսաւ։

—Մի՞թէ լրագիր է այս.—ասաց նա վերմակի տակից թերթերը դուրս քաշելով։

—Ա՛յ քեզ բան։ Վաղուց արդէն քո մէջ ինչ որ նկատում եմ. այժմ հասկանալի է, որ կարդին խորհել չես կարող, քանի որ գլուխդ զանազան յիմար բաներով ես լցնում։ Ուրիշ ոչնչից չեմ կարող դանդատուել. աշխատասէր ես, կենցաղավար ես, քչով բաւականացող։ Ասենք մեզ մօտ չես էլ կարող քէֆ անել... բայց ամառը այստեղ սարերի վրայ ուրախ կլինի։

—Այո՛, այո, ես էլ ուրախ եմ, որ ամառը մօտեցել է...

Նա շարունակեց. բայց եթէ լրագիրներ կարդաս... մեղ պէտք չէ այդպիսի վարձուորը։ Ուրախ եղիր, որ պատուաւոր դասակարգումն ես ծնուել, որ ոչ մի յարաբերութիւն չունի նման բաների հետ։ Եթէ կարդալ ես ուզում, վերցրու Յիսուս Քրիստոսի կեանքի մասին գիրքը, սրբերի կենսագրութիւնը և կամ թէ աղօթգիրքը։

Այստեղ վարձուորը համեստութեամբ հարցրեց.

—Բայց ինչո՞ւ համար չէք սիրում լրագիրները։

—Մի՞թէ չգիտես, Հանդել, որ բոլոր լրագրողները հեթանոսներ են, նոյնիսկ և հրէաներ։

—Լսել եմ, հայր, լսել եմ։

—Եւ որ լրագիրը գիւղացու համար թոյն է։ Նայիր Հոյդենդորֆի Նանսինին։ Նրա միակ գործը լրագիր կարդալն է։ Ճշմարիտ է միշտ մեզանից աւելի է գիտենում. գիտէ թէ ինչ է կատարւում Պրուսիայում և գիւղացիների մէջ... բայց իր տունը կառավարել չգիտէ։ Լրագիրներում փառաբանուած զանազան իրեր է գնում թանկ գներով. առաւ մինչև անգամ սերմնացան գործիքը, կարծես թէ ծեռներ չունէր որ ցանէր... ուզում էր նոր մեքենայով ցանել, բայց հատիկները արդէն հատել էին... դորանից յետոյ առաւ... և ծեր Ադամը սկսեց ծիծաղել.

—Ի՞նչ առաւ.

—Հա, հա. շատախօսի տեղ մի դնի ինձ, Հանս, ուրիշներն էլ նոյնը կասեն։ Գնեց պարարտանիւթ։ Այն Նանսինը, որ կարող էր ուզածի չափ անասուններ ունենալ։ Բայց նա արուեստական պարարտանիւթ էր փողով առնում։

Որովհետև տեղիցս չեմ շարժւում, Ադամը կամաց կամաց մօտենում է անկողնիս։

—Մտածիր, Հանդել, մի գիւղացի, որ պարարտութիւնը փողով է առնում։

—Ինչո՞ւ չառնել.—ասացի ես — պարարտութիւնը անհրաժեշտ է գիւղացու համար։

Ծերունին այլևս չպատասխանեց։ Նախաճաշի ժամանակ պառաւը նկատում է, որ իմ և ծերունու միջև ինչոր պատահել է։

—Ճշմարիտ, Հանդել, ասում է նա, քեզ կարելի է սիրել։ Բայց հաւատ ընծայել քեզ չեմ կարող։ Ինչոր ծածկում ես մարդկանցից։ Ծածկիր որքան կամենաս, երևի ոչինչ վատ բան չի լինի հոգուդ մէջ. իսկ մինչև որ ոչ մի վատ բան չգիտենք քո մասին, կացի՛ր մեզ մօտ։ Զգիտեմ որն է աւելի անհրաժեշտ միւսին—դու մեզ, թէ մենք քեզ։

Ահա քեզ դեղչկուհի։

Արդար են արդեօք նրանք. ինչ որ լինի նրանց կարծիքները հաստատ են և այդ ուրախացնում է ինձ. պատասխանի փոխարէն ես միայն ուսերս վեր քաշեցի։ Տանտէրս պէտք է սուտ խօսէր. խոստացել էի, որ այլևս ինձ մօտ երբէք լրագիրներ չի տեսնի։ Հոյզենդորֆի ուսուցչի օգնութեամբ աւելի լաւ պէտք է դաղտնի պահել։ Ինչպէս որ լինի ծերունուն կապահովացնեմ, իսկ լրագրից զրկուելը ոյժիցս վեր է։ Աքսորանքի մէջ էլի քառասուներկու կիրակի պիտի անցնեմ։ Նախկին ընկերակիցներիս հետ դադարել եմ գրագրելուց և ամեն օր լրագիր կարդալով համոզւում եմ, որ հետզհետէ հեռանում եմ նրանցից։ Բայց պէտք է զգոյշ լինել։ Որքան մեզանից հեռու է լրագրական մամուլը, այնքան հակամէտ ենք հաւատալ նրանց։ Ասենք նա ինքն էլ չի պահանջում, որ հաւատանք իրան։ Պէտք է միայն կարդալ տողերի մէջ և այն ժամանակ կկարդաս այն, ինչ որ պէտք է։ Գիտե՞ս, բարեկամ, ես ատում եմ ձեր աշխարհը։ Բայց այդ ատելութիւնը սիրոյ յատկանիշ է. հասկանո՞ւմ ես։

Առ այժմ թողնենք այդ և դառնանք խոնարհ ծառայիդ, որը ուզում է հին լրագիրները վառարան ածել, բայց մայրը վախենում է, որ ծուխ և վատ հոտ կկանգնի...

Պաս է։ Բարեկենդանի մասին մեզ մօտ խօսք էլ չի եղել, միայն Ադամը մի խոզ մորթեց։ Ես օգնում էի նրան։ Երբ մորթած կենդանու մաղերը մաքրում էինք, Ադամը հարցրեց. «գիտե՞ս, Հանզել, խոզի պոչը ինչու է ոլորած։ Զգիտե՞ս։ Պատմիր սորան, Բոխերլ»։

Եւ Բոխերլը սկսեց պատմել. «երբ հրէաները Եգիպտոս էին, Փարաւոն կայսեր խոզապանը ուզում էր խոճկորներ գցել նրանց Նեղոս գետի վրայով և այսպիսով դաղտնի առևտուր անել։ Բայց Նեղոսը լայն է և բոլոր խոճկորները ջուրն ընկան։ Եկաւ սատանան և ասաց. «խոզարած, դու այդ չես կարող անել, խոզերի պոչը պէտք է օղակի նման կապես, որ կարելի լինի բռնել նրանից»։ Եւ վերցրեց խոճկորներից մէկն ու գցեց դէպի միւս ափը։ Բայց Մովսէսը հրէաներին ասաց, ոչ, սիրելիներս, մենք չենք ուսի սատանայի ձեռքով մեզ ձգած միսը։ Ահա թէ ինչու համար է խոզերի պոչը ոլորած և թէ ինչ պատճառով հրէաները խոզի միս չեն ուտում։

Անցեալ նամակում մատնանշութեամբ հարցնում էիր թէ որպիսի ամանեղէնի մէջ են ճաշ ուտում Ադամի տանեցիք և ուրիշ նման մանր բաներ։ Փայտէ դդալներ և անօթներ արդէն վաղուց չեն գործածւում։ Տանտէրս պահած ունի նախնի-

ներից մնացած մի քանի ոսկրէ գդալներ և պատառաքաղներ։ Այժմ ուտում են եղջիւրէ գդալներով, որոնք մեծ բերաններ են պահանջում և այնքան էլ յարմար չեն թղթակցի համար, բայց շատ զեղեցիկ են և սաղափի են նմանւում։ Վերջին ժամանակները դրանք էլ փոխարինւում են թիթեղեայ գդալներով։ Մայրը ճաշը պատրաստում է թիթեղեայ թաւաների և կաւէ ամանների մէջ։ Շատ կուզենար չուգունէ պղինձ ունենալ, բայց միջոցները չեն ներում։ Երբ ստանամ քսանևչորս հազար կրօնը, բոլոր ցանկութիւններդ իրագործուած կլինեն, մայր։ Մաքրութեան ծարաւը երբեմն ուղղակի փորձանքի է հասցնում։ Երեկոները, երբ բոլորեքեան պարկում են քնելու, պառաւը դեռ ժամեր շարունակ մաքրում և լուանում է. իսկ շաբաթ օրերը սենեակ մտնել չի լինի։ Սեղանը, արկղները, տաշտակները, թաւաները—ամենն էլ ջրով են ծածկուած, կարծես ջրհեղեղի ժամանակ լինի. միայն դանակները, գդալներն ու պատառաքաղները չեն լուանում, այլ ամեն անգամ գործածութիւնից յետոյ մաքրում են սփռոցով։ Ներքնակներն անգամ եփւում, խաշւում և թափ են տրւում հիմնաւորապէս. թէ ինչի համար է այդ, դու, միևնոյն է, չես հասկանայ, այնպէս որ աւելի լաւ է իսկի մի էլ մտածի դորա մասին։

Այստեղ օրական հարցը— Լանդտագի ընտրութիւնն է։ Մինչև անգամ Ադամս էլ չկարողացաւ ընդհանուր յուզմունքից իրան հեռու պահել։ Այսօր ժամից վերադառնալով՝ ասաց.

—Քահանան խոստովանանքից առաջ համոզում էր, որ քուէս մի որև է անիշխանականի, շրջմոլիկի կամ մի ինչ որ կարծեմ սոցիալ դեմոկրատի չտամ։ Ի՞նչ է նշանակում այս ամենը, Հանզել։

Սկսեցի բացատրել նրանց, թէ ինչ է նշանակում սոցիալ դեմոկրատ. մինչև իսկ խորհուրդ տուի սոցիալ դեմոկրատին ձայն տալ. բայց չհասկացաւ ինձ։

—Այ թէ ի՞նչ։ Կարելի է այդպէս էլ է, միայն ես չեմ ըմբռնում ասածդ. իսկ քուէն մենք դեղչուկին կտանք։

Լաւ ենք, ինչ հարկաւոր է ասել, ես էլ, քահանան էլ։ Մէկս մէկ կողմն ենք քաշում ընտրողին, միւսը միւս կողմը։ Իսկ ո՞րն է մեզանից արդարը։ Եւ դեռ այս ազատ ընտրութիւն է կոչւում։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ

(Կը շարունակուի)

ՄՈՒՐԱՅԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թարմ ուժերդ նուիրեցիր
Հայ գրական վսեմ գործին.
Դու խաւարից լոյս հանեցիր
«Ռուզանը» եւ Մարզպետունին.
Լաւ օրերդ զոհ բերեցիր
Դու կրեսոսի բարդ գործերին
Երսուն տարի ծառայեցիր
Ոսկի հորթի անկուշտ փորին.
Բայց ի՞նչ տուին քեզ երախտիք,
Թէ կրեսոսդ թէ հայրենիք.—
Մինը ձգեց քեզ ինչպէս լաթ,
Միւսը՝ ծծեց ուղեղդ առաս.
Վերջին օրերդ վշտի ծովում
Դու յուսահատ եւ չարաչար
Տանջւում էիր հոգիդ տրտում,
Վերջը մեռար անմխիթար.
Շքեղ թաղում եւ պսակներ
Մի քանի էլ փոքուն հառեր.
Թողիր որդիքդ անխնամ
Ահա հայի տուած ընծան.

Մ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Մանկական գրականութիւն

Մտքի բարգաւաճման ամենամեծ և ամենաանհրաժեշտ պայմաններից մինն է գրագիտութիւնն ու գրական դաստիարակութիւնը, որոնց զարգացումը հայոց մէջ ցոյց են տալի նոր լոյս տեսնող դասագրքերը և այն ձգտումը դէպի ընթերցանութիւնը, որ նկատելի է ներկայ հայ կեանքում։ «Լուսայի» մի աշխատակից բողոքել էր, որ հայ հասարակութիւնը շատ անտարբեր է դէպի ազգային գրականութիւնը, և հայը քիչ ընթերցող ունի։ Այժմ մենք չենք կարող նոյնը ասել. բայց և այնպէս, որքան էլ քիչ է ընթերցողների թիւը, պէտք է նկատել, որ գրագիտութիւնն ու դաստիարակութիւնը արագ կերպով նուաճում է հայերի մէջ իրեն պատկանելի տեղը։ Սրան ապացոյց պիտի լինին հայ մանկական ամսագիրները և զարգացող մանկական հայ գրականութիւնը։

Ոչ շատ առաջ «մանկական գրականութիւն» ասելով հասկացւում էին գլխաւորապէս հէքիաթներ, որոնք զուրկ չէին կրթական տենդենցիայից, բայց և այնպէս խիստ սահմանափակ—դիւցազնական աշխարհ էին տանում մանկան միտքը, հեռացնում նրան դրական աշխարհից։ Այժմ այս ամսագիրների մէջ հէքիաթներից դուրս կան և շատ գեղեցիկ պատկերներ, որոնց նիւթը մանկան առօրեայ կեանքի երևոյթներն են ներկայացնում. նոր զարգացող միտքը սկսում է գործել, կարող է ըմբռնել և դատել շրջապատող երևոյթները և այսպիսով առատ մտաւոր նիւթ ստանալով բարգաւաճել, ձեռք բերել կեանքի հմտութիւն և քննական ոգի։

Ռուսահայերի մէջ լոյս են տեսնում երկու մանկական ամսաթերթեր՝ «Հասկեր» և «Աղբիւր». երկուսն էլ ունին անցեալ, երկուսն էլ ունին իրենց նշանակութիւնը կեանքի մէջ։ Այս երկու ամսագիրներից «Հասկերը» կարելի է համարել աւելի փոքրահասակների համար, իսկ «Աղբիւրը» մեծահասակների։ Համապատասխան նիւթ մատակարարել մանուկներին, ապրել նրանց

ձեռանքով և նրանց զգացմունքով—այս պիտի լինի մանկական ամսագիր հրատարակողի նպատակը։

«Հասկերի» այս թուի № 3-ը կազմուած է ճոխ և հետաքրքիր։ Այս ամսագիրը կատարեալ բաւարարութիւն է տալի այն պահանջին, որի մասին վերը ասինք։ Կան պատմուածքներ, որոնք կարդացւում են մեծ հետաքրքրութեամբ։ Նոյնը կարելի է ասել և նոյն թուի «Աղբիւրի» № 3-ի մասին, միմիայն վերը յիշած զանազանութեամբ, այսինքն որ «Հասկերը» աշխատում է փոքրերին համապատասխան նիւթ տալ, «Աղբիւրը» անում է ընդհակառակը։

Բուն ամսագիրները մի կողմը թողնելով, որովհետև մի մի հատորի մասին մանրակրկիտ գրելու անհրաժեշտութիւն չը-կայ, մենք կդառնանք այս երկու ամսագիրների յաւելուածներին, որոնք թէ բնորոշում են ամսագիրների ուղղութիւնը և թէ ճշտում մեր վերը ասածը հասակի մասին։ «Հասկերի» այս հատորի հետ բաժանորդներին ուղարկւում է Ս. Լիսիցեանի մի գունատիպ հէքիաթ։ Այս հէքիաթը բառիս բուն նշանակութեամբ մանուկների համար է. աւելի հասակով տղայք այն հետաքրքրութեամբ չեն կարդայ այս հեքիաթը, ինչ հետաքրքրութիւն նա առաջ կբերէ փոքրահասակ մանուկների մէջ։ Սա մի պատմուածք է, ինչպէս աքլորը, ղոչն ու էշը, ձանձրանալով, թողնում են իրենց տիրոջը և փախչում ազատ ապրելու։ Գազանների ուրախութեան չափ չկայ, բայց երբ կասկած է յայտնւում, որ եկած կենդանիների հետ կայ և մարդը, դրութիւնը փոխւում է. ուղարկում են գայլին իմանալու իրերի իսկական դրութիւնը, լինում է գիշեր. գայլը վախից գնում է տուն պահուելու։ Աքլորը, ղոչն ու էշը պատահմամբ ընկնում են գայլի քարայրը. երբ գայլը տուն է գալիս և դուռը բաց անում, որ մտնի—այնտեղ եղողները հարայ-հրոց են գցում. գայլը լեղապատառ խաբար է տանում իր ընկերներին թէ «ողջ անտառը պատել են մարդիկ, մեր բոլոր տները կալել են». սարսափած գազանները տուն տեղ մոռացած ահից դէս ու դէն են փախչում։—Ահա հեքիաթի ամբողջ բովանդակութիւնը։ Ինչպէս տեսանք ամենապարզ փոքր մանուկներին մատչելի, ֆաբուլա։ Ճիշտ հակապատկերն է ներկայացնում «Աղբիւրի» թարգմանական յաւելուած Գեղափնջիկը— Մեղանչել եմ, Կլաւդիա Լուկաշևիչի.—առհասարակ պէտք է ասել որ «Աղբիւրը» ինքնուրոյնի հետ տալիս է նաև թարգմանական նիւթեր և այդ բոլորովին հասկանալի է։ Ամեն գրականութեան մէջ կայ լաւ բան, աւելի լաւ քան շատ ազգային հէքիաթներ։

Այս փոքրիկ պատկերը ռուսական կեանքից է և այն 1905

թուից յետոյ։ Ռուս-եապոնական պատերազմի ժամանակ Զ. գիւղի մի ընտանիքից պատերազմ են ուղարկուած երկու պատանի։ Սրանցից մէկի ծերունի հայրը, որ ինքը կարդալ չէր իմանում, փափագելով նոր լուրեր իմանալ կարդալ իմացողներից, խնդրում է իրեն լրագիր կարդալ։ Ծերունու մէջ փափագ կայ կարդալ սովորելու և բաւական է լինում նրան այդ միտքը տալ և նա ուրախութեամբ սկսում է իւր գոռող և խստապահանջ կնոջից ծածուկ սովորել և այդ մեծ դժուարութեամբ, բայց նորան յաջողում է։ Ոչ նախատինքը, ոչ անէծքը և ոչ մի այլ հանդամանք չէր կարողանում արգելել ծերուկին իրագործել իւր ցանկութիւնը և նա երջանիկ է, երբ քաղաքից վերադառնալով բերում է իւրայինների մասին տեղեկութիւն պարունակող մի լրագիր և ինքը կարդում բոլոր գիւղացիներին։

Այս պատմուածքը ուսուցանող տենդենցիա է պարունակում իւր մէջ և այս տենդենցիան կարող է ըմբռնել միմիայն պատանին, որը ունի այնքան զարգացում, որ կարող է զատել շրջապատող իրականութիւնը։ Այս երկու յաւելուածների բաղդատութիւնը արդարացնում է մեր վերը ընդգծած զանազանութիւնը և մենք պէտք է ցանկանք, որ այդ երկու ամսագիրների խմբագրութիւնները չանան մատնանշած զանազանութիւնը աւելի ըմբռնելի անել, զարգացնել ամեն մէկը իւր մասը, և այդպիսով թէ մանկական գրականութեան շրջաններն ամփոփել և թէ իրար չխանգարեն դաստիարակութեան գործի առաջխաղացութեան մէջ։

Մանկական գրականութեան մասին խօսելիս չի կարելի անտես անել այն հրատարակութիւնները, որոնք վերջին ժամանակները սկսել են ճոխացնել մանկական գրականութիւնը։ Գրականշուկան սկսում է հարստանալ այս տեսակի նորագոյն հրատարակութիւններով։

Մի կողմը թողնելով պատանեկան ընթերցանութեան գրքերը, պէտք է ասել, որ «Հրատ. Ընկերութեան» գործունէութեան դադարումից յետոյ մի առ ժամանակ դադարեց և մանկական գրականութեան հրատարակչական գործը։ Շուտով սկսուեց հրատարակուել «Նուէր մանուկներին» սէրիան, որը մինչև օրս էլ շարունակւում է, բայց մանկական գրուածքների գունաւոր պատկերազարդ հրատարակութիւնը վերսկսուել է միմիայն նոր. հրատարակւում են մի քանի նման սէրիաներ, որոնց թւում և «Մանկական գրադարան» խորագիրը կրող հրատարակութիւնը։ Մի գեղեցիկ ձեռնարկութիւն։ Սէրիայի № 3, որ վերջերս է լոյս տեսել

Յ. Թումանեանի «Գառնիկ ախպէր» հէքիաթն է՝ մի վարիանտ մի ժամանակ «Հրատ. Ընկերութ.» տպած հէքիաթի։ Յ. Թումանեանն այս հէքիաթը վերածել է ոտանաւոր ձևի։ Ինչ վերաբերում է գրքոյկի նկարներին, պէտք է ասել, որ դրանք շատ անբաւարար են, որոնք աւելի գունատիպ էսքիզի ձև են կրում քան պատկերի։ Կան նկարներ, ուր պակասում է մասերի համաչափութիւնը, եթէ մի կողմը թողնէք այն, որ թագաւորին խնջոյքի ժամանակ մի սպասաւոր մատուցանում է իբրև կերակուր կենդանի ֆասիան։ Բոլորովին անհամապատասխան է և չորրորդ երեսի ամբողջ նկարը. «երբ խեղճ Մանուշը վայ է տալիս, լալիս, լալիս», կսկծի նշոյլ անգամ չկայ նրա երեսին, իսկ եթէ պատկերը ներկայացնում է այն վայրկեանը, երբ «երկու որբեր, քուր ու ախպէր, գառն ու աղջիկ մոլորուած, գնում գնում են կորած», ինչ է արտայայտում քրոջ պարզած ձեռքը, երբ հոգեպէս ընկճուած մոլորուած աղջիկը ամբողջապէս պէտք է գերի դառնար իւր անսպասելի ծանր վշտի։ Իսկ նկարը, ի նկատի առնելով աղջկայ ձեռքին ունեցած խոտը, պատկերացնում է անկասկած երկրորդ վայրկեանը։

Մանկան մէջ էստէտիկայի զարգացումն ի նկատի առնելով՝ ցանկալի կլինէր, որ նման հրատարակութիւններ պատկերազարդուէին աւելի հմուտ կերպով։ Եւ այս իրագործելու հնարաւորութիւնը տրուած է միայն հրատարակիչներին և սրանք չպէտք է զլանան ամեն ջանք գործ դնել այդ թերին լրացնելու համար։

Բայց և այնպէս մենք այս հրատարակութիւնը ևս ի թիւս միւսների առաջարկում ենք ծնողներին իբրև ընթերցանութեան գիրք իրենց մանուկների համար։

Գ. Ենգիբարեան. Մատենախօսութիւն.

Վերջերս լոյս տեսած Գ. Ենգիբարեանի «Մատենախօսութիւն»-ների հատորը, պարունակում է իւր մէջ այդ բազմաշխատ հայ հեղինակի գրուած քննական յօդուածները։

Քննական ոգին կեանքի մէջ այժմ հասել է իւր գագաթնակէտին ամեն մի երևոյթ, ամեն մի գրական աշխատութիւն կրիտիկայի է ենթարկւում. կրիտիկան է որոշում արժանիքը ու յատկութիւնները, սա է ընդգծում մտքի արտադրութիւնների նշանակութիւնը կեանքի մէջ և նրանց գեղեցկութեան կամ ճշմարտութեան աստիճանը։ Ամեն մի ժողովրդի կեանքում ամեն մի ստեղծագործութեան շրջանին հետևում է և քննական կրիտիկան։

Օրինակ Շիլլերը, Գեոթէն, Բայրընը և ուրիշ Եվրոպական հանճարներ ունին մի քանի՝ տասնեակ քննադատներ։

Գրական կրիտիկան սկիզբ առել հին Յունաստանում։ Եւ այդ ժամանակից սկսած մտածողները չեն դադարում գրական կրիտիկայի և գեղարուեստի մասին հետազօտութիւններ կատարել։ Գեղեցկի գնահատութիւնը զանազան ժամանակներ և զանազան երկրներում կրել է իւր վրայ որոշ ուղղութեան դրոշմ։ Կրիտիկան Ռուսիայում սկիզբ է առել նոյնպէս վաղ։ Բելինսկու գործունէութիւնը, որ պատկանում է 40-ական թուականներին, ռուս կրիտիկայի զարգացման վերին աստիճանն է։ Ռուսահայերի մէջ կրիտիկան լայն մտքով սկսուել է նոյնպէս վաղ, իսկ գրական գործերի քննադատութիւնը սկիզբ է առնում միմիայն 80-ական թուականներին։ Ահա այդ ժամանակներին էլ պատկանում են Գ. Ենգիբարեանի առաջին քննական յօդուածները։ Բացի փոքր բացառութիւնից, որ կազմում են Ա. Զօպանեան և Մ. Բերբերեան, Գ. Ենգիբարեանը համալսարանական և կատարեալ պատրաստութիւն ունեցող միակ անձն է եղել, որ դեռ 80-ական թուականներից սկսած տուել է իւր արձագանքը ժամանակակից հայ գրական կեանքին և զետեղել պարբերական մամուլի մէջ այն յօդուածները, որ մենք այսօր գտնում ենք ամփոփած մի ստուար հատորի մէջ։ Այս հատորի մէջ առանձին ուշադրութեան արժանի են Ռաֆֆու, Սունդուկեանի, Յովհ. Յովհաննիսեանի, Յովհ. Թումանեանի, Պոշեանի յօդուածները, որոնց մասին մենք այստեղ չենք երկարացնում, հետաքրքրուողներին ուղարկում ենք գրքի դիմել, ուր ամեն ոք կարող է առանձին գրուածքների մասին գտնել ամփոփ տեղեկութիւններ։

Այս գիրքը մենք առաջարկում ենք մանաւանդ ուսանողներին, որոնց մեծ ծառայութիւն կարող է մատուցանել իբրև ձեռնարկ հայոց գրականութեան պատմութիւնն անցնելիս։ Այս հրատարակութեամբ լրանում է թէպէտ և շատ փոքր չափով այն պակասը, որ զգացուում էր հայոց գրականութեան պատմութեան մէջ։

Գրքին կից է նաև Լէսհաֆթի «դպրոցական տիպեր» գործը —անտրոպոլոգիական նկատողութիւններ. ընտանեկան կրթութիւնը և նրա նշանակութիւնը։—Ամեն մի ծնողի պարտականութիւնն է մտածել ապագայ սերնդի առողջութեան և առողջ դաստիարակութեան մասին և այս տեսակէտով Լեսհաւտի այս գեղեցիկ գործը մեծ օգուտ կարող է բերել շատ մայրերին, որոնց համար թանկ է իրենց զաւակների կրթութեան գործը։

Այս ամենի հետ չենք կարող չցանկալ, որ յարգելի կրիտիկոսը մի անգամ ևս նոր տպագրութիւնից առաջ սրբագրէ մի

քանի անհարթութիւնները, որոնք մուտ են գործել ներկայ հրատարակութեան մէջ։ Ցանկալի էր նաև այս գրքի էժանագին հրատարակութիւնը ունենալ։

Կրօնների պատմութիւնը. Երուանդ վ. Տէր-Մինասեանց.

Մեր գրականութիւնը աղքատ է ամեն տեսակ ուսումնասիրութիւններով և չի կարելի չողջունել ամեն մի նոր ձգտում հարստացնել հայրենի գրականութիւնը նորանոր ուսումնասիրութիւններով թէպէտ և ոչ ինքնուրոյն։—Երուանդ վ. Տէր Մինասեանի հրատարակած «կրօնների պատմութիւն» դասագիրքը լաւ ընթերցանութեան գիրք կարող է լինել ամեն մէկի համար, ով ուզում է ծանօթանալ հին ազգերի կուլտի ու պաշտամունքների հետ։ Այս պատմութիւնը մի հիւսուածք է յայտնի եւրոպական գիտնականների ուսումնասիրութեանց և մեր կարծիքով այս պատճառով աւելի մեծ արժէք ունի։

Այս հիւսուածքը տալիս կրօնի էվոլիւցիայի ընդհանուր պատկերը և քննելով առանձին առանձին նախնական եգիպտական, ասորա-բաբելական, իրանական, հնդկական, չինական-ճապոնական, գերմանցիների, յոյն և հռոմայեցիների և իսլամի կրօնը, հասնում է Իսրայէլի կրօնի պատմութեան, որին նուիրուած է աւելի ընդարձակ տեղ և իւր տեսութիւնը աւարտում է «կրօնի և կրօնի գիտութեան էութեան» տեսութիւնով, որ մի հայեացք է կրօնի պրոբլէմների և նրանց լուծման նորագոյն գիտութեան տեսակէտից։

Երուանդ վարդապետը նորաւարտ երիտասարդ վարդապետ է, ունի բաւականաչափ աշխատութիւններ և իբրև գործունեայ մարդ կարող է, մի քանի ուրիշների հետ, լաւագոյն օրինակ լինել Էջմիածնի բարոյապէս քայքայուած միաբանութեան համար։

ՊԱՐՈՅՐ

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ II

Իզմիրլեանը հաստատուած Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հեռագիրը ամսոյս 8-ից հաղորդում է Ս. Պետերբուրգից, որ Թագաւոր Կայսրը բարեհաճել է բարձրագոյնս հաստատել Ազգից ընտրուած Տ. Տ. Մատթէոս արքեպիսկոպոսին Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Վերջապէս Լուսաւորչի Աթոռը մի և կէս տարի թափուր մնալուց և բաղդի ձեռքին խաղալիք լինելուց յետոյ՝ ստացաւ իւր արժանաւոր գահակալը և Հայոց եկեղեցին իւր Ծայրագոյն պետը։

Ողջունելով նորընտիր Հայրապետի հաստատութիւնը, մաղթում ենք Նորին Սրբութեան բարի գալուստ և լիուլի առողջութիւն՝ ընդ երկայն աւուրս բարերջանկութեամբ հովուելու Հայաստանեայց ս. Եկեղեցին ու նորա բազմակարօտ հօտը։

ԵՒՐՈՊԱՆ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Մինչդեռ մեր լրագիրների պոռոտախօս թղթակիցները Պոլսից գրում էին, որ Թիւրքիայում հին կարգերը շարունակւում են և Հայերը ինքնավարութիւն չեն ստացել, թէպէտ քաղաքական գործերի հեռ ծանօթ ամեն մէկը պիտի լաւ իմանար, որ Թիւրքիայի յեղափոխութիւնը չէր կարող մի ակնթարթում արմատապէս փոփոխել հին կարգերը, ահա Պոլսի վերջին հեռագիրները գալիս են ապացուցանելու վերոյիշեալի ճշմարտութիւնը։

Պոլսից հեռագրում են որ Կ. Պոլսի զօրաբանակի մի մասը պաշարել է պարլամէնտը և պահանջում է Հիլմի փաշայի անկումը յանուն շարիաթի և ուղղափառ Իսլամի, բայց Պոլսի և Վենայի հեռագիրների մէջ մի քանի ակնարկներ կան, որոնք պարզում են կատարուող իրողութիւնների իսկական իմաստը։ Զարմանալի է, որ յանուն Իսլամի և շարիաթի գործող բանակը խօսում է ազատական միութեան անունից. ուրեմն ինչումն է խընդիրը, եթէ բանակը պահանջում է Ահմէդ Ռիզայի և Հիլմի փաշայի անկումը յանուն ազատական միութեան, ուրեմն ինչ գործ ունին այստեղ շարիաթը և սոֆթաները։ Հասկանալի է, որ պաշտօնական հեռագիրները ձգտում են քողարկելու կատարուող իրողութիւնների իսկական գոյնը և իմաստը։

Խնդրի իսկական էութիւնը այս է. Թիւրքիան, որպէս և միւս արևելեան թուլացած պետութիւնները վաղուց է որ խաղալիք են եւրոպական զօրեղ պետութիւնների ձեռքում. Կատարինէ մեծի օրերից սկսած Թիւրքիան կորցրեց իւր նախնական վիթխարի ոյժը և իւր գոյութիւնը մինչև այժմ պահպանում է միմիայն զանազան պետութիւնների հետ յաջող յարաբերութիւն պահպանելու շնորհիւ։ Մինչև վերջին ռուս տաճկական պատերազմը Թիւրքիան իւր գոյութիւնը պահում էր Անգլիայի զօրեղ հովանու տակ. և այս հովանաւորութեան շնորհիւ էր, որ Բերլինի դաշնադրութիւնը պահեց Թիւրքիայի գոյութիւնը և յետ կասեցրեց ռուս յաղթական զօրքը Պոլիս մտնելուց։ Այնուհետև Գերմանիան շատ շուտով կարողացաւ իրան ենթարկել Ռուսիայի քաղաքականութիւնը, ինչպէս և առաջ և ապա չեզոքացնելով Ռուսիային Թիւրքիայում, բոլորովին դուրս վանեց Անգլիայի ազդեցութիւնը այդ երկրից։

Ապացոյց սորան, որ սորանից յետոյ սուլթանը սկսեց երիտասարդ Թիւրքեր ուղարկեց Գերմանիա զինուորական կրթութիւն ստանալու, Գերմանիան ստացաւ բազմաթիւ կօնցէսիաներ, և սորա փոխարէն քրիստոնեայ Վիլհէլմի բարեհաճ թոյլտուութեամբ սուլթան Աբդիւլ Համիդը մի քանի անգամ կոտորեց Հայերին։

Անգլիան տեսնում էր այս ամենը և սպասում էր մինչև որ Ռուսիան կփոխէր իւր քաղաքական ընթացքը։

Կասկած չկայ, որ երիտասարդ Թիւրքերը Գերմանիայում չէին պատրաստել իրանց ազատական ծրագիրները, այլ Անգլիայի դաշնակից Ֆրանսիայում։ Երբ որ Ռուսաստանում սահմանադրութիւն ստեղծուեց և Անգլիան Ֆրանսիայի միջոցով կարողացաւ մի փոքր խելքի բերել Ռուսիայի քաղաքագէտներին և համաձայ-

նութեան գալ Ռուսիայի հետ արևելեան գործերի վերաբերութեամբ՝ անմիջապէս տեղի ունեցաւ երիտասարդ թիւրքերի ապըստամբութիւնը և յաղթանակը և ստեղծուեց սահմանադրութիւնը։

Սակայն սուլթանը և Վիլհէլմը իբրև հին բարեկամներ և հմուտ քաղաքագէտներ չէին կարող վերջնապէս տեղի տալ և շատ շուտով երիտասարդ թիւրքերի Ահմէդ Ռիզային իրանց կողմը քաշեցին, իսկական սահմանադրութեան կուսակից անգլիասէր Քեամիլ փաշային գլորեցին և առաջին նախարար նշանակուեց մեծ վէզիր Հիլմի փաշան, որ Անգլիայի կուսակից է։

Վերջին հեռագիրները ապացուցանում են, որ Անգլիան որոշել է թոյլ չտալ Վիլհէլմին և Աբդիւլ Համիդին երկրորդ անգամ ոչնչացնելու տաճկական սահմանադրութիւնը։

Սրանով պէտք է բացատրել, որ երիտասարդ թիւրքերի մէջ շատ շուտ երկպառակութիւն սկսուեց և ստեղծուեց ազատական կուսակցութիւն, որ այժմ պաշարել է պարլամէնտը և պահանջում է Հիլմի փաշայի անկումը։

Պէտք է կարծել, որ Կ. Պոլսում կատարուող իրողութիւնները ներքին կապ ունին Եւրոպայում կատարուող իրողութիւնների հետ և այժմ մեծ հաւանականութիւն կայ, որ Թիւրքիան կանգնած է մեծ դէպքերի նախօրեկին և եթէ Թիւրքիան չհետևի Անգլիայի խորհրդներին՝ հեշտութեամբ կարող է տեղի ունենալ այն, ինչ որ պիտի տեղի ունենար հարիւր տարի սրանից առաջ, այն է Թիւրքիայի վերջնական քայքայումը։

ՆՈՒՇԻՐՎԱՆ

ԴԱՐՁԵԼ ՃԵՄԱՐԱՆ

«Լումայի» անցեալ համարում մենք ասել էինք, թէ ճեմարանը հայկական դժբաղդ իրականութեան ամբողջացումն է։ Եւ իրօք ճեմարանի հարցը դեռ հրապարակի վրայ է։ Չեն դադարում վիճել և գրել այդ հարցի մասին։ Վերջերս մինչև անգամ մամուլի մէջ ճեմարանի գոյութեան խնդիրը հրապարակի վրայ դրուեց և գտնուեցին մարդիկ, որոնք առաջարկում էին փակել ճեմարանի մի մասը, և այս միջոցի մէջ էին գտնում ելքը։ Այս հարցը, մանաւանդ երբ արդէն հրապարակի վրայ է դրուած, արժանի է առանձին ուշադրութեան և մենք այդ հարցի վրայ մի փոքր կանգ կառնենք։

Մի ազգի քաղաքակրթութեան և զարգացման աստիճանը չափւում է այդ ազգի անդամների զարգացման ծաւալով։ Այս

պատճառով էլ ամեն մի ազգ եւրոպացի թէ ասիացի ձգտում է մեծ գիտութիւն ձեռք բերել, մեծաքանակ զարգացած անդամներ ունենալ։ Մեծ պայքար են մղում ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու, եղած դիտնական հաստատութիւններ և ամեն տեսակի դպրոցներ բարեկարգել ու ապահովել, որպէս զի այդպիսով ազգի ձեռք բերած առաջադիմութիւնը անխախտ մնայ և կամ ձեռք բերուի այդպիսին, եթէ ժամանակի ընթացքում այլ և այլ պայմաններից դրդուած կորցրել է ազգը իւր անխախտ վիճակը։

Rollin-ը ասում է. «Նայելով գիտութիւնը յարգուած է թէ ճնշուած, նրանք ստորացնում են կամ վսեմացնում պետութիւնները»։

Դեռ Տաճկական Սահմանադրութեան լուրը թերահաւատութիւն էր ներշնչում, երբ Տաճկաստանի այս և այն անկիւնից լուրեր հասան միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ բանալու մասին, որոնց համար արդէն որոշ գումարներ էին յատկացրած։ Եւրոպայում ամեն մի գիւղ իւր դպրոցն ունի (միջնակարգ թէ բարձրագոյն)։ Մեծ պետութիւններից օրինակ Անգլիան ունի 19,500-ից աւելի սկզբնական դպրոց 5½ միլիոն երեխայի համար, 400 գիմնազիա, 40 բարձրագոյն դպրոց. 80 աստուածաբանական սեմինարիա և բազմաթիւ ուրիշ մասնագիտական դպրոցներ. փոքր ազգերից վերցնենք, օրինակ, Բուլղարիան, որ ունի ընդամենը մօտ 3,300,000 բնակիչ, ուրեմն հայերի քանակից շատ աւելի պակաս, իսկ միայն բուլղարների թիւը հաւասար է 2½ միլիոնի։ Այս փոքրիկ ազգը ունի 18 զանազան տիպի գիմնազիօն և ռէալ դպրոց, 4 ուսուցչական ինստիտուտ, 2 գիւղատնտեսական դպրոց և նաև մի «բարձրագոյն դպրոց», որ ժամանակի ընթացքում վերածւում է համալսարանի։ Եւ այս դպրոցների քանակը բուլղարացիք աշխատում են շատացնել նորագոյն դպրոցներով։ Իսկ հայոց ազգը, որ ունի մօտ 4½ միլիոն անդամ, որոնցից միայն 1 միլիոնի չափ կարող է սփռուած լինել երկրագնդի զանազան անկիւններ, ուրեմն համախմբուած են 3½ միլիոնի չափ, պէտք է որ կրթական գործում բուլղարացիներից շատ յետ մնացած չլինեն. քաղաքական հանգամանքները չեն կարող արդարացուցիչ հանգամանք լինել հայերի համար, որովհետև բուլղարացիք նոյն ճնշումներն են կրել ինչ որ հայերը. 14 դարուց սկսած, երբ բուլղարացիք կորցրին իրենց ինքնուրոյնութիւնը, Բուլղարիան մինչև XVIII դարու վերջը մնաց տաճիկների հպատակ և կառավարւում էր Բէգլէր բէյով (գեներալ-գուբերնատոր)։ Այս երկար դարերի ընթացքում թուրքերի քաղաքականութիւնը օտար ազգերի վերաբերմամբ

անկասկած նոյնն էր, և բուլղարացիք նոյն ճնշումներն էին կրում ինչ և հայերը, այն զանազանութեամբ միայն, որ բուլղար եկեղեցին սկսեց կառավարուել Կ. Պոլսի պատրիարքութեամբ, իսկ հայերը պահպանեցին էջմիածինը, որ մի ուժեղ զէնք էր հայոց ազգը կործանելու ամեն մի ձգտումի դէմ։ Յայտնի է Բուլղարիայի 1876 թուի սոսկալի հրկիզումներն ու կոտորածը, որ կատարեցին թուրքերը և որ հայկական կոտորածից ոչնչով պակաս չէր։

Մինչդեռ Բուլղարիան իւր վիճակում կարողացել է ամբողջ եռանդն ու կեանքը ազգային բարգաւաճման ծառայեցնել, հայերը իրենց ամբողջ եռանդը ու կեանքը տուել են ոչոքին օգուտ չտուող անձնական հաշիւներին, փոխադարձ հալածանքի, անասելի փառասիրութեան և այլն։ Ճիշտ է, եղել են երկաթի կամքի տէր մարդիկ, որոնք ամեն ճիգ գործ են դրել բարելաւելու հայկական կեանքը, նպաստել հայոց քաղաքակրթութեան զարգացման, որը արտայայտուել է գլխաւորապէս դպրոցներ բանալում, բայց այդ անձերի մահից յետ հայ գործիչները գիտակցաբար թէ անգիտակցութեամբ քանդել են այն ամենը, ինչ որ նախորդներին յաջողել է ձեռք բերել մեծ դժուարութիւններով։

Ամբողջ հայկական իրականութիւնը ներկայացնում է մի ընդհանուր տեսարան լի նման արարքներով։ Հայկական հաստատութիւններից էջմիածնի ճեմարանը։ ինչպէս ասինք, այդ կեանքի միաւորումն է և դառել է այժմ մամուլի առարկայ և ամբողջ հայոց կեանքի առհասարակ և դպրոցականի մասնաւորապէս վերանորոգումը այժմ աւելի քան դառել է ժամանակի անհրաժեշտ պահանջը։

1874 թուին Գէորգ IV կաթողիկոսը ըմբռնելով ժամանակի պահանջը և գիտակցելով ազգի բարգաւաճման նպաստող միջոցները, էջմիածնում բացեց մի ճեմարան, որ պէտք է ծառայէր հայոց ազգին իբրև բարձրագոյն դպրոց։ Յայտնի է, որ դեռ 1840-ական թուականներից Մակար եպիսկոպոսը եղել է էջմիածնի ճեմարանի տեսուչ և հայկաբանութեան ուսուցիչ, իսկ հնում Վաղարշապատ մայրաքաղաքում գրեթէ միշտ գոյութիւն է ունեցել «Մայր դպրոցը», որի անկասկած շարունակութիւն են կազմում թէ յիշուած 1840-ական թուերի ճեմարանը և թէ Գէորգ IV կաթողիկոսի բաց արած «Գէորգեան» ճեմարանը։

Ուրեմն ճեմարան կամ այլ խօսքերով բարձրագոյն դպրոց ժամանակի հասկացողութեան համեմատ գոյութիւն է ունեցել հարիւրաւոր տարիներ էջմիածնում և ժամանակ առ ժամանակ

հանգամանքների բերմամբ դադարեցնելով իւր գոյութիւնը միշտ վերսկսել է և շարունակել իւր գործունէութիւնը։

Եւ այժմ XX դարում, երբ ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդը դիմում է դէպի կրթութիւն, ռուսահայերիս մի հատիկ բարձրագոյն դպրոցի շուրջը մի մթնոլորտ են ստեղծում, որը առաջ կբերէ դպրոցի փակում, իսկ գտնուեց նաև մի թերթ, որ առաջարկեց փակել մի կրթական հաստատութիւն և այն էլ այս ամայութեան ժամանակ, երբ հարիւրաւոր տղաներ մնում են դպրոցի պատերից դուրս և զուր օգնութիւն հայցում։

Իսկ այնտեղ՝ սուրբ Էջմիածնում բուն է դրել կեղտոտ ինտրիգը և մարդիկ մոռացած խիղճն ու ինքնասիրութիւնը՝ փորում են կաղնու բունը, անկարող վեր նայել ու ըմբռնել իրենց գոյութեան իմաստը։

Դատապարտում ենք և մի խումբ գիտնական և նոյն ճեմարանի սան վարդապետներին, որոնք սառնարիւնութեամբ տանում են այն ամենը, ինչ որ կատարւում է նրանց աչքի առաջ և դադարում են բարձրացնել իրենց ուժեղ ձայնը կատարուող բարբարոսութեան ու տգիտութեան դէմ։

Կարծում ենք ժամանակ է։

Ժամանակ է հասկացնել, որ ճեմարանը մի կեդրոն է, որը նուիրական պիտի լինի ամեն մի հայ մարդու համար և ուր պիտի կենդրոնանայ հայկական ամբողջ գիտութիւնը, հայկական գրականութիւնը։ Դա պիտի վերածուի հայկական համալսարանի իւր նախակրթական բաժնով, որը և լուսաւորութեան կեդրոն պէտք է լինի ամբողջ հայութեան համար։ «Տգիտութիւնը լուսաւորութեան ամենամեծ թշնամին է» և Էջմիածնի գիտուն մարդկանց պարտաւորութիւնն է մաքրել ճեմարանը տգիտութեան ոտնձգութիւններից և այդ հաստատութիւնը դնել հարկաւոր և անհրաժեշտ բարձրութեան վրայ։

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի վերջին խռովութիւններն անդրադարձան գաւառները և ինչպէս քանիցս գուշակել էինք մենք, անդրանիկ զոհը դարձեալ անպաշտպան հայերն եղան։ Վերջին հեռագիրները դուժում են, որ Ադանայում, Մարաշում և շրջակայքում մոլեռանդ ամբոխն սկսել է հայերին ջարդել, որոնցից առ այժմ յայտնի է, սպանուած են 400 հոգի, թէպէտ մի այլ հեռագիր այդ թիւն հասցնում է 5000 հոգու։ Հայկական ջարդ է եղել նաև Բաղէշի Խանկաձոտ գիւղում, ուր սպանուած են 14 հոգի։ Տաճկաստանի զանազան անկիւններից անհանգստացնող լուրեր են տեղում լրագիրներին նաև Բաբերդի, Մշի և միւս տեղերի հայերի դրութեան վերաբերմամբ, երկիւղ են կրում նորանոր ջարդերի։ Իսկ Կ. Պոլսի ճրճռան սահմանադրութեան երջանիկ անդամները հրճւում են իրանց գործունէութեամբ։ Իսկ Կ. Պոլսի հայ լրագիրները քիչ է մնում միմեանց դատարան քարշ տան։

Տաճկաստանի վերջին խռովութիւնների պատճառով, ինչպէս հեռագիրները հաղորդում են, սուլթանը մտադիր է հրաժարուել իւր գահից։

Ղուկասեան մրցանակաբաշխութիւնը յետաձգուած է 2 ամսով, ներկայացուած աշխատութեանց քննադատութիւնների ուշանալու պատճառով։

Русское знамя լրագիրը յայտարարելով, որ հայերն ուզում են անջատուել Ռուսիայից և ի դէմս Կորիւն վարդապետի վերագրելով այն հայ վարդապետներին, առաջարկում է՝ հայ մութ ոյժի դէմ դնել մի ուրիշ մութ ոյժ—թուրքերին։ Հետաքրքրական է՝ մտածում են արդեօք հայերը պատասխանել այդ միջնադարեան լրագրին թէ ոչ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Երևան. Մ. Ենգ.—Ձեր նամակը ուշ ստացանք. կտպուի հետևեալ համարում։

Սմրղանդ. Mars-ին.—Ձեր նամակին կպատասխանենք։

Կ. Պոլիս. Մ. Ա. Օ.—Խնդրում ենք ուղարկել շարունակութիւնը։

Վենետիկ. «Բազմավէպի» խմբ.— Ստացանք «Մուրացանի» յօդուածը։ Ձեզ առանձին նամակ գրեցինք։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ԼՈՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՋՈՒՈՑ

Արքեպիսկոպոս Սարգիս Հասան Ջալալեանցի դրամագլխի հաշիւը 1908 թ.

	% թղթ. բուբ.	Առձեռն դրամ
ՄՈՒՏՔ		
Մնում էր ց 1 յունուարի 1908 թ.	108872.22	1174 ր. 27 կ.
1908 թուի ընթացքում մտել է . .	2374.77	4278 ր. 52 ».
ԾԱԽՔ		
Երկու զնուած % արժէթղթերին Վճարուած է 2177 ր. 37 կ. և դրամագլխի 1907 թ. հաշիւը տպագրելուն 31 ր. 50 կ. ընդ.		2208 ր. 87 կ.
Ց 1-ն յունուարի 1909 թ. առձեռն պատրաստ կայ	111246.99	3243 ր. 92 կ.

Ծանօթութիւն. Դրամագլուխը գտնուում է Մոսկուայի նահանգական գանձարանում և պէտք է շահեցնուի՝ 1883 թուից սկսած՝ 125 տարուան ընթացքում մինչև 12 միլիոն բուբլու հասնելը, այնուհետև պիտի յատկացնուի զոհաբերողի անունով ուսումնարանների և թօշակների։

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵՆԱՅԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունինալու ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափուում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին 3 ռ.		մանկավարժ. բաժ. 4 ռ.	
Կէս տարուանը	1 ռ. 80 կ.		2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը	— 30 կ.		— 35 կ.
Պարսկաստանում	3 ռ. 50 կ.		4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.		15 ռ.

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25
(Тифлисъ, Редакція журнала «Аскеръ» Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լումաեն լոյս կտեսնի իւր նախկին դիրքով ամէն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 48—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւելի քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։
3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ է

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ ճոխացրած տպագրութիւն

Продолжается подписка до конца 1909 года

На газету

„Тифлисскій Листокъ

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ 1-го февраля до конца года.

Съ доставкой въ Тифлисѣ . . . . . 4 р. 75 к.
Съ пересылкой для иногородныхъ . . . . . 6 р. 50 к.

Подписка принимается: на любой срокъ но только съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ. № 15.